18223

Գ. ԼԱՆԴԱՈՒ

ԳԱՂՏՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԻ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ

(1914—1918)

327
Լ-18

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939

327
Լ-18

27 SEP 2006
15 JAN 2010

Գ. ԼԱՆԴԱՈՒ

ԳԱՂՏՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԻ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ
(1914—1918)

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1939

30 APR 2013
Գ. ԼԱՆԴԱՈՒ

18223

«Գաղտնի ծառայությունը գերմանացիների թիկունքում
(1914—1918 թ.թ.)»

Այս գրքում բավական մանրամասնորեն բացատրված են իմպերիալիստական պատերազմի ժամանակ գերմանացիների թիկունքում անգլիական հետախուզության կատարած աշխատանքի մեթոդները և ցույց են տրված զորքերի յերկաթուղային տեղափոխություններին հետևելու յեղանակները: Բացի դրանից, գրքում համառոտակի լուսաբանված է նաև գործակալական հետախուզության աշխատանքը խաղաղ ժամանակվա պայմաններում:

Գիրքը նկատի յե առնված ԲԳԿԲ-ի բոլոր տեսակի զորամասերի հրամանատարների համար և միաժամանակ կարող է հանձնարարվել քաղաքացիական ընթերցողներին:

3998
39

Г. ЛАНДАУ

Секретная служба в тылу немцев

(1914—1918г.г.)

Гиз Арм. ССР Ереван, 1939 г.

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Հետպատերազմյան ժամանակ բուրժուական յերկրներում գործակալական հետախուզության հարցերի շուրջը լույս տեսած մեծաքանակ գրքերի մեջ Լանդաուի գիրքը մեկն է այն սակավաթիվ գրքերից, որտեղ մանրամասնորեն պարզաբանվում է գործակալական ցանց կազմակերպելու և շահագործելու փորձը՝ ռազմաճակատի և բանակի թիկունքում յերկաթուղային փոխադրություններին հետևելու համար: Լանդաուն պնդում է, թե միայն անգլիական գործակալական ծառայությունն է կարողացել «դիտող պոստեր» ստեղծել Բելգիայի այն հանդուցային յերկաթուղակայարաններում, որոնք գրավված եյին գերմանացիների կողմից, և որ այդ «դիտող պոստերի» կողքից աննկատելի կերպով չի անցել գերմանական զորքերով, ռազմամթերքով և այլնով բեռնավորված և վոչ մի գնացք:

«Դիտող պոստերի» գեկուցագրերը լրացվում եյին գերմանական զորքերի հանդստի գոտիներում աշխատող մարշրուտային գործակալների («ֆլանյորների») գեկուցագրերով:

Անգլիական Գլխավոր գրաքարանի հետախուզական ամփոփագրերից բերած քաղվածքներով Լանդաուն ապացուցում է, որ նրա «դիտող պոստերի» և «ֆլանյորների» տեղեկությունները ժամանակին եյին հասնում անգլիական հրամանատարությանը: Անգլիական գործակալության աշխատանքի պարզորոշությունը հաստատվում է նաև այն փաստով, որ 1915 թվականի ապրիլին, յերբ գերմանացիները հարձակման եյին պատրաստվում Կարպատներում, Պրագայի վրայով անցած գերմանական յերկու դիվիզիաների տեղափոխության վերաբերյալ տեղեկությունները ռուսների հյուսիս-արևմտյան ճակատի շտաբն ստացել եր չորրորդ որը, թեպետ և այդ տեղեկությունները վոլորապտույտ ճանապարհով եյին հաղորդվում:

Հայտնի է, որ ռուսական հետախուզական ծառայությունը պա-

տերազմի սկզբում «գիտող պոստեր» ստեղծեց Ավստրո-Հունգարիայի մի քանի հանդուցային յերկաթուղակայարաններում: Սակայն չի յեղել մի դեպք, վոր այդ «գիտող պոստերը» ռուսական հրամանատարությանը ժամանակին նախազգուշացնելիս ավստրիական զորքերի կենտրոնացման մասին: Այդ «պոստերի» զեկուցագրերը, վորոնք հիմնականում ճիշտ եյին, վորպես կանոն, ռուսական հրամանատարության ձեռքն եյին ընկնում միայն ավստրիական այս կամ այն ռազմական գործողությունն սկսվելուց հետո: Ցեվ միայն 1917 թվականին հաստատվեց, վոր ռուսական բոլոր «գիտող պոստերը» ավստրիական հակահետախուզությանն եյին ծառայում և գիտավորյալ կերպով ձգձղում եյին ավստրիական յերկաթուղային փոխադրությունների վերաբերյալ տեղեկությունները:

Լանդաուն պնդում է, թե իր գործակալական ցանցը բաղկացած եր զանազան կատեգորիաների մի քանի հարյուր գործակալից՝ խմբերի պետերից, հսկիչներից, «ֆլանյորներից», տեղափոխողներից, ուղեցույցներից, կապի սուրհանդակներից, «փոստարկղներ» պահողներից և այլն:

Գործակալների մեջ կային քահանաներ, ինժեներներ, յերկաթուղային ծառայողներ, պրոֆեսորներ, ուսուցիչներ, բանկիրներ, մաքսանենդներ, գյուղացիներ և այլն: Կար նույնիսկ բելգիական մի «սոցիալիստ» սենատոր, կային կանայք, յերեխաներ և ծերունիներ:

Այդ մարդիկ անգլիական լրտեսության մեջ եյին ներգրավվում գլխավորապես նրանց հայրենասիրական զգացումների հետ խաղալու միջոցով, բայց յերբեմն եվ դաշնակիցներին չողնողների հետ պատերազմից հետո հաշիվ տեսնելու սպառնալիքներով, ինչպես նաև հետախուզության մեջ աշխատելու համար փողով, չքանչաններով առատորեն պարգևատրելու խոստումներով:

Լանդաուի գրքում շոշափվում են գործակալական աշխատանքի զանազան կողմերը. ռեգիոնային ցանցի կազմակերպական կառուցվածքը, հավաքագրությունը, կապի կազմակերպումը, կառավարման մեթոդները, փող մատակարարելու յեղանակները և այլն: Միաժամանակ պետք է նշել, վոր այս բոլոր հարցերը լուսաբանվում են վոչ թե տեսականորեն, այլ գործնականորեն, այսինքն՝ հեղինակը պատմել է, թե ինչպե՛ս և ի՛նչ է արել ինքը:

Պարզ է, վոր Լանդաուն բոլորովին բացսիրտ և անկեղծ չէ: Սակայն նա եվ չի կարողացել զսպել իրեն և ցույց չտալ, թե ի՛նչ եր արվում չեղոք յերկրում (Հոլլանդիայում) գտնվող անգլիական դիվանագիտական հիմնարկների և առևտրական ձեռնարկությունների կուլիսների հետևում:

Այս գրքի համար գրած իր առաջաբանում Լանդաուն ասում է. «Ցես չեմ վորձել այս գրքում թաղցնել դիվանագիտական ներկայացուցիչների և պետական ծառայության մեջ գտնվող անձնավորությունների անունները, ինչպես նաև մի շարք այն գործակալների անունները, վորոնք աշխատել են չեզոք յերկրներում: Ինչ վերաբերում է այն գործակալներին, վորոնք աշխատել են հակառակորդի գրաված տերիտորիայում, ապա յես հիշատակել եմ միայն նրանց, ովքեր գերմանացիներին հայտնի յեն դարձել ձերբակալությունների շնորհիվ. մնացած անունները կամ փոխել եմ կամ ամենևին չեմ հիշատակել: Այդ բանն արված է նախկին գործակալներին թաղցնելու նպատակով:

Ցես բոլորից լավ կարող եմ դատել, թե վո՛ր ինֆորմացիան կարող է նրանց վարկաբեկել: Կարճ ասած՝ այս գրքում չի հիշատակվում մի այնպիսի բան, վոր կարող եր վնաս պատճառել վորևե մեկին»:

Լանդաուն չեր կարող նաև չպատմել, թեև շատ քաղաքավարի կերպով և ավելի շատ ակնարկներով, այն փոխադարձ զզվոցի մասին, վոր տեղի յեր ունենում հենց Անգլիայի և նրա դաշնակիցների կենտրոնական և տեղական հետախուզական որգանների միջև:

Լանդաուն յերկար և մանրամասն պատմում է այն մասին, թե պատերազմից հետո նա ուժ ամիս ինչպես է զբաղվել Բելգիայի անգլիական գործակալությունը վերացնելու գործով: Նա պատմում է անգլիական լրտեսների միտինգների և չքեղ հավաքույթների մասին, վորոնք կազմակերպվելիս են յեղել հրապարակներում խուռն բազմության ներկայությամբ:

Հարց է առաջ գալիս՝ ինչի՞ համար է այս բոլորը: Նրա համար, վորպեսզի ստեղծվի Ինտելիջենս Սերվիսի հեղինակություն, վորպեսզի ցույց տրվի բոլորին, թե վորքան ազնիվ է անգլիական հետախուզական ծառայությունը: Այդ արդեն ապագայի համար հող պատրաստել է նշանակում:

Լանդաուի գիրքն, անկասկած, հետաքրքրություն է ներկայացնում ԲԳԿԲ-ի հրամանատարների համար, քանի վոր ահագին նյութ է տալիս՝ անգլիական հետախուզական ծառայության կազմակերպմանը, տակտիկային և տեխնիկային ծանոթանալու համար:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԻԶԲԸ

Քեմբրիջում սովորելու ժամանակ արձակուրդները յես անց եյի կացնում ճանապարհորդություններ կատարելով Գերմանիայում, Հոլլանդիայում, Բելգիայում և Ֆրանսիայում, վորոնց լեզուներով յես ազատ խոսում եյի: Յես շոգենավով, յերբեմն էլ հեծանիվով կամ վոտքով կտրել եմ հարյուրավոր մղոններ—անցել եմ Բրյուսելից մինչև Գենտ ձգվող ուղին, բարձրացել եմ Արդենների բլուրները, վոտքով անցել եմ Շվարցվալդը և Հարցը, ուսումնասիրել եմ Հռենոսյան մարզը Հայդելբերգից մինչև Դյուսսելդորֆ:

Ինձ ամենից ավելի հետաքրքրում եր ժողովուրդը — նրա սովորությունները, կյանքը, կենսական փիլիսոփայությունը: Իմ ճաշակով յես պատկանում եյի բոհեմին. յերբեմն այցելում եյի չքավորների թաղամասերի տները, սրճարանները և զվարճալիքների վայրերը, իսկ յերբեմն էլ, մեծ քաղաքներում, որինակ, Բեռլինում, շռայլություն եյի թույլ տալիս ինձ՝ ոգտվելու միջազգային մեծ հյուրանոցներով:

Յերկիր տեսնելու, նրա լեզուն և նրա բնակիչների բարքերն ուսումնասիրելու, տուրիստների համար կառուցված ֆասադից այն կողմը դիտելու և, վերջապես, նրա տեղագրությունն ուսումնասիրելու լավագույն միջոցը վոտքով կամ հեծանիվով ճանապարհորդելն է: Ծախսված եներգիան առատորեն հատուցվում է հարուստ փորձով և դիտելիքներով: Յեթե ինձ այլևս չվիճակվի լինել Հոլլանդիայում, ապա համենայն դեպս կհիշեմ, վոր Ռոտերդամից Հաագայի և Հառլեմի վրայով դեպի Ամստերդամ

տանող ճանապարհը հարթ է, իսկ Արնխեմի շուրջը՝ բլրաշատ։

Չորս տարի ապրելով մերթ այստեղ, մերթ այնտեղ, ուսումնասիրելով յերկրները և ծանոթանալով բնակչության կենցաղին՝ յես սովորեցի «զդալ» Յեվրոպան։

1913 թ. հունիսին յես ավարտեցի Քեմբրիջը, վորից հետո յերկու տարի պետք է սովորեցի վորևէ լեռնային ինստիտուտում, վորպեսզի իմ վորակավորումը բարձրացնեմ։

1914 թվականի ամառը յես անց եմի կացնում Ֆլինտշայրի կապարի հանքավայրում, վորտեղ իմացա, վոր Անգլիան պատերազմի մեջ է մտել և անմիջապես վորոշեցի մեկնել Լոնդոն։ Այստեղ յես հանդիպեցի նորզելանդացի Մաուզելիին, վորն իր ժամանակին ավարտել եր Քեմբրիջի համալսարանը։ Նա մտադիր եր ծառայության մտնել ավստրալիական կամավորական զինվորական հիվանդանոցում։ Միասին մեկնելու նրա հրավերը յես ընդունեցի։

Նրա ասելով, զինվորական հիվանդանոցը ճանապարհ պիտի ընկներ մի քանի որից հետո։ Այստեղ, համենայն դեպս, ուղիղ ճանապարհ եր բացվում դեպի Ֆրանսիա։ Քեմբրիջի ընկերոջս՝ Եդինբուրգի հայտնի պատրոդ սեր Եդվարդ Շեֆերի վորդու հետ միասին հենց նույն որը յերեկոյան մենք արդեն ծառայության մտանք ավստրալիական կամավորական հիվանդանոցը, վորն ուղևորվում եր դեպի Ֆրանսիա։

Պատերազմը յերկարաձգվում եր։ Լորդ Քիչենները կամավորներ եր հավաքում յեռամյա պատերազմի հաշվով։ Թիկունքի զինվորական հիվանդանոցում աշխատելն ինձ չեր գոհացնում. յես ուզում եմի, ինչ գնով էլ լինի, ռազմաճակատ մեկնել։

1914 թ. դեկտեմբերին հայտարարվեց, վոր յես նշանակվում եմ թագավորական դաշտային հրետանու յենթապորուչիկ և գործուղվում եմ Եյշոտում կազմված 23-րդ դիվիզիայի 102-րդ բրիգադը։

Չորս ամսվա նախապատրաստությունից հետո, 1915 թ. ապրիլին, բրիգադը հրաման ստացավ մեկնել Բուլոն նավահանգիստը։ Մենք ուղևորվեցինք դեպի Սենտ Ոմերի դոտին։ Այնուհետև մեզ փոխադրեցին Արմանտյեր սեկտորի ռազմաճակատը։

1916 թվականի մարտի սկզբներին զորքերի կենտրոնացում սկսվեց՝ Սոմմայի վրա հարձակվելու համար։

Եյշոտից մեկնելուց առաջ յես ստացել եյի պորուչիկի աստիճան, այժմ յես կապիտան դարձա։ Իմ մարտկոցի հրամանատար մայոր Գոտտոն հիվանդների ցուցակն ընկավ, իսկ հետո տարիքի պատճառով պաշտոնաթող յեղավ. նրա տեղակալ կապիտան Ուելլը վիրավորվեց Լավանտիի մոտ, և այժմ մարտկոցին յես եյի հրամանատարություն անում։

Վերջապես հասավ իմ արձակուրդի ժամանակը, վորից հետո ինձ այլևս չվիճակվեց ռազմաճակատ վերադառնալ։

ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ

Արձակուրդին յես մեր աղյուսանոցի նամակը հանձնելու համար գնացի նրա քրոջ մոտ։ Դա մի հիանալի կրթված աղջիկ եր, վոր աշխատում եր գրաքննության բաժնում։ Մենք միասին յերկար ժամեր անցկացրինք։ Յես շատ հաճախ նրան պատմում եյի իմ մասին և, գլխավորապես, իմ ճանապարհորդությունների մասին։

— Վորքա՞ն ցավալի յե, վոր չեք կարող աշխատել մեզ մոտ,—բացականչեց նա։—Դուք հենց այնպիսի մարդ եք, վորպիսին հարկավոր է իմ պետին։ Մենք վոչ մի կերպ չենք կարողանում գտնել մի սպա, վորը գիտենա Ֆրանսերեն, գերմաներեն և հոլլանդերեն լեզուները և լավ ծանոթ լինի այդ յերկրներին։ Գլխավոր դժվարությունը հոլլանդերենն է,— ավելացրեց նա։— Զարմանալի յե, թե վորքան քիչ թվով անգլիացիներ են իմանում այդ լեզուն։ Այդ բանը բնորոշ է մեզ համար, վորովհետև մենք միշտ սպասում ենք, վոր ոտարերկրացին կխոսի մեր լեզվով։

***

Անսպասելի կերպով յես հրաման ստացա անմիջապես ներկայանալ զինվորական մինիստրության։ Յես այնտեղ չսպասեցի այն հույսով, որ միանգամից կիմանամ, թե որո՞նք են լինելու իմ պարտականությունները։ Դրա փոխարեն ինձ վիճակվեց իրար հետևից տալ յերեք քննություն. բանից դուրս յեկավ, որ ինձ կանչել են լեզուներ իմանալս ստուգելու համար։ Գրավոր և բանավոր քննությունները դժվարություն չեյին՞ ներկայացնում։ Յես նույնիսկ վորոշ առավելություններ ունեյի հոլանդական լեզուն քննողի նկատմամբ, վորովհետև այդ իմ մայրենի լեզուն եր։

Հաջորդ որն ինձ հրամայեցին ներկայանալ գնդապետ Բրաունինգին, որն ապրում եր Ուայտհոլլ Կոուրտում։ Նա ինձ հաղորդեց, որ յես փոխադրված եմ հետախուզական կորպուս և, քանի որ կցված եմ գաղտնի ծառայության, նա անմիջապես ինձ կներկայացնի պետին։ Նավախուց հիշեցնող մի սենյակում յես ներկայացա շատ սիրալիր մի մարդու, որի հետ իսկույն լավ և պարզ զրուցեցինք։ Դա պետն եր, ռազմա-ծովային նավատորմի կապիտանը։ Կ-ն մոտ վաթսուն տարեկան, սպիտակ մազերով մի մարդ եր՝ ծովայինի տարազով, ցածրահասակ, շարժումները վորոշ չափով բռնազբոսիկ եյին, որը, ինչպես յես հետո իմացա, բացատրվում եր նրանով, որ նրա վոտքն արհեստական եր։

Մի քանի նախնական դիտողություններից հետո նա գործի անցավ։

— Յես գիտեմ ձեր ամբողջ անցյալը։ Դուք հենց այն մարդն եք, որ մեզ հարկավոր է։ Դուք պետք է մեկնեք Ռոտտերդամ՝ Տ-ի մոտ։ Այսոր յերեկոյան ուղևորվեցեք դեպի Գարվիչ և Խուուկ։ Բելգիայում և հյուսիս-արևելյան Ֆրանսիայում գնացքներին հետևող մեր անձնակազմն ամբողջովին տապալվել է։ Ձեզ հանձնարարվում է վերակազմակերպել այն։ Մենք ձեզ տալիս ենք գործողությունների լիակատար ազատություն։

Տ-ին ոգտագործեցեք վորպես «քողարկում», կապ պահեցեք ինձ հետ նրա միջոցով։ Պատշաճ սահմաններում նա ձեզ դրամ կմատակարարի ձեր ծառայության կազմակերպման համար։ Տ-ի մոտ դուք կհանդիպեք մարդկանց, վորոնք աշխատում են գաղտնի ծառայության ուրիշ ճյուղերում. կարող եք ոգտվել նրանց գործակցությունից։

Ձեզ հանձնվում է ռազմական բաժինը. նրա հաջողության կամ անհաջողության պատասխանատվությունը ձեզ վրա յե դրվում։ Հաղորդում գտնվող մեր ռազմակցորդից՝ գնդապետ Ոպպենհայմից տեղեկացեք, թե մեզ ի՞նչ տեսակի ինֆորմացիա յե հարկավոր։ Հենց ինքն էլ ձեզ տեղեկատու տվյալներ և անհրաժեշտ ուրիշ տեղեկություններ կտա գերմանական բանակի կազմակերպման վերաբերյալ։ Տ-ի միջոցով ժամանակ առ ժամանակ մենք ձեզ առաջադրանք-հարցաթերթիկներ կուղարկենք։

Ռազմական այն շտապ տեղեկությունները, որ դուք ստանալու յեք գերմանացիների մասին, գնդապետ Ոպպենհայմի կողմից հեռագրով անմիջապես հայտնվելու յեն դլխավոր զորականին։ Ավելի պակաս կարևոր տեղեկություններ պարունակող բոլոր դրավոր զեկույցները հանձնեցեք Տ.-ին. նա այդ դրավոր զեկույցները դիվանագիտական փոստով մեզ կուղարկի։ Այն բոլորի մասին, ինչ վոր ձեզ անհրաժեշտ կլինի, հարցրեք Տ.-ից։ Ահա նրա հասցեն,—ասաց նա, հանձնելով ինձ մի նեղ և փոքրիկ շերտ թուղթ։— Հաջորդ սենյակում կոմանդոր Սայքսը ձեզ կհանձնի տոմս և ծախսելու փող և կհայտնի, թե յե՞րբ և մեկնելու ձեր գնացքը,— ավելացրեց նա, ձեռքը մեկնելով ինձ և բարի ճանապարհ մաղթելով։

Տրամադրությանս տակ ունեյի ընդամենը մի քանի ժամ՝ քաղաքացիական հագուստ ձեռք բերելու համար։

Ռոտտերդամ հասնելով՝ յես գնացի Տ.-ի մոտ նրա դրասենյակը, որը դրավում եր Բոսմպլեյսում գտնվող մի ինչ-որ մեծ տան ամբողջ առաջին հարկը։ Մուտքը հսկող մարդը զեկուցեց իմ մասին, և մի քանի րոպեյից հետո ինձ տարան Տ.-ի մոտ։

Դա վոչ-բարձրահասակ, լայնաթիկունք, վորոշ չափով չքեղ հագնված մի մարդ եր: Ամբողջ առավոտն անցկացրի լսելով նրա ինֆորմացիան դրության մասին: Նա խիստ մտահոգված եր: Նրա ամբողջ կազմակերպությունը, վոր ընդգրկում եր Բելգիան և հյուսիս-արևելյան Ֆրանսիան և բաղկացած եր գնացքներին հետևող քառասունից ավելի պոստերից, տապալվել եր, և նրա համարյա բոլոր գործակալները ձերբակալված եյին:

Մասստրիխտում գտնվող նրա գործակալ Ֆրանկինյուլը փորձել եր նոր կազմակերպություն ստեղծել, բայց նրա ձեռնարկությունը միանգամայն անհաջողության եր մատնվել, և մինչև այժմ դեռ վոչ մի տեղեկություն չեր ստացվել:

Թվում եր, թե Տ-ն կասկածում եր, թե արդյոք ինձ կհաջողվի՞ վորևե բան անել, բայց խոստացավ ամեն տեսակի ոգնություն ցույց տալ, վորովհետև նրան հաղորդել եյին, վոր յես Հոլլանդիայում ռազմական բաժնի պետ եմ նշանակված: Նա իմ տրամադրության տակ դրեց մի սենյակ և ծանոթացրեց այն մարդկանց հետ, վորոնց հետ յես պիտի աշխատեմ. դրանք եյին՝ ծովային բաժնի պետ Պաուերը, հակահետախուզության պետ՝ դե Մեերը, Հաագայի ռուսական գլխավոր հյուպատոսի վորդի Պետերսենը և, վերջապես, գանձապահ ու հաշվապահ Մեյլկենոը: Այնուհետև Տ.-ն ինձ տեղեկացրեց, վոր իրեն հրամայված է տալ ինձ դրամական անհրաժեշտ գումարներ, վորոնց համար յես պետք է հաշիվ ներկայացնեմ իրեն, ըստ վորում ավելացրեց, վոր ամբողջ գործը արդյունքներն են. պատշաճ ինֆորմացիայի համար բավականաչափ փող միշտ կգտնվի:

Տ.-ի դիտողություններից և Կ.-ի (պետ Անգլիայում) խոսքերից յես հասկանում եյի, վոր Հոլլանդիայում մնալը ամբողջովին իմ ակտիվությունից է կախված: Լեզուներ, գլխավորապես հոլլանդերեն և ֆլամանդերեն իմանալու տեսակետից յես ունեյի պատկառելի վորակավորում, հիմնովին գիտեյի տեղագրությունը և, վերջապես,

ունեյի ճակատում ձեռք բերած ռազմական փորձ: Ցեռ հասկանում եյի, վոր յեթե առաջադրանքները չկատարեմ, շուտով հետ կկանչվեմ: Դրամ ծախսելու խնդրում հասկացա, վոր Կ-ն վճարելու յե միայն վստահելի և պետական տեղեկությունների համար: Յեթե հետագայում վոչ մի անգամ ինձ չմերժեցին վճարել իմ պահանջած գումարները, ապա այդ յեղել է շնորհիվ այն տեղեկությունների կարևորության, վորոնք ուղարկվում եյին իմ ստեղծած կազմակերպությունների կողմից:

Մինչև պատերազմի վերջը Տ-ն հավատարիմ մնաց իր խոստմանը: Նա կարծես թե յերբեմն նախանձում եր իմ հաջողություններին, բայց կարծում եմ, վոր միշտ աղնվորեն է վերաբերվել իմ հանդեպ: Այն «քողարկումը», վոր նա ապահովել եր ինձ համար, բավական եր՝ հոլլանդական իշխանություններից ինձ պաշտպանելու համար: Յես նրանց հետ վոչ մի ամենավոքր ընդհարում յերբեք չեմ ունեցել, թեև, ըստ յերևույթին, նրանք գիտեյին, թե ինչով եյի զբաղվում յես: Նա, անկասկած, մեծ ազդեցություն ուներ. դեռային վոստիկանության պետ վան Զանդտը և վոստիկանական իշխանությունների ուրիշ ներկայացուցիչները միշտ պատրաստ եյին ամեն տեսակի աջակցություն ցույց տալու նրան: Տ.-ն վաղուց եր ապրում Հոլլանդիայում, նա չոգենավային մի պատկառելի ֆիրմայի սեփականատեր եր և ուներ մեծ թվով ազդեցիկ բարեկամներ, բայց, գլխավորապես, հենվում եր բրիտանական կառավարության հեղինակության վրա: Հոլլանդական կառավարությունը նուրբ քաղաքականություն եր վարում և բարեկամական հարաբերություն եր պահպանում թե՛ դաշնակիցների և թե՛ գերմանացիների գաղտնի ծառայությունների հետ: Նա հասկանում եր, վոր չեր կարող արգելք հանդիսանալ գաղտնի ծառայությունների գործակալների մնալուն, և խելացի կերպով վորոշել եր սերտ կապ պահպանել այդ ծառայությունների պետերի հետ, վորոնք, այսպիսով, պարտավոր եյին պատասխանատու լինել իրենց գործակալների վարքի համար:

Տ.–ն պայքարող մարդ էր. այդ նրա հիմնական դիծն էր: Ցերբ մենք զանգատվում էինք մեր գործակալների գործերին միջամտելու առթիվ, նա միշտ պատրաստ էր պայքարելու բելգիական իշխանությունների դեմ, իսկ յերբեմն էլ նույնիսկ պայքարում էր բրիտանական ռազմական մինիստրության դեմ: Քանի վոր նա ապրում էր չեզոք յերկրում, վորպես անձնական զգալի միջոցներ ունեցող քաղաքացիական անձնավորություն, ապա ուրեմն Անգլիայում գտնվող պետը պետք է վոր հաշվի առներ նրան:

Տ.–ն հոլանդերեն վոչ մի բառ չէր խոսում և չգիտեր վո՛չ ֆրանսերեն և վո՛չ էլ գերմաներեն: Նա ռազմական գիտելիքներից զուրկ էր և վոչ մի ամենաաննշան գաղափար անգամ չունէր այն մասին, թե ինչպես պետք է կազմակերպություն ստեղծել ոկուպացիայի յենթարկված տերիտորիայում: Նա վոչինչ չգիտեր գնացքներին հետևող՝ Ֆրանկինյուլի կազմակերպության մասին: Ֆրանկինյուլը բոլոր թելերն իր ձեռքումն էր պահում և, յերբ այդ թելերը կըտրվեցին, Տ.–ն, բնականաբար, վոչինչ չէր կարող անել:

Սակայն Տ–ն բանիմաց կատարող էր և աջակցում էր ծառայության իրեն յենթարկված զանազան բաժինների սերտ համագործակցությանը: Հոլանդական իշխանությունների հետ հարաբերություն պահպանելու իր դլխավոր խնդիրը նա հիանալի յեր կատարում՝ շատ արժեքավոր ծառայություններ մատուցելով մեզ, նա ամենայն իրավամբ արժանացավ Բրիտանական կայսրության Ասպետի քանը–չանին, վոր նրան տրվեց պատերազմը վերջանալուց հետո:

ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Տ.–վ հետ ունեցած խոսակցությունից հետո իմ առաջին հոդսը հարմար բնակարան գտնելն էր: Պետերսենի ողնությամբ յես շուտով գտա մի այդպիսի բնակարան Խեմոսադ Սինդելի վրա: Հակահետախուզության պետ դե Մեսրը ինձ հայտնեց, վոր «Մասս» հյուրանոցը, վորտեղ յես իջել եյի, վիտում է գերմանական գործակալներով:

Իրադրության մեջ կողմնորոշվելու համար յես պետք է վատնեյի յերկու կամ յերեք շաբաթ, և այդ գործում ինձ մեծ ողնություն ցույց տվեց յերիտասարդ անգլիացի Կոլլինզը, վոր մի քանի տարի անց էր կացրել Բրյուսսելում «Լեվերս յեղբայրներ» ֆիրմայում ծառայելով և հենց պատերազմի սկզբից ապրում էր Հոլլանդիայում: Ինձ հաջողվեց նրան բերել ինձ մոտ աշխատելու, և, մինչև վերջը, քանի դեռ յես ապրում եյի Հոլլանդիայում, նա իմ հավատարիմ ողնականն ու ընկերը մնաց:

Նա, ով այդ ժամանակ ապրել է Բելգիայում և Հոլլանդիայում, կդնահատի այն դժվարությունները, վոր մենք ստիպված եյինք հաղթահարել: Գերմանացիները հիանալի արդելքներ եյին ստեղծել տեղեկությունների արտահոսման դեմ. բելգիական–հոլլանդական սահմանի յերկարությամբ ձգված էր յերկաթալար, վորի միջոցով անց էր կացվում բարձր լարվածության ելեկտրական հոսանք, և իրարից քիչ հեռավորության վրա, տեսանելիության սահմաններում, կանգնած էր ժամապահների մի խիտ շղթա. բացի դրանից, սահմանը յերկու կողմից պահպանում եյին զազանի վոստիկանական գործակալները:

Սակայն գերմանական միջոցներն ու մարդիկ ունեյին վորոշակի կենտրոնացած ուժ, վորի դեմ անհամեմատ ավելի հեշտ էր պայքարել, քան հոլլանդական և բելգիական գործակալների անորոշ, բայց հզոր ուժի դեմ, վորոնցով վիտում էր Հոլլանդիան: Այստեղ նստել եյին բելգիական հարյուրավոր փախստականներ, և քանի դեռ գերմանացիները լարափակոցներ չեյին կազմակերպել, նրանցից շատերը հնարավորություն գտան տեղեկություններ ձեռք բերել Բելգիայից և դրանք վաճառել բրիտանական, բելգիական կամ ֆրանսիական գաղտնի ծառայություններին, իսկ յերբեմն էլ հենց միևնույն տեղեկությունները ծախում եյին բոլոր յերեք ծառայություններին էլ: Այժմ պայման–

ները փոխվել էին. նրանք այլևս չէին կարող տեղեկություններ ստանալ, բայց և այնպես թրև էին գալիս մեր շուրջը, խառնվելով մեր այն յուրաքանչյուր փորձին, որի նպատակն էր կապ հաստատել հակառակորդի բռնագրված բելգիական տերիտորիայի հետ:

Ամենից առաջ անհրաժեշտ էր Հոլլանդիայում գտնել այնպիսի վստահելի բելգիացիներ, որոնց մենք կարողանայինք վստահել և որոնք ընդունակ լինեին յենթարկվելու վերոշ կարգապահության և իրենց գործողություններում ղեկավարվեին ոչ թե չահամոլությամբ, այլ հայրենասիրությամբ: Ցես շատ ուրախ էի, որ հանդիպեցի բելգիական յերկաթուղու նախկին խոշոր ծառայող Մորոյին, որը, ծանոթանալով մեր խնդիրներին՝ հայտնեց, որ էր վորդին մեզ հետ համագործակցելու համար կընդերգրավի բելգիական լավագույն յերկաթուղայինների, որոնցից այն ժամանակ շատ կային Հոլլանդիայում և որոնք շարունակում էին նրան իրենց պետի տեղ ընդունել: Վորդին ներկայացվեց ինձ և ինձ վրա լավ տպավորություն թողեց. յես նրան բացատրեցի մեր պլանը: Այդ պլանի համաձայն նա տարբեր ժամանակամիջոցներից հետո ինձ մոտ բերեց ավելի քան հիսուն մարդ, որոնց կարելի յեր Մաստրիխտից մինչև Զելանդիայի ծովափը տարածվող բելգիական տերիտորիայի ստրատեգիական կետերի միջև դասավորել այնպես, որ նրանց նկատմամբ կասկածներ չառաջանան:

Մորոյի գործակալներից յուրաքանչյուրը պատասխանատու յեր հոլլանդական սահմանի վորոշ տեղամասի համար և հրահանգ էր ստանում վորևե միջոց գտնելու՝ դրավված տերիտորիայի հետ կանոնավոր հարաբերություն պահպանելու համար: Մենք նրանց բացատրեցինք, որ կարելի յե ոգտագործել յերեք միջոց.

1) սուրհանդակներ, որոնք կես գիշերին կարողանային անցնել ելեկտրական հաղորդալարի վրայով, ոգտվելով ռետինե դուլպաներով և կոշիկներով.

2) մակուլիավարներ, որոնք, մնալով գերմանացիների

հսկողության տակ, թույլտվություն ստանային իրենց նավակներով լողալ Ռոտտերդամից մինչև Անտվերպեն.

3) այն գյուղատնտեսական բանվորները, որոնք սահմանակից դաշտերն էին մշակում և որոնք հնարավորություն ունեին յերկաթալարի վրայից հաղորդագրություններ նետել այն ժամանակ, յերբ ժամապահն ուրիշ կողմ կնայի:

Յուրաքանչյուր գործակալ ստացավ իր որոշակի համարը. Մորոյի վորդին կոչվեց «Որամ»: Վորոշեցինք, որ Որամը նրանց անմիջական պետը լինի, իսկ գործակալները պետք է կուրորեն հնազանդվեին նրան և իրավունք չպիտի ունենային իրենց հատկացված տեղամասերը լքելու. բացի դրանից, Որամը սուրհանդակների ծառայություն է կազմակերպում ղեկուցագրեր հավաքելու համար: Նրանցից ամեն մեկը յերդում պետք է տար լռել այն մասին, թե ինքն ում համար և աշխատում և չպիտի փորձեր իմանալ, թե վորո՞նք են Որամի մյուս գործակալները:

Ահա այսպես ստեղծվեց Հոլլանդիայի կազմակերպությունը, որի եֆեկտիվությունն աստիճանաբար ավելանում էր: Պատերազմի վերջին յերկու տարիներին մենք սկսեցինք ունենալ Բելգիայի հետ կապ հաստատելու առավել վեց կայուն միջոցներ: Յերբ նրանցից մեկը դադարում էր գործելուց, մենք պահեստի ունենում էինք մնացած հինգ միջոցները, իսկ մյուս կողմից էլ շարունակ նոր միջոցներ էինք վորոնում:

Յերկրորդ խնդիրը հետևյալն էր. գործակալներին բելգիական տերիտորիայում դասավորել այնպես, որ նրանք ծածկեին վողջ դրավված տերիտորիան. հրահանգներ տալ նրանց պահանջվող ինֆորմացիայի վերաբերյալ. դնել այնպիսի մարդիկ, որոնց կարելի կլինի ղեկուցագրեր հանձնել՝ դրանք սահմանի վրայով ուղարկելու համար:

Ոկուպացիայի յենթարկված տերիտորիայում գործակալություն կազմակերպելու համար գոյություն ուներ յերեք յեղանակ:

Դրանցից մեկը բելգիացիներին և ֆրանսիացիներին Բելգիա կամ Ֆրանսիա ուղարկելն էր. մենք մութ գիշերին նրանց անց էինք կացնում էլեկտրալարի վրայով:

Մյուս յեղանակը սուրհանդակի ոգտագործումն էր, այդ սուրհանդակը Հոլլանդիայում գտնվող մեր գործակալներից վորևե մեկից նամակ էր տանում Բելգիայում ապրող ընկերներին, վորոնք հաճույքով էին աշխատում իրենց նախկին պետի համար: Նրանք մեր գործակալներից ամենալավագույնները դուրս յեկան: Յեվ, վերջապես, հաճախ մեզ հաջողվում էր կապ հաստատել հին կազմակերպությունների հետ, վորոնք գործում էին 1915 թվին, իսկ 1916 թվին գերմանացիների կողմից սահմանը փակելուց հետո կորցրել էին անգլիական հետախուզական որգանների հետ ունեցած կապը: Ընդհանուր առմամբ կարելի յեր հուսալ, վոր ոկուպացիայի յենթարկված տերիտորիայի գործակալներից յուրաքանչյուրը կհավաքագրի յերկու կամ յերեք ուրիշ գործակալ:

Գրավված տերիտորիայում սուրհանդակների ծառայություն կազմակերպելն առանձին դժվարություններ էր հարուցում: Անձնական քարտերի սիստեմի առկայության դեպքում, մի սիստեմ, վոր շատ խիստ կիրառվում էր Ֆրանսիայում, ձերբակալվելու վախից վոչ վոք չէր կարող գտնվել անձնական քարտում նշանակված իր բնակավայրից յերեսուն մղոնից ավելի հեռավորության վրա: Բելգիայում գործող գերմանական գաղտնի վոստիկանությունը հատուկ ուշադրություն էր դարձնում այն անձնավորությունների վրա, վորոնք վոտքով կամ վորևե փոխադրության միջոցով ճանապարհորդում էին: Ինչպես մենք, այնպես էլ նրանք լավ էին հասկանում, վոր ինֆորմացիան վոչ մի արժեք չունի, քանի դեռ նա սահմանից այն կողմը չի անցել:

Գրավված տերիտորիայում գտնվող հետախույզի և իմ միջև (Ռոտերդամում) կապ պահպանելու սիստեմը հանդում էր հետևյալին. հետախույզների ամեն մի խմբի պետը գրավված տերիտորիայում հավաքում էր իր գործակալների ուղարկած զեկուցագրերը և դրանք Անտվերպենում, Լյեժում կամ Բրյուսսելում հանձնում էր մեր ցույց տված հասցեյով («փոստարկղով»): Սուրհանդակն այդ զեկուցագրերը հանում էր («փոստարկղից») և հանձնում սահմանը անցնելու կետին: Այստեղ այդ զեկուցագրերը հավաքվում էին Որամի սահմանապահ գործակալների կողմից և Որամի միջոցով ուղարկվում ինձ: Սահմանն անցնելու կետերը, «փոստարկղները» և «փոստարկղների» սահմանն անցնելու կետերի միջև յերթևեկող սուրհանդակները կազմակերպված էին Հոլլանդիայից՝ Որամի և իմ ղեկավարությամբ: Հետախույզների խմբի յուրաքանչյուր պետը, վորի գործակալները ինֆորմացիա էին հավաքում գրավված տերիտորիայում, իր տրամադրության տակ ուներ սեփական անկախ «փոստարկղ», սահմանային սուրհանդակ և սահմանից ինֆորմացիա հաղորդելու կետ. իսկ ամբողջ անձնակազմը, բացի «փոստարկղից», բոլորովին անհայտ էր նրան: Իր հերթին, «փոստարկղը» չէր ճանաչում զեկուցագրեր հանձնող և հավաքող սուրհանդակներին: Հենց վոր զեկուցագրերը հանձնվում էին «փոստարկղին», իմ պարտականությունն էր դրանք Հոլլանդիա փոխադրել գլխավոր զորակայանին ուղարկելու համար:

Բոլոր պոստերի կրկնապատկումը և ընդհանուր սիստեմը չիմանալու վրա հիմնված գաղտնապահությունը անհրաժեշտ էին և մեր աշխատանքի ամուր հիմքն էին հանդիսանում: Մեր գլխավոր խնդիրն էր՝ կազմակերպել մեծ թվով վոքր և իրարից մեկուսացած խմբակներ: Այսպիսով, յեթե մի աշխատող բռնվեր, նա կարող էր մատնել վոչ ավել քան չորս կամ հինգ ուրիշ աշխատողի: Նույնիսկ ամենաազնիվ հայրենասերներից չէր կարելի լքություն սպասել այն դեպքում, յերբ «յերրորդ աստիճանի» հարցաքննության գերմանական մեթոդներն էին կիրառվում. ձերբակալվածներին հաճախ գաղտնաբար այնքան էին ծեծում, մինչև վոր հաջողվեր խոստովանություն

կորզել նրանցից։ Ամենահամառ կամքը խորտակելու համար յերբեմն թմբեցնող միջոցներ եյին գործադրում։

Մենք ոգուտ քաղեցինք Ֆրանկինյուլի կազմակերպության տապալման դասից։ Ուսումնասիրելով նրա սիստեմը՝ յես տեսա, վոր նա գրավված տերիտորիայում աշխատող յերկու հարյուր գործակալներին հոլլանդական տերիտորիայում գտնվող ղեկավարության հետ կապ հաստատելու համար միացրել եր կապի միակ միջոցին՝ տրամվային, վորն ամեն որ կտրում-անցնում եր բելգիական սահմանը և ուղևորվում դեպի Մաստրիխտ։ Բելգիայում այդ տրամվայում ամեն որ թաղցվում եյին ղեկուցագրերը, վորոնք դուրս եյին հանում Ֆրանկինյուլի գործակալները, յերբ նրանք հասնում եյին Հոլլանդիա։ Կապի այսպիսի յեղանակը իդեալական եր. նա այնքան անմիջական եր և հասարակ, վոր բավական ժամանակ չհայտաբերվեց։ Այդ հաջողությունը համոզեց Ֆրանկինյուլին, և նա կարծում եր, թե միշտ այդպես էլ շարունակվելու յե։ Բացի դրանից, նա կատարեց մի սխալ էս, թույլ տալով իր բոլոր բելգիական գործակալներին ճանաչել իրար։ Այդ իսկ պատճառով, յերբ կապի մի ողակը գերմանացիների ձեռքն ընկավ, նրանք կարողացան բռնել բոլոր ղեկուցագրերը և հետապնդել բոլոր գործակալներին, վորովհետև Ֆրանկինյուլը իր մարդկանց վտանգի մասին նախազգուշացնելու միջոցներ կամ յեղանակներ չուներ։

Իմ աշխատանքի ժամանակաշրջանում յես շարունակ կապ եյի պահպանում գնդապետ Ոպպենհայմի հետ, վոր գտնվում եր Հաագայում։ Նա Տ.-ի ուղղակի հակապատկերն եր. շատ բարձրահասակ և մի փոքր նրբակազմ, ըստ յերևույթին, մեծ հմտության տեր, շատ սառն ու առանձնասեր մարդ եր։ Նրա ֆունկցիան եր՝ վերլուծել տեղեկություններն ու հետաքրքրական ղեկուցները և, վորովհետև նա վոչ մի առնչություն չուներ տեղեկություններ ձեռք բերելու կամ դաղտնի ծառայություն կազմակերպելու հետ, դրա համար էլ չեր պատկերացնում այն դժվարություններ-

ը, վոր մենք ստիպված եյինք հաղթահարել։ Սակայն նա շտաբային փայլուն սպա յեր, ինչպես յես այդ հետագայում տեսա նրան ուղարկվող ղեկուցյունների հմուտ վերլուծումից։ Նա քաղում եր այն բոլոր տեղեկությունները, ինչ վոր հնարավոր եր քաղել այդ ղեկուցյուններից, և անթերի կերպով եր գնահատում զորքերի ամեն մի տեղափոխության նշանակությունը։

Գնդապետ Ոպպենհայմն ինձ հայտնեց, թե հատկապես ինչպիսի տեղեկություններ անհրաժեշտ է ձեռք բերել։ Վոչ պրոֆեսիոնալ մարդը, անտարակույս, կզարմանա, իմանալով, վոր այդ տեղեկությունները գլխավորապես վերաբերում եյին գնացքների յերթևեկության վերաբերյալ տվյալներին։ Ուրիշ ժամանակ յես ինքս էլ բնավ չեյի կարող պատկերացնել, թե դաղտնի ծառայությունը մի այսպիսի կազմակերպություն է, վոր գնացքների ժամանումն ուսումնասիրելով է դբաղվում։ Մինչդեռ այդ մեր դբաղմունքի գլխավոր խնդիրն եր։ Գնացքների յերթևեկությունը նշանակում եր գերմանական զորքերի տեղափոխություն, իսկ զորքերի տեղափոխությունը հաճախ հարձակում եր նախադուշակում։ Շատ անդամ մեր ինֆորմացիայից եր կախված դաշնակիցների նախապատրաստությունը՝ վորևե դիրք պաշտպանելու կամ հարձակվող կողմին հանկարծակի բերելու համար։ Գերմանացիները յերբեք այնքան զորք չեյին ունենում, վոր կարողանային միաժամանակ հարձակում գործել յերկու ճակատի վրա, այդ պատճառով էլ յուրաքանչյուր հարձակմանը սովորաբար նախորդում եր զորքերի խոշոր տեղափոխություն մի ճակատից մյուսը։ Այստեղից էլ հասկանալի յե գնդապետ Ոպպենհայմի հաստատակամությունը՝ զորքի բոլոր տեղափոխությունների և զորամասերի համարների մասին ամեն տեսակի ինֆորմացիա ստանալու նկատմամբ։ Գերմանական գանգատներ գնդեր և զորամասեր ճանաչելու գործին ոգնելու համար նա ինձ տվեց գերմանական բանակի վերաբերյալ տեղեկագրեր, վորոնք ինձ հիմնովին ծանոթացրին կազմակեր-

պության, զանազան տարաղների և տարբերիչ նշանների հետ։ Այս բոլորն անհրաժեշտ էր իմանալ նրա համար, վոր ճշտությամբ և վստահությամբ կատարելի իմ առջև դրված խնդիրը։

Նրա դրդումով մենք ատիճանաբար կազմակերպեցինք գնացքներին հետևելու մի սիստեմ, վորն ընդգրկում էր Բելգիայի և հյուսիս արևելյան Ֆրանսիայի բոլոր կարևորագույն յերկաթուղագծերը։ Մենք նշանակում էինք յուրաքանչյուր զինվորական գնացքի անցնելու ժամանակը և կազմը, ամեն մի հանդուցակայարանում դիտում էինք գնացքների յերթևեկությունը և այդպիսով կարողանում էինք հետևել յուրաքանչյուր դիվիզիային՝ գնացք նստելու կետից մինչև գնացքից իջնելու կետը։

Ռուսական ճակատից դեպի արևմտյան ճակատ տեղափոխվող զորքերի վերաբերյալ հաղորդագրություններն ստացվում էին այն մոմենտին, յերբ նրանք առաջ էին շարժվում Հերբեստալի վրայով։ Լսեժում գտնվող մեր պոստից մենք իմանում էինք, թե արդյոք դիվիզիայի տեղափոխության համար անհրաժեշտ հիսուներկու գնացքն անցել է դեպի Նամյո՞ւր, թե՞ դեպի Բրյուսել։

Նամյուրում կամ Բրյուսելում մենք վերստին հանդիպում էինք նրանց և զանազան հանդուցակայարաններում նրանց հետևում էինք մինչև իջնելու կայարան հասնելը։

Գնացքներին հետևող կրկնապատկված պոստերի միջոցով մենք կարողանում էինք ստուգել ամեն մի սխալը, իսկ վերջնակետերում և հանդստյան գոտիներում աշխատող հատուկ գործակալները զորքերին ճանաչում էին նրանց դալուց։ Հեռվից յեկած դիվիզիաները ռազմաճակատ ուղարկվելուց առաջ անպայման ուղեվորվում էին հանդստի գոտին։ Հարձակման համար նշանակված դիվիզիաները սովորաբար սկզբում կենտրոնացվում էին մերձակա թիկունքային գոտում։ Ռազմաճակատի դծի ուղղությամբ կատարվող տեղաշարժումները կարելի յեր ստուգել դերինների ոգնությամբ կամ նամակներ և փաստաթղթեր բռնելու միջոցով, սակայն թիկունքային գոտու ուղղությամբ տեղաշարժվելու մասին տեղեկություններ ստանալու համար դլխավոր հրամանատարությունը կարող էր հույս դնել միայն մեր դիտողների բարեխղճության վրա։

Ստորև յես կպատմեմ, թե մեր դիտող պոստերն ինչպե՛ս էին իմանում արևելքից արևմուտք և արևմուտքից արևելք տեղի ունեցող բոլոր տեղափոխությունների մասին։ Չնայած վոր զեկուցագրերը հաճախ ուշանում էին յերեք-չորս որ, այնուամենայնիվ այդ նշանակություն չուներ, քանի վոր դերմանացիներին մի քանի շաբաթ էր հարկավոր իրենց ուժերը կենտրոնացնելու համար։ Վորևե հանդուցային կայարանով դիվիզիա տեղափոխելը պահանջում էր առնվազն յերկու որ, իսկ վորպես կանոն՝ չորս-հինգ որ, վորովհետև դիվիզիա փոխադրող հիսուներկու գնացքներին լրացուցիչ կերպով անհրաժեշտ էին նաև մթերապաշար, ռազմամթերք և ռազմադուլք փոխադրող գնացքներ։ Հարձակման համար շատ թվով դիվիզիաներ էին պահանջվում։ Այս հանդամանքը մեզ հնարավորություն էր տալիս մեր զեկույցներն ստանալ այնքան շուտ, վոր կարողանում էինք նախազդուշացնել Գլխավոր զորակայանին։

Մենք ստանում էինք նաև բազմաթիվ այլ տեղեկություններ, ինչպես, որինակ, հարձակումների պլաններ, տեղեկություններ՝ նոր դիվիզիաների և դնդերի կազմավորման մասին, հանդերձանքի փոփոխության, նոր դյուտերի և նոր տիպի հրանոթների, հարձակման նոր մեթոդների, զորքերի լրացումների ժամանման, ոդային ռմբակոծությունների նպատակների մասին և այլն, բայց մեր ամենակարևոր նվաճումը հակառակորդի տեղաշարժումների նկատմամբ կիրառվող անընդհատ հսկողությունն էր և տեղափոխվող զորամասերի ճանաչումը։

Այս ծառայության հետ կապված հետաքրքրությունն ու հուզումը պատերազմի վերջերին վերածվեց տանջալից լարվածության, քանի վոր բոլորը դիտեին, վոր դերմանական հրամանատարությունն աշխատում է մեծ հարձակում դործելու ուղղությամբ, մի հարձակում, վորը վճռա-

նան վախճանին պիտի հասցներ պատերազմը: Ըստ ինքեան կարևոր էր հայտարարել մեծ հարձակման նախապատրաստվելու պլանի կամ առաջին միջոցառումների ամեն մի հետքը, և մենք շարունակ զգաստ էինք, ձգտելով նկատել ուժերի այն յուրաքանչյուր կենտրոնացումը, որ կարող էր ցույց տալ հարձակման համար ընտրված վայրը և այն ղրքերը, որոնք նշանակվելու էին այդ հարձակումն իրականացնելու համար:

Ահա, համառոտակի, մեր խնդիրները և այն դժվարությունները, որ մեզ վիճակվել էր հաղթահարել, և մի քանի այնպիսի տեխնիկական մանրամասնություններ, որ ես ստիպված եղա բացատրել՝ հետախուզության որդանների աշխատանքը լավ հասկանալու համար: Կրկնությունից խուսափելու համար ես կհիշատակեմ միայն մի քանի ընորոշ կազմակերպությունների մասին: Պատերազմի վերջին երկու տարիներին մենք մեր տրամադրության տակ ունեցինք երկու հազարից ավելի գործակալներ, որոնք զանազան ժամանակաշրջաններում մեր ոգին են աշխատել: Ցեսս չեմ կարող նկարագրել այդ գործակալներից յուրաքանչյուրի անհատական նվաճումները և պատմել մեր ստեղծած բոլոր կազմակերպությունների մասին:

ԱՌԱՋԻՆ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԲՋԻՋԸ

1916 թվականի մայիսին Հոլլանդիա գալով՝ ես, ոկուպացիայի յենթարկված տերիտորիայից տեղեկությունների լիակատար բացակայության պատճառով, որոշեցի իմ աշխատանքն սկսել սահմանն անցած բոլոր վախճականներին հարց ու փորձ անելուց:

Նրանցից վոմանք չէին վախենում երկաթուղուց և ժամանակ առ ժամանակ կես դիշերին սահմանն անցնում էին այնպիսի ուղեկցողների ոգնությամբ, որոնք, լավ ծանոթ լինելով սահմանին և ունենալով պահեստի ռեզերվ

ձեռնոցներ, 500-ից մինչև 1000 ֆրանկ էին ստանում յուրաքանչյուր եմիգրանտի համար:

Իմ նպատակը վոչ միայն ռազմական ինֆորմացիա ստանալն էր, ինչքան էլ վոր այդ ինֆորմացիան սակավ լիներ, այլ նաև գործակալներ հավաքագրելը՝ ոկուպացիայի յենթարկված տերիտորիայում ծառայելու համար, և ստանալ այնպիսի մարդկանց հասցեներ, որոնք համաձայնվեին մեզ հետ աշխատել, յեթե մենք կարողանայինք կապ հաստատել նրանց հետ:

Հարկավոր էր շատ խիզախ և հայրենասեր մարդ լինել՝ երկաթուղուի վրայով անվնաս անցնելուց հետո Բելգիա կամ Ֆրանսիա վերադառնալու համար: Գերմանացիների տարածած հարյուրավոր լուսանկարներ պերճախոս կերպով ապացուցում էին մահացության բազմաթիվ դեպքեր այն եմիգրանտների մեջ, որոնք փորձել են սահմանն անցնել առանց հատուկ անձերի ոգնության: Բացի դրանից, վերադարձողներին ձերբակալման վտանգ էր սպառնում, իսկ ձերբակալումն անխուսափելի գնդակահարություն էր նշանակում: Նույնիսկ նա, ով բռնված է յեղել Հոլլանդիա փախչելու փորձ կատարելիս, նրան էլ սպասում էր յերկարատև բանտարկություն կամ Գերմանիա՝ քաղաքացիական համակենտրոնացման ճամբար ուղարկելը:

Դրան պետք է ավելացնել նաև հրապարակվելու վտանգը: Ցերբ վորևե մեկը փախչում էր Հոլլանդիա, նրա հարևաններն իմանում էին այդ մասին. յեթե նա վերադառնար, նրանք իսկույն սկսում էին կասկածել, թե վորպես լրտես է վերադարձել, և իրենց խոսակցություններով կարող էին կործանել նրան: Քաղաքացիական բնակչության մեջ կային նաև այնպիսիները, որոնք ծառայում էին գերմանացիներին: Այդ մարդիկ միշտ կարող էին յերևան հանել իրենց տեսակետով կասկածելի գործունեությունն այն քաղաքացիների, որոնք ոկուպացիայի յենթարկված տերիտորիան էին վերադարձել:

Մենք չէինք կարող խուսափել նման ռիսկից, բայց աշխատում էինք գործակալներին իրենց մեկնելուց հետո այնքան շուտ վերադարձնել դեպի ոկուպացիայի յենթարկ-

ված տերիտորիան, վոր նրանք կարողանային ժամանակին ներկայանալ տեղական պարետությանը (ոկուպացիայի յենթարկված տերիտորիայի ամեն մի բնակիչ պարտավոր եր այդ անել ամիսը մի անգամ)։ Ժամանակին չհայտնվելու հետևանքը լինում եր այն, վոր սկսում եյին փնտռել անցագրածին և, յեթե նա չունենար արդարանալու լուրջ պատճառաբանություն, ապա նրան մի բան եր մնում անելու— թաղնվել, իսկ այդ հանգամանքն, անշուշտ, դդալի չափով կնվազեցներ նրա արժեքը վորպես գործակալի։

Լուվենացի Հենրի վան Բերգենը մեր հավաքագրած առաջին գործակալն եր։ Նա սահմանն անցել եր Անտվերպենից դեպի հյուսիս, ուղեկցողի ողնությամբ։ Քսանչորս ժամից հետո յես նրան հարցուփորձի յենթարկեցի Բոմ-ֆյեյի վրա գտնվող մեր դրասենյակում։

Առաջին բանը, վոր ինձ զարմացրեց, դա նրա դլխարկը և հագուստն եյին, վոր նա հագել եր վտանգավոր ճանապարհ ընկնելուց առաջ։ Նա անթերի յեր հագնված և այնպիսի տեսք ուներ, վոր կարծես թե հենց նոր եր իջել շոգենավից կամ գնացքից, այլ վոչ թե անցել եր ելեկտրալարի վրայով։ Իմ առջև կանգնած եր քառասունհինգ տարեկան, մասնագիտությամբ իրավաբան, համարձակ և կայտառ մի մարդ, վորը հիանալի տպավորություն եր թողնում։ Վորովհետև յես արդեն ուրիշ եմիդրանտներից մերժումներ եյի ստացել մեզ աջակցություն ցույց տալու գործում, ապա զարմացա այն պատրաստակամության համար, վորով նա համաձայնեց աշխատել մեզ համար այն ժամանակ, յերբ յես նրան համոզեցի, թե նա դաշնակիցներին ավելի մեծ ծառայություն կարող է մատուցել Բելգիա վերադառնալով, քան վորպես դինվոր ֆրանսիական բանակ մտնելով։

Որամին հրամայված եր անմիջապես հոդալ Բերգենին սահմանից անցկացնելու մասին, իսկ յես այդ ժամանակ չտալ կարդով հրահանգներ եյի տալիս նրան՝ մեզ անհրաժեշտ ինֆորմացիայի վերաբերյալ, ընդդծելով, դլխավորապես, գնացքներին հետևող պոստեր կազմակերպելու անհրաժեշտությունը։ Յես նրան մանրամասնորեն բացատրեցի այդ պոստերի ֆունկցիան և պահանջվող ինֆորմացիայի բնույթը — յուրաքանչյուր դինվորական գնացքի կազմը, նրա անցնելու ժամանակը և այլն։ Կրկնությունների կարիք չկար։ Դլխի կտրուկ և վճռական շարժումները, կենտրոնացված հայացքը ցույց տվին ինձ, վոր նրա ճկուն ու մարզված խելքն ամեն ինչ ըմբռնում է միանդամից։ Խուսափելով վնասաբեր դրանցումներից՝ նա անդիր արեց Անտվերպենում գտնվող սրճարաններից մեկի տիրոջ անունը և հասցեն, վորին նա պետք է հանձներ կամ ուղարկեր իր դեկուցագրերը։ Նա ինքը պետք է կոչվեր Մ–60, մի թվանշան, վորը միաժամանակ հանդիսանում եր ճանաչեցնող նշան և պարոլ։ Նա իսկույն հասկացավ Անտվերպենի «փոստարկղից» իր իսկական անունը թաղցնելու անհրաժեշտությունը։

Քանի վոր լուսինը անհայտանալու վրա յեր, յերեք ուրից հետո ճանապարհ ընկավ դեպի Եյնդհովենին մոտիկ գտնվող սահմանը։ Նա հանձնված եր Շարլ Վիլլեկենսի հոգատարության, վորը մեր լավագույն գործակալ-ուղեկցողներից մեկն եր։ Ելեկտրալարի տակից փորի վրա սողալով, Վիլլեկենսը, ռետինե ձեռնոցների և կոշիկների շնորհիվ, Բերգենին բարեհաջող կերպով անցկացրեց սահմանից։ Հետագայում մենք իմացանք, վոր նա նրան հասցրել է մինչև Մոլլ գյուղակը, վորտեղից Բերգենը ճանապարհը շարունակել է մենակ։

Մենք անհանգստությամբ նորությունների եյինք սպասում։ Ամեն շաբաթ հաղորդագրություններ եյինք ստանում «փոստարկղից», կամ Անտվերպենի սրճարանատերից, վորը սուրհանդակի միջոցով այդ հաղորդագրություններն ուղարկում եր սահմանի վրա գտնվող մեր գործակալին։ Յերրորդ շաբաթը լրանալիս Որամը մեզ բերեց առաջին դեկուցագիրն այն մասին, վոր Լուվենի հետևում գտնվող Խերենտի պոստից գնացքները շարժվում են Լուվեն-Բրյուսել դծի ուղղությամբ։ Զեկուցագիրը գրված եր տուչով ամենաբարակ թղթի վրա, վորպեսզի սուրհանդակը կարողանար այն թաղցնել իր դլխարկի ժապավենի տակ, աստառում, կոշիկների մեջ կամ վորևե մի ուրիշ տեղ, վոր

«փոստարկղից» մինչև սահմանը ճգվող ճանապարհին նրան կանգնեցնելու և խուզարկելու դեպքում չկարողանան գրանել: Վորպես լրացում այս զեկուցագրին՝ Բերզենը խնդրում եր հաղորդել, վոր ինքն աշխատում է ուրիշ պոստեր կազմակերպելու ուղղությամբ, բայց այդ շատ դժվար է, վորովհետև նա վոչ միայն հարմար մարդիկ պետք է գտնի, այլև, բացի դրանից, այդ մարդիկ պետք է ապրելիս լինեն այնպիսի տներում, վորոնք անմիջապես դռնվում են յերկաթուղագծի մոտ: Շուտով նա կազմակերպեց մի ուրիշ գիտող պոստ Լուվեն–Լյեժ գծի վրա: Այժմ մենք իրազեկ եյինք Լուվենի վրայով կատարվող ամբողջ յերթևեկության մասին, քանի վոր հաշվումների միջոցով կարողանում եյինք տվյալներ ստանալ համեմատաբար նվազ կարևոր Լուվեն–Մալին գծի վրայով տեղի ունեցող յերթևեկության մասին:

Զորս ամիս զեկուցագրերն ստանում եյինք կանոնավոր: Բերզենը գրում եր, վոր մեծ հույս է դնում Գենտում գտնվող իր ընկերների վրա, վորոնք խոստացել են գիտող պոստեր կազմակերպել այնտեղ: Ցեսս չատ դոհ եյի, վորովհետև մեր մի քանի ուրիշ բջիջներն էլ սկսեցին մեզ ուղարկել իրենց առաջին զեկուցագրերը, և մեր ցանցը աստիճանաբար ընդարձակվում եր:

Անսպասելի կերպով իմացանք, վոր զեկուցագրերը Անտվերպենից դեպի սահմանը բերող մեր սուրհանդակը ձերբակալված է: Ավելի ուշ, Անտվերպենի մի ուրիշ գործակալից, վորին հանձնարարել եյինք քննել այդ գործը, մենք իմացանք, վոր «փոստարկղի» կամ կապ պահպանող ողակի դեր կատարող սրճարանատերը նույնպես ձերբակալված է: Մենք այլևս վոչինչ չեյինք լսում Բերզենի մասին: Հաշտությունից հետո Բրյուսսել գալով՝ յես իմացա, վոր նա գնդակահարվել է այն յերկու ուրիշ անտվերպենյան գործակալների հետ միասին, վորոնք աշխատում եյին Լյեժում նրա համար:

Ինձ այնպես էլ չհաջողվեց իմանալ, թե ի՞նչն է յեղել ձերբակալության պատճառը: Սակայն միանգամայն պարզ եր· քանի վոր «փոստարկղին» հայտնի չեր վո՛չ Բերզենի և վո՛չ էլ սուրհանդակի անունները, իսկ Բերզենին հայտնի չեր վերջինիս անունը, ապա ուրեմն գերմանական դաղտնի վոստիկանությունը ձերբակալությունը հետաձգել եր մինչև այն ժամանակ, քանի դեռ չեր հետազոտել կազմակերպության բոլոր թելերը: Ցեսս կարծում եմ, վոր առաջին անդամ Բերզենն է բռնվել: Լավ հագնված և արտաքուստ աչքի ընկնող ջենտլմեն լինելով՝ նա կասկած է հարուցել իր այն հարաբերությամբ, վոր նա ունեցել է վորպես գիտող աշխատող յերկաթուղայինների և այն սրճարանի տիրոջ հետ, վորը գտնվում եր ամենաաղքատ թաղամասում և ուր հաճախում եյին, գլխավորապես, մանուֆակտուրաները: Մենք խորհուրդ եյինք տալիս նրան այդ մարդկանց հետ հարաբերություն պահպանելու համար ոգտագործել միջնորդի ծառայություններ և բավականանալ նրանց աշխատանքը զեկավարելով՝ սովերում մնալով, բայց նա, ամենայն հավանականությամբ, ուշադրություն չի դարձրել մեր նախազգուշացման վրա: Գերմանական գործակալը կարող եր հետևել նրան կամ նրա սուրհանդակին մինչև «փոստարկղը» և տեսնել, թե նա ինչպես զեկուցագրեր է հանձնում նրան: Գերմանացիները, ըստ իրենց սովորական մեթոդի, բռնում եյին բոլոր նրանց, ովքեր միայն վորևե չափում ունեյին իրենց կողմից կասկածվող գործակալի հետ: Մեր խնդիրը նման եր այն հափշտակիչի խնդրին, վորը փորձում է փող հավաքել զոհի աղջականներից վոստիկանության արթուն հսկողության ներքո: Մենք յերբեք չենք կարողացել լիովին լուծել այդ խնդիրը: Այն բոլորը, ինչ կարող եյինք անել Ֆրանկֆուրտի աղետի նման աղետից և Բելգիայից հաղորդագրությունների ստացման լիովին դադարումից խուսափելու համար, դա մեր մեծածավալ պլանին հետևելը և միաժամանակ գործող մի դյուժին կազմակերպությունների հետ աշխատելն եր, կազմակերպություններ, վորոնցից ամեն մեկը բոլորովին անկախ եր մյուսներից իր յուրաքանչյուր ողակով, սկսած գիտող պոստից և վերջացրած Հոլանդիայի հետ կապ հաստատող գործակալով:

Պատերազմից հետո Բրյուսսելում յես ծանոթացա Գենտից յեկած մի քահանայի հետ, վոր պատկանում եր Ֆըրանցիսկյան կրոնավորների միաբանությանը. վերջինս ինձ պատմեց, թե ինքն ե յեղել հենց այն մարդը, վորի մասին մեզ Բերգենը գրում եր: Նա արդեն կազմակերպել եր յերկու գիտող պոստեր, վորոնք պատրաստ եյին գործելու, բայց այդ ժամանակ Լուվենի հետ կապը կտրված եր: Նա Բերգենի հետ համաձայնության եր յեկել՝ Բելգիայի զանազան մասերում հավաքագրել իր միաբանության ուրիշ անդամների ևս, սակայն «փոստարկղի» ձերբակալությունից հետո նա կապի վոչ մի միջոց այլևս չուներ և ստիպված եր հրաժարվել իր պլաններից:

Այն բջիջներում, վոր մենք կազմակերպել եյինք ավելի ուշ, ողտագործում եյինք մեծ թվով քահանաների: Նրանք հիանալի գործակալներ եյին: Նրանց համար գոյություն չուներ այն անդունդը, վորը բելգիական գործարար մարդկանց բաժանում եր ազատ պրոֆեսիա ունեցող մարդկանցից և բանվորներից: Նրանք կարող եյին այցելել բնակչության բոլոր խավերին՝ առանց կասկածներ առաջացնելու: Մեզ հարկավոր եյին ինտելիգենտ մարդիկ, բայց և այնպես մենք չեյինք կարող յոլա գնալ առանց յերկաթուղային բանվորների, մաքսանենդների, փոքր սրճարանատերերի և սահմանամերձ գոտում աշխատող մակուլկավարների և գյուղացիների: Պարզ ե, վոր հաճախ շատ դժվար եր լինում կապ ստեղծել նրանց միջև:

Քանի դեռ մեզ չեր հաջողվել յերկրորդ պոստ ստեղծել, հենց միայն Բերգենի պոստը բավական յերկար ժամանակ դաշնակիցներին ինֆորմացիա յեր տալիս այդ կարևոր ղարկերակով կատարվող ղրքերի յերթևեկության մասին: Վերդենի և Ծովի միջև տարածվող գերմանական ճակատի բոլոր հատվածները ուժեղացնելու համար Գերմանիայից ուղարկված ղրքերը պետք ե անցնեյին Լյեժի կամ Տրիրի վրայով: Լյեժում յերկաթուղագիծը ճյուղավորվում եր յերկու յերակի, վորոնցից մեկն անցնում եր Բրյուսսելով, մյուսը Նամյուրով: Իսկապես, հերցոգ Ալբրեխտ Վյուրտեմբերգցու հրամանատարության տակ գտնվող գերմանական IV ղորաբանակը Գերմանիայի հետ իր կապը պահպանում եր բացառապես Բրյուսսել–Լյեժ գծի միջոցով: Ուստի զարմանալի չե, վոր գերմանական հետախուզությունն այնքան խնամքով եր լարում իր թակարդները:

ԳՆԱՑՔՆԵՐԻՆ ՀԵՏԵՎՈՂՆԵՐԸ ՑԵՎ «ՖԼԱՆՑՈՐՆԵՐԸ»

Յերկաթուղային գծերի հատման կետում կանգնելը և անցնող գնացքներին նայելը հեշտ ե, բայց տվյալ կետից անցնող բոլոր գնացքներին կանոնավորապես հետևելը և գնացքի անցնելու ժամանակն ու կազմը նշանակելը բոլորովին այլ գործ ե: Այդ գործը չպետք ե ընդհատվեր վո՛չ յերեկ, վո՛չ գիշեր, ըստ վորում հարկավոր եր նկատել բոլոր մանրամասնությունները: Միանգամայն ակնհայտ ե, վոր նման գիտողություն կարող եր կատարվել այնպիսի տնից, վորը յերկաթուղագծին մոտ եր գտնվում:

Գերմանացիները գիտեյին, թե մենք ի՛նչ ենք անում, վորովհետև նրանք բռնել եյին Ֆրանկֆինյուլի ամբողջ կազմակերպությունը, ինչպես նաև ուրիշ շատ կազմակերպություններ: Այդ պատճառով, նրանց գաղտնի վոստիկանության դեռքերը շարունակ պտտվում եյին ճանապարհի չուրջը և հետևում այն ամեն մի տան, վորտեղ իր համար ապաստարան կարող եր գտնել գիտողը:

Յերբ Բերգենի պես մի գործակալ բջջի կազմակերպման եր ձեռնարկում, ապա գլխավոր դժվարությունն անմիջապես յերկաթուղագծի մոտ ապրող գործակալներ գտնելն եր: Այսպիսի մի տան մեջ նոր անձնավորությունն տեղավորելը նշանակում եր առաջացնել գերմանացիների կասկածը: Ուստի, վորպես կանոն, հարկ եր լինում մշտական ընակիչներից վորևե մեկին համոզել, վոր նա կատարի այդ ծառայությունը: Այդ անելու համար կամ ինքը պետք ե բավականաչափ ծանոթ լիներ տվյալ անձնավորության հետ՝ փոխադարձ վստահություն ձեռք բերելու համար, կամ թե պետք եր բանակցություններ վարել ընդհանուր ընկերների միջոցով: Այս տեսակետից մեզ շատ

ողտակար եր լինում Մորոն, քանի վոր յերկաթուղու ծառայողները սովորաբար ապրում են յերկաթուղագծերին մոտ, և նրանց նախկին պետի նամակները բավական եյին՝ լիակատար վստահություն ստեղծելու համար:

Դիտողությունը պետք է արվեր յերկու հերթով, և շատ հաճախ այդ աշխատանքը կատարում եյին մարդ ու էին: Նրանք պետք է հոգ տանեյին, վոր գիշերն իրենց տանը լույս չերևա և ցերեկը գծերը դիտելու պահին նրանց չնկատեն պատուհանի մոտ: Այդ աշխատանքը միորինակ եր, և վորպեսզի կարելի լիներ գիշեր ու ցերեկ հետևել անցնող գնացքներին՝ նշանակելով յուրաքանչյուր գնացքի կազմը, նույնիսկ այն դեպքերում, յերբ միայն մթերապաշար կամ ռազմաղույք եր փոխադրվում, դրա համար պահանջվում եր զործին մեծաղույն նվիրվածություն և աղնվություն:

Գնացքների կազմը նշանակվում եր կրճատումներով. «պլ» — նշանակում եր սովորական ապրանքային վագոն անասունների համար կամ ջերմավագոն, «վ»-ն նշանակում եր մարդատար վագոն, «հարթ պլ.» պլատֆորմաներ, «բարձր պլ.»— բաց պլատֆորմաներ պատերով, «ծածկվ. պլ.»— բրեզենտով ծածկված պլատֆորմաներ: Հետևակ զորք փոխադրող գնացքը նշանակվում եր այսպես. «10.15, 1 վ. սպա, 33 պլ. զինվոր, 3 պլ. ձի և 6 հարթ պլ.»: Հրետանային զորամասը կարող եր ունենալ հետևյալ կազմը. «1 վ. սպա, 10 պլ. զինվոր, 20 պլ. ձի, 4 հարթ պլ. թնդանոթ և 8 հարթ պլ. ռմբարկղ»:

Որինակ, դիվիզիայի եշելոնները միշտ կարելի յեր տարբերել լրացումների եշելոններից կամ արձակուրդավորների կամ արձակուրդից վերադարձողների եշելոններից:

Կռվող զորամասեր տեղափոխող գնացքները միշտ իրար հետևից գնում եյին անընդհատ հոսանքով, վորովհետև դիվիզիաները սովորաբար փոխադրվում եյին վորպես մի ամբողջություն: Պատերազմի սկզբին հետևակ դիվիզիա փոխադրելու համար հիսուներկու գնացք եր պահանջվում, բայց ժամանակի ընթացքում դումարտակները հաճախ կրճատվում եյին 1000-ից մինչև 600 մարդ և, այսպիսով, դիվիզիայի փոխադրության համար հաճախ յերեսունիցքառասուն գնացք բավականացնում եր: Վորպես կանոն, մի դիվիզիա փոխադրելու համար որական անցնում եր ութից մինչև տասներկու գնացք, իսկ հարձակման պատրաստվելու ժամանակ մի դիտող պոստից որական անցնում եր մինչև քսան գնացք:

Մեջընդմեջ անցնում եյին առանձին եշելոններ ծանր թնդանոթներով, կամրջանավերով (պոնտոն) կամ վորևե ուրիշ զորեղացնող զորամասերով:

Արևելքից արևմուտք կամ արևմուտքից արևելք, կամ թե արևմտյան ճակատի մի հատվածից մյուսը փոխադրվող դիվիզիայի՝ հանդուցակայանով անցնելը սովորաբար չորից մինչև վեց որ եր պահանջում: Ինչքան մեծ լիներ այն տարածությունը, վոր պետք է անցներ դիվիզիան, այնքան ավելի յերկար եր տևում յերկու առանձին գնացքների միջև ընկած ժամանակամիջոցը:

Զինվորական գնացքի՝ արևմտյան ճակատից դեպի արևելյան ճակատ անցնելը 106 ժամ եր տևում, մինչդեռ յետ վերադառնալիս գնացքի համար 127 ժամ եր պահանջվում: Ռուսական ճակատից մեկնող զորքերի համար ավելորդ ժամերը ծախսվում եյին ռուս-գերմանական սահմանի վրա յեղած հատուկ ախտահանիչ կայաններում կատարվող ախտահանության համար: Առանձին եշելոնների փոխադրությունը մեզ քիչ եր հետաքրքրում, բայց յեթե եշելոնների փոխադրությունն անընդհատ շարունակվեր մեկ կամ յերկու շաբաթ, և այն ել շարային զորամասերով, ապա այդ՝ պատրաստվող հարձակման համար ուժեր կենտրոնացնելու պարզ նշան եր հանդիսանում:

Արձակուրդավորներ փոխադրող գնացքները նույնպես իրենց նշանակությունն ունեյին: Հարձակման պատրաստվելու դեպքում արձակուրդավորներով բեռնավորված գնացքները դադարեցվում եյին: Այդ նշանից մենք իմանում եյինք, վոր ինչ-վոր մի բան է պատրաստվում:

Լրացումներ փոխադրող գնացքներն արժեքավոր նշանակություն ունեյին այն տեսակետից, վոր գերմանացիների կրած կորուստներն եյին ցույց տալիս: Գործակալները

խնամքով նշանակում էին մարդկանց մոտավոր տարիքը, վորովհետև այդ մեզ հնարավորություն եր տալիս հաշվելու Գերմանիայի ունեցած մարդկային ռեզերվները։ Ժամանակի ընթացքում վորպես լրացումներ փոխադրվում էին վորոշված սահմաններից տարիքով ավելի մեծ կամ ավելի յերիտասարդ մարդիկ, ըստ-վորում նրանց թիվը շարունակ աճում եր։

Զինվորական գնացքներին վորպես լրացում՝ լինում էին նաև մթերապաշար և ռազմաղույք փոխադրող գնացքներ։ Այս գնացքներին վերաբերող տեղեկությունները մեզ չէին հետաքրքրում, բայց մենք դրանք պահանջում էինք գործակալներից, քանի վոր այդ բանը վերջիններիս ստիպում եր շարունակ արթուն լինել։

Խոշոր կազմակերպության առկայության դեպքում դիտողներից զեկուցագրերը վերցվում էին ամեն որ, ապա գրամեքենայով արտատպվում էին բարակ թղթի վրա կամ գրվում տուշով՝ գծագրի գրչածայրով։ Զարմանալին այն եր, վոր մենք շատ քիչ սխալներ էինք գտնում, և յես չեմ հիշում մի դեպք, վոր զեկուցագրերը սխալ լինելու պատճառով ստիպված լինեինք հրաժարվել Ֆրանսիայի կամ Բելգիայի օկուպացիայի յենթարկված տերիտորիայում աշխատող վորևե գործակալից։

Շատ կարևոր եր, վոր դիտողները ճանաչեին գնացքներով անցնող զորամասերը. այդ գործը դժվարանում եր նրանով, վոր գերմանացիները պոկում կամ ծածկում էին կոճականցքերի և ուսադիրների վրա յեղած ծածկագրերը (չիֆրովկա), իսկ դրանք միակ նշաններն էին՝ անմիջական դիտողության միջոցով զորամասերը ճանաչելու համար։ Այդ ինֆորմացիայի համար մեզ մնում եր միշտ ավելի և ավելի հույս դնել գործակալների բարեխղճության և ճարպիկության վրա, վորոնք կարող էին յերկաթուղակայարաններում խոսակցության բռնվել զինվորների հետ, կամ թե հույս դնել մեր «ֆլանյորների» վրա, վորոնք կարող էին հետևել զորամասերին այն ժամանակ, յերբ նրանք հանգստի գոտիներում ցած էին իջնում գնացքներից։

«Ֆլանյորների» խնդիրներից մեկն էլ մի բնակված կետից դեպի մյուս կետն անցնելն եր՝ առանց իր վրա հրավիրելու գերմանական դաղտնի վոստիկանության ուշադրությունը։ Նրանք մեր միակ միջոցն էին հանդիսանում՝ հանգստի տարբեր գոտիներում գերմանական գնդերի և դիվիզիաների համարները և կատեգորիաները վորոշելու համար։ Հանգստի գոտիները պարզորոշ կերպով սահմանազատված էին, վորովհետև նրանք բոլորն էլ մտնում էին հանդրվանային ռայոնի մեջ, վորն ընդգրկում եր ամբողջ Ֆլանդրիան և Բելգիայի այն մասը, վոր սահմանակից եր Ֆրանսիային։ Բնակված կետերի այն բոլոր տները, վորտեղ կարող էին տեղավորվել զորքերը, անցկացված էին հատուկ ցուցակների մեջ։ Այդ իսկ պատճառով, յերբ մի դիվիզիան հեռանում եր, մյուս դիվիզիայի համար նրա տեղը գրավելն ավելի հեշտ եր, քան նոր բնակարաններ գտնելը։ Սպաները կարող էին ուղղակի գնալ իրենց բնակարանները, հրեատավորները գիտեին, թե վորտեղ պետք է գրտնել ամենահարմար շենքեր ռմբարկղների և այլ ռազմաղույքերի համար։

Գերմանական դիվիզիաների հանգստյան վորոշակի գոտիների գոյությունը մի կողմից հեշտացնում եր մեր գործակալների աշխատանքը, բայց մյուս կողմից էլ դժվարացնում եր, վորովհետև այդ բանը հնարավորություն եր տալիս գերմանացիներին ունենալ վոստիկանական մնայուն անձնակազմ, վորը ճանաչելով բոլոր տեղական բնակիչներին՝ իսկույն նկատում եր նոր անձնավորության ներկայությունը կամ մշտական բնակչի համար անսովոր վորևե գրազմունքը։ Այս գոտիներում քաղաքացիական բնակչությանն ավելի խիստ էին հետևում, քան ուրիշ վայրերում։

Պատերազմի սկզբին գերմանական զորադնդերի համարները վորոշելը հեշտ եր, վորովհետև զորադնդի համարը ուսադիրների վրա գրված եր լինում։ Հետևակները կրում էին կարմիր յեզրերով ուսադիրներ, հրետավորները՝ սև յեզրերով, և այլն։

Պատերազմի վերջին տարիներին ուսադիրները ծածկված կամ հանված էին, բայց մեր այն գործակալները,

վորոնք մտնում էին գերմանական զորքերի մեջ, շարունակում էին դյուրությամբ վորոշել դիվիզիաների և զորադնդերի համարները: Զինվորները, մանավանդ սաքսոնացիները, ընկերասեր և զրուցասեր էին: Գերմանիայի զանազան մասերից, որինակ, Բավարիայից, Սաքսոնիայից և այլ տեղերից յեկած զինվորները տարբերվում էին ըլխարկների վրա յեղած կոկարդներով: Այդ մեզ չեր հետաքրքրում, քանի վոր մենք գիտեյինք, թե յուրաքանչյուր զորադունդ Գերմանիայի վո՛ր մասումն է կազմվել: Այսպես, որինակ, մենք գիտեյինք, վոր 25-րդ հետևակ դունդը մտնում եր 8-րդ կորպուսի (15-րդ և 16-րդ դիվիզիաների) կազմի մեջ, և վոր 8-րդ կորպուսի ոկրուգը տեղադրված է Մերձհռենոսյան մարզում:

Յերբ մենք հանդիպում էինք 25-րդ զորադնդի մի դումարտակի, ապա առանց վորոնումների էլ գիտեյինք, վոր մնացած յերկու դումարտակներն էլ գտնվում են միևնույն շրջանում: Բրիտանական բանակում հարկավոր կլիներ հետախուզել յուրաքանչյուր առանձին դումարտակը, վորովհետև մի զորադնդի յերեք դումարտակները հաճախ մտնում էին յերեք բոլորովին տարբեր դիվիզիաների կազմի մեջ:

Մշտական բանակի կամ նախապատերազմյան դիվիզիաների (այն դիվիզիաների նման, վորոնց մասին յես նոր հիշատակեցի) կազմը մեզ հայտնի յեր պատերազմից առաջ, սակայն հենց պատերազմի սկզբին գերմանացիներն սկսեցին նոր դիվիզիաներ կազմել: Այդ պատճառով անհրաժեշտ եր լրացուցիչ ինֆորմացիա հավաքել կամ գերիներին հարցուփորձ անելու միջոցով կամ գաղտնի ծառայության գործակալների ողնությամբ: Այս միջոցով բրիտանական գլխավոր զորակայանն աստիճանաբար կազմեց «Շաղանակագույն գիրքը», վորտեղ ցույց եր տրված գերմանական բանակի յուրաքանչյուր դիվիզիայի կազմը:

Ունենալով այդ տեղեկությունները՝ պահանջվում եր միայն իմանալ վորոշ դոտում դասավորված մի վորևե հետևակ գնդի համարը, վորպեսզի հնարավոր լիներ յերևան հանել ամբողջ դիվիզիան: Մեզ համար հեշտ

եր հրահանգներ տալ «Ֆլանյորներին», թե նրանք ինչպիսի զորամասեր պետք է փնտռեին, վորովհետև գերմանական դիվիզիայի կազմակերպումը չափազանց հասարակ եր: Պատերազմի սկզբում գերմանական բանակային կորպուսը բաղկացած եր յերկու դիվիզիայից, յուրաքանչյուր դիվիզիան — չորս հետևակ գնդից, դաշտային հրետանու յերկու գնդից (վորոնք իրենց հերթին բաղկացած էին ինը թնդանոթային և յերեք հաուբիցային մարտկոցից), յերեք հեծելավաշտից, մեկ կամ յերկու սակրավոր վաշտից, կամրջային պարկից և պատգարակիր սանիտարների մեկ կամ յերկու վաշտից: Յուրաքանչյուր հետևակ գունդ բաղկացած եր յերեք դումարտակից և դաշտային հրետանու ամեն մի գունդը՝ յերկու կամ յերեք դիվիզիոնից, վորոնք, իրենց հերթին, կազմված էին յերկու կամ յերեք մարտկոցից՝ յուրաքանչյուրը վեց թնդանոթով: Դիվիզիայի ընդհանուր թիվը հավասար եր 20 հազար մարդու, բայց ժամանակի ընթացքում այդ թիվն աստիճանաբար ընկավ, մինչև վոր հասավ 12 հազարի, իսկ հետևակ դիվիզիայի կազմը պակասեց՝ չորսից իջնելով մինչև յերեք գնդի:

Բանիմաց, զործունյա «Ֆլանյորն» աշխատում եր սիստեմատիկորեն և չեր հանդստանում, մինչև վոր նրան չըհաջողվեր ճանաչել բոլոր զորամասերը: Մենք, մեր հերթին, ստացած տվյալները համեմատում էինք «Շաղանակագույն գրքի» հետ, վորը վոչ միայն վերահսկողություն եր ապահովում, այլև հաճախ հնարավորություն եր տալիս վորոշելու դիվիզիայի կազմի մեջ յերբեմն տեղի ունեցող փոփոխությունները: Մեր լայնածավալ կազմակերպության մեջ «Ֆլանյորների» զեկուցագրերը հավաքվում էին չարաթը յերկու անգամ, գրամեքենայով արտատպվում էին և այնուհետև հանձնվում մեզ՝ գնացքներին հետևող գործակալների զեկուցագրերի հետ միասին: Ռոտերդամում, հետևելով զանազան հանգուցակայանների վրայով կատարվող զորքերի յերթևեկությանը, մենք միաժամանակ ուսումնասիրում էինք «Ֆլանյորների» զեկուցագրերը և հաճախ կարողանում էինք հետևել դիվիզիային մինչև նրա հանդստյան գոտին և այնտեղ արդեն իմանալ նրա համարը:

ՀԵՏԱԽՈՒՅԶ ՍԵՆԱՏՈՐԸ

Ցես պետք է խոստովանեմ, որ մինչև բելգիական սոցիալիստական կուսակցության և նրա ղեկավարների հետ անձնական ծանոթություն ստեղծելս յես շատ աղոտ և ապջատված գաղափար ունեյի այդ կուսակցության մասին: Կուսակցությունը հաղարավոր հետևորդներ ուներ Բելգիայի վալլոնական մասում, բայց նրա հենարանը Ֆլանդրիան էր, գլխավորապես՝ Անտվերպենը: Դրա հետևանքով նույնիսկ բելգիացիները, ինչպես և յես, սոցիալիստներին չփոթում եյի ֆլամանդական ակտիվիստների — ռադիկալ խմբի հետ, որը ձգտում էր Ֆլանդրիան անջատել Բելգիայից: Նրանք մեծ դժվարություններ եյին ստեղծում սոցիալիստների և հայրենասիրաբար տրամադրված ֆլամանդացիների հոկայական մեծամասնության համար և պենք եյին դարձել գերմանացիների ձեռքում, որոնք աջակցում եյին այն ամենմի շարժմանը, որը նպաստում էր Բելգիայի ֆլամանդական և վալլոնական մասերի միջև պառակտում առաջացնելուն: Ֆլանդրիայի պաշտոնական լեզուն ֆրանսերենի փոխարեն ֆլամանդերենն էր հայտարարված: Գենտի համալսարանն ընդունեց ցայտուն կերպով աստահայտված ֆլամանդական բնույթ և սկսեց տպագրել գերմանացիների կողմից ղեկավարվող լայն չափով տարածված ֆլամանդական թերթ, որն անջատողական և պարտվողական գաղափարներ էր քարոզում: Ակտիվիստները փորձում եյին ստեղծել ֆլամանդական անկախ պետություն, իսկ գերմանացիները հույս ունեյին, որ ապստամբությունը մի շարք դժվարություններ կստեղծի Բելգիայի համար:

Հույս ունենալով սոցիալիստական կուսակցությունը դրավել նման աշխատանքի մեջ՝ գերմանացիները, անկասկած, փորձում եյին իրենց կողմը դրավել բելգիական սոցիալիստներին: Գերմանական իշխանությունները մատների

արանքով եյին նայում կամ աշխատում եյին չնկատել սոցիալիստների գործունեությունը, վորպիսին ծանր հանցագործություն կհամարեյին, յեթե այդ գործունեությունը հանդես բերվեր ավելի պահպանողականորեն տրամադրված բելգիացիների կողմից: Նրանք սոցիալիստական լիդերներին տալիս եյին մի շարք այնպիսի արտոնություններ, ինչպես, որինակ, ամբողջ յերկրում անսահմանափակ չափով յերթևեկելու իրավունք, վորոնցից չեյին ոգտվում մյուս բելգիացիները: Այդ իսկ պատճառով շատ բելգիացիներ, գլխավորապես վալլոնցիները և կաթոլիկական կուսակցության անդամները, սոցիալիստների վոխերիմ հակառակորդներն եյին և ամեն մի առիթ ոգտագործում եյին նրանց վորպես «գերմանոֆիլներ» վարկաբեկելու համար:

Բելգիական փախստականների պատմածների ազդեցությամբ յես սոցիալիստների դեմ եյի տրամադրված, բայց և այնպես համաձայնեցի հանդիպել Կարմիլլ Հյուիսմանսի հետ, որը համարվում էր «պացիֆիստ», և որը Վանդերվելդեյի հետ միասին սոցիալիստական կուսակցության ամենախոշոր լիդերներից մեկն էր: Նա հենց նոր էր վերադարձել Հավրից և մի ինչ-վոր պատճառով գտնվում էր Հոլլանդիայում:

Ցերը յես Հաագայում Հյուիսմանսին հանդիպեցի, նրան ուղեկցում էր Բելգիայից վերջերս յեկած ինչ-վոր մի մարդ, վորին նա ինձ ներկայացրեց վորպես սենատոր Կոլլո: Կոլլոն սենատոր էր յեղել պատերազմից առաջ, իսկ այժմ սոցիալիստական կուսակցության մեջ բարձր պաստ էր գրավում: Հյուիսմանսի հետ բանակցություններ վարելու նպատակով նա գերմանացիներից անցագիր էր ստացել յերեք որվա համար:

Ցերևակայեցեք իմ զարմանքը, յերբ Կոլլոն Հյուիսմանսի ներկայությամբ առաջարկեց Բելգիայում կազմակերպել գնացքներին հետևելու գործը, յեթե յես կկարողանամ ղեկուցագրերի հավաքումը կազմակերպել Անտվերպենում և Լյեժում: Նա ինձ հայտնեց, որ ինքը բելգիական բոլոր սոցիալիստական կոոպերատիվ ընկերությունների գլուխ է կանգնած և, դրա շնորհիվ, կարող ունի համա-

րյա բոլոր քաղաքներում ու ավաններում։ Ահագին նշանակություն ուներ և այն հանդամանքը, որ նա ամբողջ յերկրում ազատ յերթևեկելու թույլտվություն ուներ։ Այս տարիքավոր սենատորի անկեղծությունը վայրկենապես փարատեց իմ այն բոլոր կասկածները, որոնք առաջացել եյին սոցիալիստների մասին ունեցած իմ կանխակալ կարծիքի պատճառով։ Ցես հասկացա, որ այդ մի հիանալի առիթ եր, և կառչեցի դրանից։ Մենք պայմանավորվեցինք հաջորդ որը հանդիպել մի մասնավոր տան, որտեղ յես կարողանայի Կոլլոյին հրահանգներ տալ մեր պահանջելիք ինֆորմացիայի մասին և տալ նրան Անտվերպենի մի «փոստարկղի» հասցե, որին նա կարողանար իր զեկուցագրերը հանձնել։

Կոլլոյի հետ ունեցած վերջին տեսակցությունից հետո յես Անտվերպենից մի զեկուցագիր ստացա։ Անտվերպենի այն «փոստարկղը», որի անունն ու հասցեն հայտնել եյի Կոլլոյին, ձերբակալված եր, իսկ սենատորը Բելգիա պետք և վերադառնար։ Ցես միայն այն գիտեի, որ նրա անցագրի ժամկետը լրանում և հաջորդ որը և նա պետք և մեկներ վաղ առավոտյան գնացքով։ Մենք նրանից բաժանվեցինք ութ կամ ինը ժամ առաջ, և նա կարող եր գտնվել որևե տեղում Մաաստրիխտից մինչև Հաագա։

Ցերեկոյան ժամը տասնմեկն եր, և յես անմիջապես մեկնեցի Հաագա։ Մոտս ունեի այն տան հասցեն, որտեղ մի քանի ընկերների հետ ապրում եր Կամիլ Հյուիսմանսը։ Բարեբախտաբար, Ռոտտերդամը Հաագայի հետ միացնող ելեկտրական գնացքը դեռ յերթևեկում եր, և վեսգիշերին յես արդեն կանգնած եյի այդ տան դռան մոտ և ուժգին զանգահարում եյի։

Ցես իմացա, որ Կոլլոն դեռևս Հաագայումն է, և որ Հյուիսմանսը նրա հետ պետք է տեսակցեր առավոտյան ժամը յոթին։ Կոլլոյին հանձնելու համար յես նրան տվի Անտվերպենի մի նոր «փոստարկղի» հասցեն և խիստ դժկամությամբ հաղորդեցի նրան մեր գործակալի ձերբակալության լուրը։

Ցես սկսեցի լուրջ կերպով կասկածել, թե Կոլլոն կը-

կատարի՞ արդյոք այդ աշխատանքը։ Զգում եյի, որ նման լուր հաղորդելուց հետո շատ համարձակ մարդ պետք է լինել այդ ուղին շարունակելու համար։ Նա կատարում եր հասարակական ֆունկցիաներ, ուներ ընտանիք, մոտ վաթսուն տարեկան եր— մի տարիք, որի ժամանակ մարդկանց մեծ մասն ավելի շուտ խուսափում է արկածներից, քան որոնում այդպիսիները։

Սակայն յերկու շաբաթից հետո յես ստացա նրա առաջին զեկուցագիրը։ Զեկուցագիրը հաղորդում եր, որ Լյեժում նրա կազմակերպած չորս պոստերը հետևում են գնացքներին։ Այդ պոստերը գիշեր ու ցերեկ հետևում եյին գնացքներին և տալիս եյին Լյեժի—Բելգիայի այդ ամենակարևոր հանգուցային կայանի վրայով զորքերի փոխադրման մանրամասն պատկերը։

Գերմանիայից դեպի արևմտյան ճակատը, Վերդենի և Ծովի միջև, ընդամենը յերկու մեծ յերկաթուղային գծեր եյին աշխատում, մեկը Լյեժի, իսկ մյուսը՝ Լյուքսեմբուրգի հերցոգության վրայով։ Այդ չորս պոստերը, որոնք տեղեկություններ եյին հաղորդում Լյեժ—Բրյուսսել, Լյեժ—Նամյուր, Լյեժ—Վերվյե գծերով և Ուրտ գծով տեղի ունեցող բոլոր յերթևեկությունների մասին, դաշնակիցներին չափից ավելի կարևոր ինֆորմացիա եյին տալիս։ Այնուհետև Նամյուրում կազմակերպվեցին ևս չորս պոստեր, որոնք ընդգրկում եյին այդ հանդուցակետի վրայով՝ Նամյուր—Մոնս, Նամյուր—Առլոն, Նամյուր—Դինան և Նամյուր—Բրյուսսել գծերով տեղի ունեցող ամբողջ յերթևեկությունը։ Հաջորդ կենտրոնը Բրյուսսելն եր։ Այստեղ Կոլլոն կազմակերպեց չորս պոստ՝ Բրյուսսել—Գենտ, Բրյուսսել— Հալ, Բրյուսսել— Նամյուր և Բրյուսսել—Լուվեն գծերի վրա։ Այս բոլոր պոստերի, Լուվենում Բերգենի կազմակերպած պոստի և վորպես պահեստի ու վերահսկիչ պոստեր կազմակերպված մի քանի ուրիշ անկախ պոստերի շնորհիվ մենք վոչ միայն կարողանում եյինք հետևել դեպի Բելգիա և Բելգիայից դեպի Լյեժ կատարվող զորքերի ամեն մի տեղաշարժմանը, այլև Բրյուսսելի և Նամյուրի պոստերի ողնությամբ մենք կարող եյինք ասել, թե ճակա-

տէ դեպի վո՛ր տեղամասն են ուղևորվում զորքերը կամ ճակատի վո՛ր տեղամասից են գնում նրանք:

Գնդապետ Ոպպենհայմը դադարեց հետախուզության անդործունեությունից դանդաղելուց: Վերոհիշյալ փաստաթղթերին զորպես լրացում յես նրան ուղարկում եյի նաև Գերմանիայից ստացված զեկուցագրեր և գերմանական դասալիքների հարցաքննությունների արդյունքները,—վերջին ծառայությունը յես կազմակերպել եյի վերջերս:

Գործերի այսպիսի դրությունը տևեց վեց ամիս: Յեթե Կոլլոն չեր ավելացնում պոստերի թիվը, ապա դա մեր հանցանքն եր: Մենք զգուշություն եյինք քարոզում, զորովհետև նրա ղեկվարությամբ աշխատում եյին մոտ յերեսուն գործակալ, իսկ մենք գիտեյինք, զոր ամեն մի նոր պոստ ուժեղացնում եր հայտաբերվելու վտանգը: Մենք աշխատում եյինք Նամյուրում ստեղծել սեփական «փոստարկղ» մեր սեփական սուրհանդակով, զորը Նամյուրից զեկուցագրեր պիտի տաներ մինչև Վիզեյի մոտ յեղած սահմանը, և մտադրվել եյինք այդ կապը դնել նրա տրամադրության տակ՝ Մոնսի շրջանի բոլորովին անկախ կազմակերպության համար (Մոնսի շրջանից մենք պատրաստվում եյինք սոզոսկել դեպի Ֆրանսիայի օկուպացիայի յենթարկված հողամասը), յերբ հանկարծ նրա ամբողջ կազմակերպությունը տապալվեց:

Այդ հին պատմություն եր. սկզբում բռնվեց Անտվերպենի «փոստարկղը», իսկ հետո գերմանական դաղտնի զոստիկանությունը թակարդ լարեց զեկուցագրեր փոխադրող սուրհանդակին բռնելու համար: Մենք իմացանք, զոր այդ սուրհանդակը ինքը Կոլլոն եր:

Կոլլոն մահապատժի յենթարկվեց: Նա իր կյանքը պարտական է սոցիալիստների միջամտությանը: Վանդերվելդեն խնդրել եր չվեդական մինիստր-նախագահ՝ սոցիալիստ Բրանտինգին՝ դիմել Շայդեմանին. և գերմանացիները, հետևելով սոցիալիստների[1] հետ խաղ անելու իրենց

1) Խոսքը վերաբերում է, ի հարկե, «նորին մեծության սոցիալիստներին»։ (ԹՄԲ.)։

քաղաքականությանը, փոխեցին մահվան դատավճիռը և այն փոխարինեցին ցմահ բանտարկությամբ:

Հաշտություն կնքելուց հետո, յերբ յես հանդիպեցի Կոլլոյին Բրյուսսելում և հարցրի նրան, թե ինչու նա իրեն վարկաբեկում եր սուրհանդակի պարտականություններ կատարելով, նա առանց զորևե կեղծ հուզմունքի պատասխանեց, զոր այդ ամենավտանգավոր ֆունկցիան եր իր կազմակերպության մեջ և զոր այդ պատճառով նա ինքըն անձամբ եր կատարում այդ ֆունկցիան: Նա ավելացրեց, զոր յեթե ինքը բռնվելու լիներ, քիչ հավանականություն կար, զոր մատներ իր ընկերներին, զորովհետև գերմանացիները, սոցիալիստների հետ կապ ունենալու պատճառով, չեյին համարձակվի տանջանքների յենթարկել իրեն: Վերջապես, նա գտնում եր, զոր ամբողջ յերկրով մեկ յերթևեկելու թույլտվություն ունենալով՝ նա զորևե մի ուրիշից ավելի քիչ չափով կասկածներ կառաջացներ:

Ծերունու մատուցած ծառայությունների համար բելգիական թագավոր Ալբերտը նրան նշանակեց պետական քարտուղար, իսկ բրիտանական կառավարությունը պարգևատրեց Բրիտանական կայսրության շքանշանով:

Ինչ վերաբերում է զնացքներին հետևող ծառայությանը, ապա նա շարունակում եր գործել, զորովհետև մինչ այդ Կոլլոյի բոլոր պոստերը փոխարինված եյին նորերով:

ԿԱՊԻ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՅԵՎ ԿԵՂԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Սահմանն անցնելը մեզ համար ամենադժվար խնդիրն եր: Այդ միաժամանակ ամենավտանգավոր խնդիրն եր մեր գործակալների համար: Գերմանական դաղտնի զոստիկանությունն իր բոլոր ուժերը կենտրոնացնում եր սահմանամերձ զոտում: Ինչպես մենք, այնպես էլ նա գիտեր, զոր տեղեկությունները զոչ մի արժեք չունեն, քանի դեռ նրանք Հոլլանդիա չեն ընկել: Բելգիայի և Հոլլանդիայի միջև ըն-

կած սահմանը մյուս սահմաններից ավելի հեշտությամբ եր դիտողության ենթարկվում, վորովհետև իրենից ներկայացնում եր վոչ միայն մի վորոշակի գիծ, ուր կարելի յեր կենտրոնացնել դիտողությունը, այլ նաև այստեղ կարելի յեր ելեկտրալար դցել և ժամապահների մի խիստ շղթա կանգնեցնել, վորոնցից յուրաքանչյուրը կարող եր յերկու կողմից ել տեսնել իր ընկերներին:

Յես արդեն նկարագրել եմ ուղեկցողներին, բրակոնյորների (վորսդողերի) տիպի այդ խիզախ մարդկանց, վորոնք մութ գիշերով, ռետինե ձեռնոցներ և դուլպաներ հագած՝ անցնում եյին սահմանն այն պահին, յերբ ժամապահը գտնվում եր իր հսկողության հանձնված տեղամասի ամենահեռավոր ծայրում, և վորոնք վտանգավոր բոպեյին միշտ պատրաստ եյին ատրճանակ կամ դանակ գործադրելու:

Ամենաճարպիկ գործակալ-ուղեցույցը Շարլ Վիլլեկենսն եր, քսան հինգ տարեկան ուժեղ և մկանեղ մի յերիտասարդ: Նա Ֆլամանդացի յեր, ծնված Կամպլին քաղաքում: Այստեղ ապրում եյին այնպիսի մարդիկ, վորոնք խաղաղ ժամանակ լրացնում եյին հոլլանդական և բելգիական Լիմբուրգի միջև ընկած սահմանից ապրանքներ փոխադրող մաքսանենգների շարքերը:

Վիլլեկենսը յերեք տարի շարունակ ամիսը մի անգամ կանոնավորապես անցնում եր սահմանը և ապրում եր Եյնդհովենում, Հոլլանդիայում: Գերմանացիները շատ լավ իրազեկ եյին նրա գործունեությանը, վորովհետև նա քիչ թվով փախստականներ չեր փոխադրել Հոլլանդիա, իսկ այդ փախստականները միշտ չե, վոր բավական դաղտնապահ եյին մնում: Բայց գերմանացիներին չհաջողվեց նրան բռնել: Նա ոճաձկան նման անլուսին գիշերներին սողում եր սահմանի վրայով, իսկ հետո թփուտները և բազմաթիվ ընկերները թաղցնում եյին նրան գերմանական դաղտնի վոստիկանությունից:

Կային Կամպլինցի ուրիշ ֆլամանդական ուղեկցողներ ել, վորոնք ունեյին ամեն տեսակի մականուններ, ինչպես, որինակ՝ «Աղվես», «Պատլիկ» և այլն: Մենք յերբեմն ոգտագործում եյինք նրանց ծառայությունները, բայց յես բնավ չեյի վստահում նրանց: Նրանք ամենից առաջ ձգտում եյին հարստանալու, և յես գիտեյի, վոր նրանք վորպեսզի սահմանն անցկացնեն յերկու կամ յերեք այնպիսի փախստականների, վորոնք նրանց մարդադլուխ վճարեն 500-ից մինչև 1000 ֆրանկ, հենց դրա համար նրանք կարող եյին պատանդել մեր գործակալների կյանքը:

Վիլլեկենսն ուրիշ խառնվածքի տեր մարդ եր: Մեզ մոտ ծառայության մտնելով՝ նա հրաժարվեց փախստականներ փոխադրելուց: Սահմանն անցնելը նրա համար զվարճություն եր, այդ բանը հաճույք եր պատճառում նրան: Նա կարևոր դեր եր խաղում մեր աշխատանքում, վորովհետև մեր բոլոր լավագույն գործակալներին Բելգիա յեր հասցնում:

Զեկուցագրեր ուղարկելու գործում մենք հազվադեպ եյինք ոգտվում ուղեկցողների ծառայություններից, նրանց ոգնությանն եյինք դիմում միայն այն դեպքերում, յերբ ուրիշ վոչ մի միջոց չեյինք ունենում մեր տրամադրության տակ: Սահմանի վրայով կապ հաստատելու հիմնական մեթոդը լարի վրայից զեկուցագրեր փոխադրելն եր այն պահին, յերբ գերմանական ժամապահները թուլացնում եյին հսկողությունը: Այդ նպատակի համար սովորաբար ոգտագործում եյինք այն գյուղացիներին, վորոնք սահմանի յերկու կողմի վրա ել իրենց արտերն եյին մշակում: Նրանք իրավունք ունեյին լարի մոտերքը գտնվելու, ուստի և իրենց վրա չեյին հրավիրում ժամապահների ուշադրությունը: Այս յեղանակը հասարակ եր թվում, բայց իրականում շատ դժվար եր, վորովհետև գերմանական դաղտնի վոստիկանությունը լինում եր ամեն տեղ և շարունակ ըդդաստ ու արթուն եր: Դժվար եր նաև ստիպել բելգիական գյուղացուն, վոր նա հավատ ընծայի իր հոլլանդացի հարևանին, վորովհետև նա գիտեր, վոր յեթե ինքը բռնվի, կզնդակահարվի: Համենայն դեպս զեկուցագրեր փոխադրելու այս յեղանակն զգալի չափով ավելի լավ եր, քան գործակալների միջոցով սահմանի վրայից փոխադրելը, քա-

Նի վոր դա զիշերային բացարձակ մթություն չեր պահանջում և կարող եր իրականացվել կանոնավորապես։

Բացի այս յեղանակից, մենք ոգտագործում եյինք մի շարք ուրիշ յեղանակներ ևս, ինչպես, որինակ, մակույկավարներին, վորոնք մթերապաշար և ալյուր եյին տանում ամերիկյան և հոլլանդական բարեգործական կազմակերպություններին, յերթևեկում եյին Բելգիայի բազմաթիվ ջրանցքներով, թափանցելով նույնիսկ ֆրանսիական բրոնազրավված մարզերը։ Կապի այս յեղանակն անչափ արժեքավոր եր հեռու գտնվող կետերի, ինչպես որինակ՝ Կուրտրեյի հետ հարաբերություն ապահովելու համար։ Այդ յեղանակով մենք կապ եյինք պահպանում հավատարմատար անձնավորությունների հետ, վորոնց հասցեները մեզ տվել եյին փախստականները։ Հաճախ ստեղծվում եյին խոշոր կազմակերպություններ, վորոնք իրենց սեփական սուրհանդակներին ուղարկում եյին Բրյուսսելի և Անտվերպենի մեր «փոստարկղներին»։

1916 թվականի սկզբում մեզ վիճակվեց հույս դնել այդ մակույկավարների վրա՝ Անտվերպենի մեր «փոստարկղից» զեկուցագրեր ստանալու համար։ Անտվերպենի նավահանգստի տերը—մեր գործակալներից մեկը—զեկուցագրեր եր հավաքում և հանձնում այն մակույկավարներին, վորոնց նա վստահում եր։ Պատերազմի ժամանակ այդ մակույկավարները մեծ հերոսություն եյին հանդես բերում։ Նրանք վտանգի եյին յենթարկում իրենց կյանքը, ինչպես նաև իրենց մակույկները՝ ամբողջ ընտանիքի համար ապրուստ ճարելու այդ միակ միջոցը։ Նրանցից վոմանք բռնվեցին, վոմանց ել հաջողվել է հրաչքով ազատվել։ Մի անգամ նրանցից մեկը, հանկարծակի խուզարկության յենթարկվելով՝ միակ միջոցն եր համարել զեկուցագրերն այրել վերև բարձրացրած ձեռքերի մեջ։ Նրան ուշի-ուշով խուզարկել եյին, բայց զեկուցագրերը չեյին գտել։

Գնդակահարելու և սեփականությունից զրկելու սպառնալիքն ահարկու զենք եր գերմանացիների ձեռքին՝ մակույկավարների դեմ մղվող պայքարում։ Այդ բանը վոչ վոք այնքան ուժեղ չի զգացել, վորքան յես, յերբ հաշտություն կնքելուց հետո հանդիպեցի տիկին վան Եյկին և նրա փոքրիկներին։ Նրա դրությունը շատ ծանր եր, չնայած այն թոշակին, վոր նրան վճարում եր բրիտանական կառավարությունը։ Ցեռ խիստ հուզված եյի նրանց տխուր դեմքերը տեսնելով, քանի վոր նրանց զոհը իզուր եր յեղել։ Ընտանիքի հայրը գնդակահարվել եր այն ժամանակ, յերբ նրան բռնել եյին նվազ կարևոր մի զեկուցագիր ձեռքին, իսկ ընտանիքից խլել եյին մակույկը՝ նրա միակ սեփականությունը։

Փոստատար աղավնիները— այն առաջին միջոցը, վոր մարդու միտքն է գալիս կապ ստեղծելու համար,— հույսերը չեյին արդարացնում։ Մենք դրանք կիրառում եյինք շատ անչափ արդյունքներ ստանալով։ Այն, ինչ ամենադժվար եր թվում, իրականում ամենահեշտը դուրս յեկավ։ Սուրհանդակներն առանց վորևե դժվարության տեղ եյին հասցնում աղավնիներին։ Սակայն շատ դժվար բան եր զբաղանց Բելգիայում պահել՝ առանց գերմանացիների կասկածները կամ պնդերես հարևանների հետաքրքրությունն առաջացնելու։ Բացի դրանից, նույնիսկ բարեհաջող կերպով թռչելուց հետո թռչուններից շատերը կորչում եյին, հաճախ ել վոչնչացվում եյին գերմանացիների կողմից։

Պատերազմի առաջին տարիներին, յերբ բազմաթիվ բելգիացի կանայք և յերեխաներ թույլտվություն եյին ստանում չեզոք յերկրներ մեկնելու, զեկուցագրերը կարվում եյին նրանց հագուստների մեջ կամ դրվում եյին այն հատուկ պատիճների մեջ, վոր մենք տալիս եյինք մեր գործակալներին։ Սակայն 1916 թվականի մոտերքը գերմանացիները համարյա դադարեցրին յերկրից հեռանալու թույլտվություններ տալը, և այն սակավաթիվ բելգիացիները, վորոնց թույլ եր տրվում թողնել Բելգիան, այնքան խիստ եյին խուզարկվում, վոր հետույքի մկանների միջոցով պահվող պատիճներն անգամ միշտ գերմանացիների ձեռքն եյին ընկնում։

Սիմպատիկ թանաքով գրված նամակներ փոստով չեյինք ուղարկում։ Նախ՝ գերմանական գրաքննությունը նամակներն այնքան յերկար եր պահում, վոր նրանց մեջ

յեղած տեղեկությունները կորցնում էին ամենամի արժեք։ Յերկրորդ՝ ծածկագիրը յերևան բերելու համար բավական էր գործադրել հասարակ տաքացում և ամենապրիմիտիվ հայտաբերիչներ, վորոնցով մշակվում էին բազմաթիվ նամակներ։

Ֆրանկֆինյուլի այն յեղանակը, վոր գործակալը զեկուցագրերը թաղցնում էր Մասսարիխի տրամվայում, մենք չէինք կիրառում, վորովհետև Ֆրանկֆինյուլի կազմակերպությունների տապալումից հետո գերմանացիները կանոնեցնում էին սահմանը կտրող բոլոր գնացքներն ու տրամվայները և մարդկանց ստիպում էին անցնել այն ցանկապատը, վորի հետևում նրանց սպասում էին տրանսպորտի հոլանդական միջոցները։

Մենք փորձում էինք զեկուցագրերը գցել նետի միջոցով, բայց չորս թե հինգ զեկուցագիր բարեհաջող կերպով նետելուց հետո մեր գործակալը բռնվեց։ Այս միջոցը գերմանացիների անքուն հսկողության պայմաններում ոգտագործելու համար չափից ավելի աչքի զարնող միջոց էր, այդ պատճառով էլ նրանից ձեռք քաշեցինք։

Հենց նույն պատճառով էլ մենք յերբեք չէինք ոգտվում աղդանշանից, ինչ ձևով էլ վոր լիներ։

Ռադիոյի կիրառումը մեջտեղից վերացվեց, վորովհետև ռադիովորոշիչների (ռադիոպելենգատորների) միջոցով շատ հեշտ էր վորոշել ռադիոհաղորդիչ կայանի գտնված վայրը[1]։

Սահմանն անցնելուց հետո ոկուպացիայի յենթարկված տերիտորիայում իր նշանակությամբ հաջորդ գործակալը «փոստարկղն» էր։ Նա կապող ողակ էր հանդիսանում յերկրի ներսում աշխատող կազմակերպությունների և ուղեկցողներին զեկուցագրերը հանձնող սուրհանդակների միջև։

«Փոստարկղի» պարտականություն կատարող մարդիկ համարյա նույն վտանգին էին յենթարկվում, ինչ վոր ուղեկցողները։ Նրանք վոչ միայն ռիսկ էին անում հայտաբերվել իրենց անզգուշության հետևանքով, այլ նաև հրապարակվել թե ոկուպացիայի յենթարկված յերկրի ներքին կազմակերպության և թե դեպի սահման զեկուցագրեր տանող սուրհանդակների միջոցով։ Դեռ ավելին. յերկու սուրհանդակի տեղաշարժումը ինքըստինքյան վտանգի աղբյուր էր հանդիսանում, վորովհետև գերմանացիները միշտ կասկածով էին վերաբերվում տեղից տեղ փոխադրվող մարդկանց։

Անտվերպենում մեր «փոստարկղների» մեծ մասը փոքրը սրճարանատերերն էին, վորոնց թիվը մեծ էր քաղաքում։ Ոտաը մարդ կարող էր սրճարան մտնել՝ առանց կասկածներ առաջացնելու, իսկ այդ բանն առանձնապես կարեվոր էր այն դեպքում, յերբ «փոստարկղը» կապված էր վորպես սուրհանդակ աշխատող մակուլիավարների հետ, վորովհետև մակուլիավարները շարունակ գերմանացիների կասկածն էին արթնացնում և նրանց հաճախ հետապնդում էին։

«Փոստարկղի» դրությունն առանձնապես վտանգավոր էր նաև այն պատճառով, վոր նա չէր կարող թաղցնել իր անձնավորությունը յերկու սուրհանդակներից էլ։ Վերջիններս կարող էին աշխատել մտացածին անուններով և չտալ իրենց հասցեները, մինչդեռ «փոստարկղի» համար այդ անհնարին էր։ Այնուհետև, գնացքներին հետևող նոր բջիջ կազմակերպելիս մենք յերբեմն հարկադրված էինք լինում դրել «փոստարկղի» անունն ու հասցեն՝ ոկուպացիայի յենթարկված տերիտորիային հանձնելու համար։ Այսպես վարվելով՝ մենք ստիպված խախտում էինք գաղտնի ծառայության հիմնական սկզբունքներից մեկը, այն է՝ անուններն ու հասցեները յերբեք չգրել նամակների մեջ, վորոնք կարող են բռնվել հակառակորդի կողմից։

«Փոստարկղները» սուրհանդակներին աղդանշան էին տալիս այն մասին, վոր ճանապարհն ազատ է։ Այս դեպքում անհրաժեշտ էր հետևել, վոր հարևանների կամ գերմանական գաղտնի վոստիկանության ուշադրությունը չգրավվի։ Յես միշտ աշխատում էի «փոստարկղներին»

[1]) Անհրաժեշտ է ավելացնել, վոր այդ ժամանակ պորտատիվ ռադիոկայաններ չկային և, հետևաբար, նրանց քողարկումն անհաղթահարելի դժվարություններ էր ներկայացնում։ (ՄՄԲ.)։

նեբջնչել ազդանշաններ տալու ժամանակ առավելագույն ընականություն յերևան բերելու անհրաժեշտությունը. որինակ, յեթե ճանապարհն ազատ եր, ապա այնպիսի մի առարկա, ինչպիսին և ծաղկամանը, շարունակ պետք և դրված լիներ լուսամուտի վրա և այնտեղից հեռացվեր միայն վտանգի դեպքում, կամ թե պատուհանի փեղկերը միշտ վորոշակի դիրքում պետք և թողնվեյին: Այս անհամեմատ ավելի լավ եր, քան հատուկ ազդանշան տալն այն որերին, յերբ սուրհանդակի գալուն եյին սպասում: Յես դիտեմ, վոր մեր «փոստարկղներից» մեկը բռնվեց այն պատճառով, վոր ծաղիկները լուսամուտի վրա յեր դնում ամեն յերեքշաբթի և ուրբաթ որերին, այսինքն, այն որերին, յերբ սուրհանդակը հավաքում եր զեկուցագրերը. այդ բանը նկատեց գերմանական հակահետախուզական գործակալներից մեկը:

Նմանորինակ ազդանշանները բացարձակապես անհրաժեշտ եյին, վորովհետև «փոստարկղը» և դեպի սահման գնացող սուրհանդակը միշտ առաջին հերթին եյին բռնվում: Յեթե «փոստարկղին» անծանոթ, ներքին գոտուց յեկած սուրհանդակը ժամանակին նախազգուշացվեր վտանգի դեմ, ապա այդ դեպքում կարելի յեր փրկել ամբողջ կազմակերպությունը:

Բացի անմիջապես տներ կամ սրճարաններ այցելելուց և զեկուցագրեր հանձնելուց կամ ընդունելուց, մենք փորձում եյինք կապի մի շարք ուրիշ միջոցներ ևս: Բաց լուսամուտից զեկուցագրեր դցելու յեղանակը մենք հաջողությամբ ոգտագործում եյինք այն դեպքում, յերբ տներն այնպիսի դիրք եյին ունենում, վոր դա կասկածներ չի արթնացնի: Այս յեղանակի միակ առավելությունն այն եր, վոր այդ թույլ եր տալիս խուսափել «փոստարկղի» և սուրհանդակի անմիջական շփումից:

Անձնական տեսակցություններն անհաջող դուրս յեկան: Դրանք հիմնվում եյին այն բանի վրա, վոր յերկու անծանոթ մարդիկ վորոշակի որերին և ժամերին պետք է հանդիպեյին սրճարանում կամ վորևե մի այլ տեղ, ինչպես, որինակ, փողոցում: Մի անգամ մենք ամբողջ յերկու շաբաթով կորցրինք մի կարևոր կազմակերպության հետ ունեցած կապը սոսկ այն պատճառով, վոր սուրհանդակները վոչ մի կերպ չեյին կարող իրար հանդիպել, վորովհետև յուրաքանչյուր տեսակցության համար տարբեր ժամանակ և հանդիպման տարբեր վայր եյին նշանակվում: Սակայն գլխավոր դժվարությունն այն եր, վոր անհրաժեշտությունից դրդված՝ սուրհանդակներն ստիպված եյին կորել վորոշ տարածություն, յերբեմն մինչև հիսուն մղոն, և վորովհետև նրանց շարունակ վիճակված եր լինում մի շարք նախազգուշական միջոցներ ձեռք առնել, ուստի անհնար եր լինում ճշտորեն վորոշել հանդիպման ժամանակը:

Մենք միայն մի դեպքում եյինք ոգտագործում անխոս «փոստարկղը», այսինքն՝ մի ծածուկ տեղ, ուր սուրհանդակներից մեկը թողնում եր զեկուցագրերը, իսկ մյուսը դուրս եր հանում: Այդ սուրհանդակներն իրար չեյին ճանաչում և դեպի միևնույն կետն եյին ուղևորվում յերկու հակադիր ուղղություններից: Այս յեղանակի անհարմարությունն այն եր, վոր մի վորևե յերեխա կամ անցորդ կարող եր պատահմամբ գտնել զեկուցագրերը կամ նկատել, թե յերբ եյին այնտեղ թողնում զեկուցագրերը: Մեր գործակալներից մեկը հավաքագրեց յերկու սուրհանդակի. մեկը Ողենարից (°), մյուսը՝ Բրյուսսելից: Նրանցից յուրաքանչյուրին զատ-զատ նա հին և կիսաքանդ տան պատի մեջ ցույց տվեց մի կղմինդր, վորը հեշտությամբ դուրս եր հանվում պատից և վորի հետևում կարելի յեր զեկուցագրեր թաղցնել: Այդ թաղստոցը մենք ոգտագործեցինք տասնութ ամիս շարունակ, մինչև այն ժամանակ, յերբ հաշտություն կնքվեց: Թեև այդ շատ հարմար եր, բայց և այնպես միայն անհրաժեշտությունն եր ստիպում մեր գործակալներին դիմել այդ յեղանակին: Վորոշ ժամանակի ընթացքում նա ինքն եր խաղում «փոստարկղի» դերն այդ սուրհանդակների համար, բայց հետո, յերբ ընտանեկան հանգամանքներից ստիպված տեղափոխվեց Լյեժ, նա հարկադրվեց դիմել պատի թաղստոցին,

վորովհետև տվյալ վայրում չեր ճանաչում այնպիսի մեկին, վորին նա կարողանար հանձնել իր ֆունկցիաները:

Այդ մասին յես իմացա միայն հաշտությունն կնքելուց հետո: Եթե այդ ինձ հայտնի լիներ առաջ, ապա յես շատ պիտի հուզվեյի, վորովհետև Ողենարից զեկուցագրերը հանդրվանային ռայոնից և հանգստյան գոտուց եյին ուղարկվում և շատ կարևոր զեկուցագրեր եյին, իսկ մի կողմինդրից սարքված քողարկումը շատ թույլ պաշտպանություն եր քանդվող պատում չինված թաղատոցի համար:

Յես անհրաժեշտ եմ համարում հիշատակել Հեսսելտ անունով մի հոլլանդացու մասին, վորը Ռոտտերդամում տպարանատեր եր: Նա այնքան փորձված փորագրիչ եր, վոր գերմանական ամենաբարդ անձնական քարտեր, անցագրեր, զինվորական ծառայությունից արձակվելու վերաբերյալ վկայականներ և վորևե ուրիշ փաստաթղթեր կեղծելը նրա համար վոչ մի դժվարություն չեր ներկայացնում: Նա կարող եր կեղծել ամեն մի փաստաթուղթ կամ կնիք, իսկ ստորագրություններ և ռետինե կնիքներ փորագրելը նրա հատուկ մասնագիտությունն եր: Բելգիական անձնական քարտեր կեղծելը նրա համար հասարակ գործ եր: Գերմանական յուրաքանչյուր պարետություն (իսկ Բելգիայում դրանց թիվը շատ եր՝ ամեն մի մեծ քաղաքում և նրա շրջակայքում մեկական պարետություն) ուներ իր հատուկ անձնական քարտերը: Նրանց բոլորի համար էլ միատեսակ ձև եր սահմանված, բայց յուրաքանչյուր պարետության մեջ թուղթը և կնիքը տարբեր եյին: Սակայն Հեսսելտին հաջողվում եր ճիշտ նույնությամբ կեղծել զանազան տպարանների գործածած խավաքարտի վորակը և գույնը, թեև վորոշ դեպքերում նա ստիպված եր մատերիալը պատվիրել Անգլիայում: Այդ քարտերը, վոր իր մոտ պետք է ունենար ամեն մի բելգիացի, շաղանակագույն բարակ խավաքարտից եյին պատրաստվում և ունեյին հինգ առ չորս դյույմ մեծություն: Քարտի մի յերեսին գրվում եր նրա տիրոջ արտաքինի նկարագրությունը, լուսանկարը կնիքով միասին և վոստիկանապետի ստորագրությունը, իսկ մյուս յերեսին՝ պարետության մեջ կատարված յուրաքանչյուր ռեգիստրացիայի թվականը:

Զինված լինելով ռետինե ձեռնոցներով, անձնական քարտերով և ստորագրություններով՝ Բելգիայի յուրաքանչյուր պարետության կամ ոկրուգի համար, մենք կարող եյինք անհրաժեշտ փաստաթղթեր մատակարարել ոկուպացիայի յենթարկված տերիտորիա ուղարկվող մեր գործակալներին: Նման փաստաթղթեր ունեցողներին բռնելու միակ հնարավորությունը այդ փաստաթղթերը գերմանական ռեգիստրացիոն ցուցակների հետ համեմատելն եր, ցուցակներ, վորտեղ նշանակվում եյին բոլոր քաղաքացիների ներկայանալու թվականները: Ոկրուգների մեծ մասում ներկայանալը տեղի յեր ունենում ամիսը մի անգամ: Ներկայանալու այդ թվականները մենք գրոշմում եյինք ռեգիստրացիոն քարտի հակառակ կողմի վրա, բայց մենք, հասկանալի յե, չեյինք կարող կեղծել պարետության ցուցակները: Բելգիացիները պարտավոր եյին իրենց մոտ ունենալ անձնական քարտեր և ներկայացնել դրանք առաջին խնդրանքի դեպքում: Մեր քարտերը միշտ դիմանում եյին այս տեսակ պատահական ստուգման:

Անձնական կեղծ քարտի առկայությունը կարող եր կամ փրկել կամ կործանել այն ներկայացնողին: Քարտը հասարակ յեղանակով ներկայացնելը սովորաբար բավական եր գերմանացիներին գոհացնելու համար, յերբ նրանք պարբերաբար շրջում եյին յերկաթուղային կայարաններում կամ ուրիշ հասարակական վայրերում: Սակայն քարտն ամենավտանգավոր փաստաթուղթն եր դառնում այն ժամանակ, յերբ նրա տիրոջը վոստիկանական պոստն եյին տանում ստուգման համար, վորովհետև առաջին քայլը միշտ ռեգիստրացիոն թվականների համեմատությունն եր լինում: Եթե գործակալին անխուսափելի ձերբակալություն եր սպառնում, ապա նրա առաջին գործն եր լինում ազատվել իր քարտից: Եթե այդ նրան չհաջողվեր, ապա նրա միակ փրկությունը փախչելն եր՝ վոստիկանական պոստ հասնելուց առաջ: Մեր գործակալներից մեկը, վոր ձերբակալված եր մի ինչ-վոր աննշան արարքի համար, մեծ ռիս-

կով փախուստ եր կատարել դուրս ցատկելով յերկրորդ հարկի պատուհանից:

Նա թաղնվել եր այնքան ժամանակ, մինչև վոր մենք կարողացանք նրան ուղարկել Լյեժի անձնական քարտ, վորպիսին նրան հնարավորություն տվեց տեղափոխվելու այդ քաղաքը: Այնուհետև Վիլլեկենսը նրան Հոլլանդիա ուղարկեց: Հրապարակված գործակալներից չատերն իրենց կյանքը պարտական են այս խիզախ մարդուն:

Գերմանական դասալիքներին և ուրիշ գործակալների Գերմանիա ուղարկելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բացի արձակուրդավորների փաստաթղթերից, նշանակալի չափով ավելի բարդ եյին: Սկզբում աշխատում եյինք այդ փաստաթղթերը վերցնել գերմանական բոլոր դասալիքներից և մեր ձեռքի տակով անցնող ուրիշ գերմանացիներից և այդպիսով աստիճանաբար հավաքեցինք փաստաթղթերի մի հիմնավոր պաշար: Յերբ մեզ պետք եր լինում փաստաթղթեր ձեռք բերել, լուսանկարներ փոխարինել, նոր լուսանկարների վրա համապատասխան կնիք դնել, անուններ փոխել և նշանները վերդրել, մենք հատուկ միջոցով անհետ ջնջում եյինք նախկին դրանցումները և դրում եյինք այն, ինչ անհրաժեշտ եր: Զարմանալի յե, թե մասնագետի համար վորքան հեշտ է իսկական փաստաթուղթ կեղծելը: Գերմանացիները բազմաթիվ լուսանկարներ եյին պահում չեզոք յերկրներից յեկած անձնավորությունների իսկական անցագրերից և դրանք փոխարինում եյին իրենց հետախույզների լուսանկարներով: Այդ արարողությունը նշանակալի չափով ավելի պարզ եր, քան նոր անցագրեր և այլ փաստաթղթեր պատրաստելը, վորովհետև կան բազմաթիվ մանր դետալներ, վորոնք կարող են վրիպել փորագրողի ուշադրությունից: Գերմանական մի հետախույզ ընկավ այն պատճառով, վոր իր ամերիկական անցագրի վրա արծվի ճիրաններից մեկը չկար:

Պետք է խոստովանեմ, վոր աշխատանքի սկզբում մեծ յերկյուղով եյի վստահում չեզոք յերկրահպատակին մեր գործակալներին անհրաժեշտ փաստաթղթեր հայթայթելու գաղտնի աշխատանքը, բայց ժամանակի ընթացքում յես սկսեցի ամբողջովին վստահել նրան: Ավելի քան յերկու տարի Հեսսելտը յեռանդով պահում եր մեր գաղտնիքները և աշխատանքում հանդես եր բերում մի այնպիսի խանդավառություն, վորպիսին կարող եր համեմատվել միայն նրա զարմանալի հմտության հետ:

ՏԱՍՆԶՈՐՍ ՏԱՐԵԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶ ԱՂՋԻԿԸ

Բելգիական–հոլլանդական սահմանը պաշտպանելու պարտականությունը դրված եր լանդշտուրմի վրա: Ռազմաճակատում իսկական ծառայության համար չափազանց մեծահասակ այդ զինվորներն ընդունակ եյին պաշտպանելու սահմանը: Նրանցից պահանջվում եր միայն արթուն լինել և հետևել, վոր վոչ մի հարաբերություն տեղի չունենա Բելգիայի և Հոլլանդիայի բնակիչների միջև, և վորովհետև այդ պարտականությունները դժվար չեյին, ուստի հերթափոխությունների կարիք չեր լինում, այնպես վոր հենց նույն լանդշտուրմիստներն ամիսներով մնում եյին միևնույն տեղամասում: Հրաման եր տրված բռնել նրան, ով կնկատի հոլլանդական տերիտորիային վորևե բան հանձնելու մեջ և կրակ բաց անել այն մարդկանց վրա, վորոնք կփորձեն անցնել Բելգիայի և Հոլլանդիայի սահմանը: Բելգիան Հոլլանդիայից մեկուսացնելու գործում լանդշտուրմիստներին ոգնության եյին գալիս բարձր լարվածության էլեկտրահոսանք ունեցող լարը և քաղաքացիական հագուստներ հագած գերմանական գաղտնի վոստիկանությունը, վոր հսկում եր լարի յերկու կողմերի վրա տարածված հողամասերի վրա:

Ծերունի Ֆրիցը— դոնե նրան այդպես եր անվանում սահմանի մեր գործակալը— խաղաղասեր մարդ եր, վորը սանն եր թողել կնոջը և յերեխաներին: Նա կարոտում եր իր ընտանիքին, և նրան դուր եր գալիս յերեխաների հասարակությունը, վորոնք յերբեմն գալիս եյին խաղալու էլեկտրալարի մոտ: Ֆրիցն առանձնապես սիրեց Մարի անունով տասնչորս տարեկան մի աղջկա: Նա նրան հիշեց-

նում էր իր փոքր աղջկան, վորին Ֆրիցը մի տարուց ավելի չէր տեսել:

Մեր գործակալը, վոր նույնպես զելցետեցի յեր, բայց գրավված տերիտորիայից փախել էր հարևան հոլանդական գյուղը, լավ էր ճանաչում Մարիին: Նրա համար դժվար չէր յերեխայի ուշադրությունը գրավել և նշաններով ցույց տալ, վոր Մարին ծերունի Ֆրիցից պետք է թույլտվություն խնդրի իր հետ խոսելու: Այդ բանը խստիվ արգելված էր, բայց ծերունի Ֆրիցը փափկասիրտ էր: Յերեխան չէր կարող վտանգավոր լինել: Մեր գործակալն իր մոտ ուներ մի մեծ կտոր ապուխտ, վորը նա տվեց Մարիին, պատվիրելով նրան՝ կիսել լանդշտուրմիստի հետ: Ծերունի Ֆրիցի համար այդ մի համեղ ուտելիք էր, վորպիսին նա վաղուց չէր տեսել:

Շաբաթը յերկու անգամ մեր գործակալը մոտենում էր սահմանին: Նա ընտրում էր այնպիսի ժամանակ, յերբ վոչ վոք չէր յերևում, նույնիսկ գաղտնի վոստիկանության գործակալներն էլ չեյին լինում: Ֆրիցին դա ավելի շուտ խելացի յեր թվում, քան կասկածելի. նա ինքն ատում էր քաղաքացիական հագուստ հագած այդ մարդկանց, վորովհետև զգում էր, վոր նրանք իրեն էլ են հետևում ճիշտ այնպես, ինչպես և հակառակորդին: Ֆրիցը վոչ մի վատ բան չէր տեսնում Մարիի բերած չոկոլադը կամ ուրիշ ուտելիքները միասին վայելելու մեջ: Առատաձեռն բարեկամն ապրում էր Հոլանդիայում, վորտեղ ամեն ինչ առատ էր, և նա գիտեր, թե վորքան դժվար էր ապրել Բելգիայում: Ֆրիցը լիովին բնական էր համարում այն յերևույթը, վոր այդ մարդը ուտելիք էր բերում յերեխային:

Մեր գործակալի նպատակն էր՝ ձեռք բերել ծերունի Ֆրիցի վստահությունը և ոգտվել Մարիի ցույց տված ոգնությունից՝ հարևան Վաչտերեկե գյուղակում գտնվող իր ընկերոջը նամակներ հանձնելու համար: Նա ուզում էր շաբաթը մի անգամ զեկուցագրեր ստանալ Վաչտերեկե-Մերբեկե-Լոկերեն շրջանում տեղավորված զորամասերի համարների մասին. այդ ռայոնում չարունակ հանդստանում էր մի վորևե դիվիզիա:

Ծերունի Ֆրիցն այնքան էր վստահում Մարիին և այնքան ցանկալի դարձան արտասահմանից ստացվող համեղ ուտելիքները, վոր վերջիվերջո նա Մարիի գործակիցը դարձավ և հետևում էր դաղտնի վոստիկանության գործակալների յերևալուն, մինչև վոր Մարին չտապ կերպով վերցներ ծրարը և մի քանի խոսք փոխանակեր նախկին հարևանի հետ: Մեր գործակալի համար դժվար չէր Մարիին համոզել, վոր անհրաժեշտ է նրա ոգնությունը, և վոր հարկավոր է դաղտնի պահել նրա գործողությունները: Հողը պատրաստված էր, և կարելի յեր ձեռնարկել աշխատանքի: Շոկոլադի ծրարում դրված էր Վաչտերեկեյի ընկերոջը հանձնվելիք նամակը: Մարին ճարպկորեն ծրարը թաղցնում էր իր հագուստի մեջ:

Վաչտերեկեցի յերիտասարդն ընդունեց առաջարկությունը և դարձավ մեր № 78 գործակալը: Նա բանիմաց մարդ էր և իսկույն ըմբռնում էր այն, ինչ վոր մենք նրանից պահանջում եյինք: Նա հավաքագրեց ևս վեց մարդ և թափանցեց մինչև Գենտ, վորի շրջանում միշտ հանդստանում եյին մեկ կամ յերկու դիվիզիա:

Գնդապետ Ռպպենհայմը շատ էր ուրախանում այդ զեկուցագրերի համար, վորովհետև Գենտի և Վաչտերեկեյի ռայոնները, լինելով ռազմաճակատից ամենահեռավոր հանդստյան գոտիներ, չարունակ զբաղված եյին ծանր կորուստներ կրած դիվիզիաներով կամ այն դիվիզիաներով, վորոնք յեկած եյին լինում ռուսական ճակատից կամ արևմտյան ճակատի վորևե հեռավոր հատվածից, ինչպես, օրինակ, Վերդենից կամ Արգոննից: Նրանք յերկար ժամանակ եյին մնում այս գոտում, վորպեսզի վերակազմվեն կամ համալրվեն: Այսպիսի դիվիզիաներին ճանաչելը սովորաբար Գլխավոր զորակայանի գովասանական հեռագրին էր արժանանում: Ցես հիշում եմ այն խանդավառությունը, վոր առաջ բերեց Վաչտերեկեյի ռայոնում գտնվող դիվիզիայի ճանաչումը, այն դիվիզիայի, վոր վերջին անգամ նկատվել էր ռումինական ճակատում:

№ 78–ը և նրա գործակալները երկու տարի շարունակ անդուլ դիտողություն էին կատարում։ Նրանք յերեմն նույնիսկ մտնում էին ավելի հեռավոր գոտի՝ Տիլտա։ Մարին այնքան ճարպկությամբ եր տանում գործը, վոր ամբողջ ժամանակ չեր յեղել մի դեպք, վոր նրա հանձնած զեկուցագրերը պայմանավորված որերին մեր ձեռքը չընկնեին։ Ժամանակի ընթացքում Մարին ինքը դարձավ գործակալ–«Ֆլանյոր»։ Զելցետե գյուղի շրջանն ընդգրկող նրա զեկուցագրերը նույնքան բարեխիղճ էին, վորքան նրանից տարիքով շատ ավելի մեծ մարդկանց զեկուցագրերը։ Սկզբում նրա զեկուցագրերը գրվում էին այն չորի վրա, վորի մեջ նա փաթաթում եր № 78–ի զեկուցագրերը, բայց հետագայում, յերբ նրա տեղեկությունները ծավալով ավելացան, նա սկսեց ողտագործել սովորական բարակ գործվածքը, վոր գործածվում եր կանոնավոր գործակալների կողմից։

Մարին արդեն 16 տարեկան եր, և այդ յերիտասարդ աղջիկը իր խորամանկությամբ գերազանցում եր Ծերունի Ֆրիցին և, վոր նշանակալից չափով ավելի դժվար եր, քաղաքացու տարազով ամենուրեք շրջող գործակալներին։ Բայց ամեն մի գործակալ ունի կյանքի իր ժամկետը—մի ճշմարտություն, վոր բազմիցս հաստատվել է փաստերով։ Ցավ ահա Մարին էլ, թեև նա ավելի յերկար է աշխատել, քան մեր գործակալներից վորևե մեկը, վերջիվերջո ծուլակն ընկավ։ Այդ նրա հանցանքով չեր, վոր տեղի ունեցավ։ Նա չգիտեր, վոր Զելցետեյի հատվածին կցված՝ քաղաքացու հագուստով մարդիկ ոգնական են ստացել, և վոր, յերբ ծանոթ գործակալը անհետացավ, նրան, ըստ յերևույթին, գործողությունների ազատություն տալով, հենց նոր ժամանած մի ուրիշ գործակալ չարունակեց նրան հետևել հարևան տան լուսամուտից։

Դժբախտաբար գործակալը նրա վրա ավելի շուտ հարձակվեց, քան Մարին կարողացավ ազատվել իր զեկուցագրերից։ Նա բռնվեց հենց հանցանքի վայրում։ Ռազմական դատարանը նրան դատապարտեց մահապատժի։ Սակայն առանց մեծ հարկադրման գերմանական իշխանությունները, նկատի ունենալով Մարիի տարիքը, մահվան պատիժը փոխարինեցին բանտարկությամբ մինչև պատերազմի վերջը։

Ծերունի Ֆրիցը սահմանից անհետացավ։ Ցես յենթադրում եմ, վոր նրա պատիժը սահմանափակվել է ճակատ մոտ ավելի ծանր աշխատանքի փոխադրելով։

ԴԱՍԱԼԻՔՆԵՐԸ ՎՈՐՊԵՍ ԱՐԾԵՔԱՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐ

Ժամանակ առ ժամանակ գերմանական դասալիքներն անցնում էին սահմանը դեպի Հոլլանդիա։ Մեր սահմանային գործակալները հաղորդում էին այդ մասին և հոլլանդական թերթերը նույնպես յերբեմն հիշատակում էին այդ դեպքերը։ Սակայն յես այնքան էի զբաղված Բելգիայի մեր ծառայության կազմակերպության գործով, վոր սկզբից չկարողացա բավականաչափ ուշադրություն նվիրել դրան։ Բացի այդ, յես ինչպե՞ս կարող էի կապ հաստատել նրանց հետ։ Ցես չէի կարող հրապարակ հանել մեր սահմանային գործակալներին՝ ստիպելով նրանց ինձ մոտ բերել դասալիքներին գերմանական տարազով։

Մի անգամ, փողոցով անցնելիս, յես պատահեցի յերկու դասալիքների։ Նրանց պատառոտած հագուստները և հյուծված դեմքերը ցույց էին տալիս, վոր նրանք ծայրաստիճանին են հասել, թափառելով քաղաքում, վախենալով, վոր հոլլանդական իշխանությունները կբռնեն նրանց վորպես թափառաշրջիկների և կուղարկեն Այկմարի համակենտրոնացման ճամբարը։

Ցես մոտեցա նրանց և առաջարկեցի դալ իմ ծառայության չենքը։ Ցես չէի վախենում ինձ յերևան հանելուց։ Այժմ թե՛ գերմանացիները և թե՛ հոլլանդացիները գիտեին, թե ինչ եմ անում յես։ Առաջիններն անուժ էին իմ գործունեությունը խանգարելու, իսկ յերկրորդները հե-

տեվում էին իմ զորքերին չմիջամտելու քաղաքականությանը:

Տալով յուրաքանչյուրին վոչ այնքան մեծ գումար, վորը նրանց հնարավորություն եր տալիս պատշաճ տեսք ընդունելու և աշխատանք փնտռելու, յես ստացա բոլոր տեղեկություններն իրենց զնդի և դիվիզիայի, ինչպես նաև այն վայրի մասին, վորտեղ դիվիզիան դտնվելիս է յեղել այն որը, յերբ նրանք դասալքել են: Գնդապետ Ոպպենհայմը հիացավ այդ ինֆորմացիայով:

Մեծ թվով դասալիքներ ներդրավելու նպատակով յես իմ կողմից հարցուփորձի յենթարկված դասալիքներին վարձատրություն առաջարկեցի այն յուրաքանչյուր նոր յեկածի համար, վոր նրանք կուղարկեն ինձ մոտ: Իմ պը-լանը շատ իրական դուրս յեկավ: Այսպես թե այնպես, սահմանն անցած ամեն մի զինվոր հանդիպում եր իր ընկերներին, վորոնք նրան ինձ մոտ եյին ուղարկում: Յես վստահ եմ, վոր շատ քչերն եյին մնում, վորոնց յես չկարողանայի տեսնել:

Այդ մարդկանց մեծ մասը փախչում եր գնացքից՝ արձակուրդից դեպի ռազմաճակատ վերադառնալու ժամանակ: Հերբեստալ-Լյեժ գիծն անցնում եր հոլլանդական սահմանի կողքով, և յես կարծում եմ, թե դայթակղությունը չափից ավելի մեծ նշանակություն կունենար այդ վողորմելի մարդկանցից մի քանիսի համար: Նրանք ինձ համար մեծ հետաքրքրություն եյին ներկայացնում, վորովհետև մեզ շատ կարևոր եր իմանալ, թե ռազմաճակատի բոլոր տեղամասերը վո՛ր դիվիզիաներով են զբաղեցված: Սակայն ամենաարժեքավոր տեղեկությունները տալիս եյին այն դասալիքները, վորոնք փախչում եյին իրենց դիվիզիաներին արևելքից արևմուտք կամ հետադարձ ուղղությամբ փոխադրող գնացքներից: Գնացքներին հետևող զորձակալները մեզ տեղեկացնում եյին զինվորական փոխադրությունների մասին, բայց վորովհետև գերմանական զորքերը դադարել եյին զորադնդերի համարները կրելուց, այդ պատճառով էլ նրանք չեյին կարող ճանաչել դիվիզիաները:

Հիշում եմ, թե վորքան զոհ մնաց գնդապետ Ոպպենհայմը, յերբ Լյեժի վրայով դեպի արևելք ուղևորվող յերկու դիվիզիայի անցնելու մասին մեր պոստերից տեղեկություններ ստանալուց հետո, յես նրան զեկուցեցի, թե յերկու դասալիքներին հարցուփորձ անելուց յես իմացա, վոր դա 8-րդ կորպուսն է յեղել: Յերկու շաբաթից հետո նա ինձ ուղարկեց Գլխավոր զորակայանի հեռագրի պատճենը.

«Շնորհավորում ենք, 8-րդ կորպուսը լինելը հաստատված է ռուսական ճակատում գտնվող գերիների միջոցով»:

Մերթ ընդ մերթ ստացվող այսպիսի հեռագրերը վառ եյին պահում մեր մեջ բուռն խանդավառությունը:

Յերբեմն մի վորևե դասալիք փորձում եր սուտ ինֆորմացիա տալ ինձ, իսկ յերբեմն էլ Հոլլանդիայի գերմանական դաղտնի ծառայությունը դիտմամբ ինձ մոտ եր ուղարկում կեղծ դասալիքների: Սակայն, զինված լինելով արևելյան և արևմտյան ճակատների մանրամասն քարտեղներով, վորոնց վրա ռազմագերիներից ստացված տրվյալի համաձայն նշանակված եր գերմանական յուրաքանչյուր դիվիզիայի վերջին դասավորությունը ռազմաճակատում, և մեր տրամադրության տակ ունենալով «Շագանակագույն գիրքը», վորտեղ ցույց եյին տրված բոլոր դիվիզիաների գնդերի համարները, դիվիզիաների հրամանատարների ազգանունները և բազմաթիվ ուրիշ տեղեկություններ, մենք այնքան իրազեկ եյինք լինում ընդհանուր դրությանը, վոր կարողանում եյինք անմիջապես ստի մեջ բռնել այն յուրաքանչյուր դասալիքին, վորը փորձում եր չվոթության մեջ դցել մեզ:

Մի անդամ գերմանական դաղտնի ծառայությունը բավականաչափ անհանդստություն պատճառեց գնդապետ Ոպպենհայմին և ինձ: Վորոշ չափով նրան հաջողվեց չվոթության մեջ դցել մեզ: Մի առավոտ, մտնելով այն շենքերից մեկը, վորտեղ յես հարցուփորձ եյի անում դասալիքներին և ուրիշ անձնավորություններին, վորոնց յես չեյի ուզում ներս տանել ծառայության շենքը, յես զարմանքով տեսա, վոր իմ առաջ կանգնած է կիսատարազ հագուստով մի թուրք: Մաքուր ֆրանսերենով նա ինձ հայտնեց, վոր ինքը դասալիք է Տրիրից, թուրքական այն դի-

վիզիայից, որին Դարդանելից փոխադրել են արևմտյան ճակատ:

Ցես վոչինչ չգիտեյի Թուրքական բանակի մասին և չունեյի Թուրքական ճակատի քարտեզը: Ցես գիտեյի, որ խոշոր վերախմբավորումներ են տեղի ունեցել. իտալական ճակատում յերևացել են գերմանական դիվիզիաներ՝ ավստրիացիներին աջակցություն ցույց տալու համար, իսկ արևմտյան ճակատում նկատվել են ավստրիական ծանր հաուբիցների մարտկոցներ: Ցես կասկածանքով վերաբերվեցի Թուրքին, թեև նա լավ տպավորություն թողեց և պատմեց միանգամայն ճշմարտանման պատմություն իր բոլոր մանրամասնություններով, ցույց տալով զնացք նստելու վայրը և այն մարշրուտը, որով զնացքը յերթևեկում եր: Ցեթե այդ ճիշտ լիներ, ապա ինֆորմացիան մեծագույն հետաքրքրություն կներկայացներ, իսկ յեթե այդ հնարովի լիներ, ապա յես գիտեյի, որ կծաղրեն ինձ:

Իմ կասկածների մասին հայտնեցի զնդապետ Ոպպենհայմին և հարցրի նրանից, թե արդյոք ուզո՞ւմ է տեսնել այդ մարդուն: Նա համաձայնեց: Նա չեր կարող հերքել Թուրքի պատմածը և հեռագրով հաղորդեց ստացած ինֆորմացիան: Նա միայն մի բան կարող եր անել— նշել այդ ինֆորմացիան մանրակրկիտ կերպով ստուգելու անհրաժեշտությունը: Մենք Թուրքին վարձատրեցինք, և գերմանացիները, ամենայն հավանականությամբ, ուրախ ծիծաղեցին մեզ վրա: Արևմտյան ճակատում Թուրքական վոչ մի դիվիզիա չեր յերևում: Մի քանի ամիս անց յես հանդիպեցի այդ յերիտասարդին, որը զորդ եր վաճառում Ռոտտերդամի փողոցներում: Ուշադրությամբ նայելով նրա վրա, յես կարող եյի յերդվել, որ ժպիտ տեսա նրա դեմքին:

Ցես չեյի զանգատվում, որ շարունակ պայքարի մեջ եյինք լինում գերմանական դաղտնի ծառայության հետ: Այդ զրդիռ եր հաղորդում մեր աշխատանքին:

Շուտով մեզ հաջողվեց ստանալ մի շատ կարևոր ինֆորմացիա: Այն սենյակում, որտեղ հարցաքննություն եր կատարվում, յես տեսա մի յերիտասարդ, տեսքով սակավարյուն մի մարդու, որը վերարկուի տակից ջղաձգորեն դուրս եր քաշում ինչ-որ մի ծրար:

— Ի՞նչ կտաք սրա համար,— հարցրեց նա, բաց անելով ծրարը և մեկնելով ինձ ինչ-որ մի դրքույկ:— Սա գերմանական դաշտային փոստի վերջին հրատարակությունն է: Ցերկու որ առաջ այդ դիրքը յես վերցրի Դյուսելդորֆի փոստում, որտեղ յես աշխատում եյի:

Ցես վերցրի դիրքը, նրա մեջ կար գերմանական բանակի բոլոր զորամասերի լրիվ ցուցակը: Դաշնակիցների համար շատ կարևոր եր իմանալ, թե ժամանակ առ ժամանակ ի՞նչպիսի նոր զորաջոկեր, մարտկոցներ, սավառնակախմբեր և ուրիշ զորամասեր են կազմվել: Դրան վորպես լրացում՝ դիրքն ամենաստույգ ձևով տալիս եր գերմանական բոլոր փոստակայանների տեղադրությունը արևելյան և արևմտան ճակատներում: Այդ նշանակում եր, որ մենք ստանում ենք մի կրճատագիր, որի միջոցով, ոգտվելով բռնված նամակներից, կարողանում եյինք ճիշտ վորոշել հասցեների վրա ցույց տված բոլոր զնդերի և զորամասերի գտնվելու վայրը:

Ցես նետվեցի դեպի իմ «Շաղանակագույն դիրքը»: Թեև նա լրիվ չեր, բայց յես գիտեյի, որ այնքան տեղեկություններ է պարունակում իր մեջ, որ հնարավորություն կտար ինձ ստուգելու դաշտային փոստակայանների այս ցուցակի խնդությունը: Պատերազմական զործողությունների թատերաբեմի քարտեզի և մի քանի բռնված բաց նամակների ոգնությամբ յես ստուգեցի այն զորաջոկերի տեղադրությունը, որոնց ճակատում գտնվելու վայրը ցույց եյին տվել ռազմագերիները: Դրքում սկսեցի փնտռել հիշատակություններ վեցհարյուրորդական համարներ ստացած նոր զորաջոկերի մասին: Ցես հենց նոր եյի հարցաքննել 606-րդ զնդի մի քանի դասալիքների, որոնք ցույց չեր տրված «Շաղանակագույն դրքում», և վախենում եյի, թե Թուրքի միջոցով սարքած եր հնարանքի հաջողությամբ խրախուսված՝ գերմանական դաղտնի ծառայությունը նորից է փորձում խաղ խաղալ իմ գլխին:

Ամեն ինչ զուգադիպեց։ Գիրքը, անտարակույս, իսկական եր։ Վոչ մի դումարով չեր կարելի գնահատել այն։ Այդ գիրքն անգին եր։ Նրա կողքին մեր «Շաղանակագույն գիրքը» խղճալի տեսք ուներ, իսկ «Շաղանակագույն գիրքը» իրենից ներկայացնում եր գերմանական բանակի վերաբերյալ տեղեկությունների մի ամփոփագիր, տեղեկություններ, վորոնք ձեռք եյին բերված մեր գործակալների միջոցով ավելի քան յերեք տարվա ընթացքում և ստացված եյին ֆրանսիական և բրիտանական զորքերի կողմից գերի վերցված մի քանի հարյուր հազար գերմանացիներին հարցափորձ անելու շնորհիվ։ Ճարպիկ բանակցությունների և ստուգման համար ամբողջ գրքի փոխարեն վորևե մի եջ հանձնելու միջոցով դասալիքը կարող եր գրա համար պահանջել և ստանալ առատապելական գումար, մինչդեռ դրա փոխարեն նա խոնարհաբար ընդունեց հարյուր ֆունտ, հենց այն առաջին գումարը, վոր յես առաջարկեցի։

Իմ ձեռքի տակով անցած բոլոր դասալիքների մեջ Հենրիխ Ֆլեյշերը ամենալավ տպավորությունը թողեց ինձ վրա։ Յես զգում եյի, վոր նա ինձ ինֆորմացիա յե տալիս վոչ թե մի քանի գուլդեն ստանալու համար, այլ վորովհետև նա սրանց առում է գերմանական կառավարությանը։ Չեր կարելի կասկածել նրա այն անկեղծությանը և զայրույթին, յերբ նա պատմում եր, թե ինչպես են ապրում նրա կինն ու յերեք յերեխաները Բեռլինում, սընվելով միայն շաղգամով և կարտոֆիլով. ինչքա՜ն զունատ և հյուծված զտավ նա նրանց՝ ճակատից կարճ ժամանակով տուն վերադառնալիս, և ինչպես յերդվեց, վոր կըփախչի Հոլլանդիա, այնտեղ կստանա աշխատանք և փող կուղարկի նրանց, վորպեսզի նրանք կարողանային իրենց համար գնել ամենաանհրաժեշտ բաներ։ Նա հայտարարեց, վոր իրեն ավելի պատասխանատու յե զգում իր ընտանիքի հանդեպ, քան կայսրի և զինվորական կլիկայի հանդեպ, վորը Գերմանիան դեպի կործանում է մղում։

Ուստի, յերբ գնդապետ Ոպպենհայմը հանձնարարեց ինձ ստուգել այն մի քանի նոր գնդերի և մարտկոցների վերաբերյալ տվյալները, վորոնց մասին հիշատակվում եր դաշտային փոստակայանների ցուցակում, յես մտածեցի Ֆլեյշերի մասին։ Գիտենալով, թե նա վորտեղ է աշխատում, յես ուղարկեցի մի հավատարմատար անձնավորություն, վորպեսզի պայմանավորվի դաղտնի հանդիպման մասին։

Յես կարճ խոսքերով բացատրեցի նրան առաջադրանքը, ավելացնելով, թե նրան սպասում է լավ վարձատրություն, վորը հնարավորություն կտա նրան ոգնելու իր ընտանիքին։ Յես նրանից չթաղցրի այդ առաջադրանքի վտանգավոր լինելը, վորպիսին նա ինքը հիանալի հասկանում եր, սակայն, ինչքան կարողացա, փոքրացրի այդ վտանգավորությունը, տալով նրան այնպիսի թղթեր, վորոնք ապացուցում եյին նրա անպետք լինելը զինվորական ծառայության համար։ Ֆլեյշերը տատանվեց, բայց յերբ նրան ցույց տվի մեր փորագրիչի արվեստի նմուշները, ներառյալ և այն անցագիրը, վոր նրա տիրոջն իրավունք է տալիս յերթևեկելու գերմանական յերկաթուղիներով, նա հասկացավ, վոր հաջողության չանսեր ունի և ընդունեց իմ առաջարկությունը։

Մի շաբաթվա ընթացքում յես նրան ծանոթացրի այն տեղեկություններին, վոր մենք պահանջում եյինք, և նա պատրաստ եր սահմանն անցնելու։ Նա մեկնեց՝ իր հետ վերցնելով Սիտարդի մեր գործակալի հասցեն, վորին նախազգուշացրել եյինք Ֆլեյշերի գալու մասին և հրահանգել եյինք սահմանից անցկացնել նրան դեպի Ահեն։ Տեղ հասնելուց հետո Ֆլեյշերը պետք է գործեր ինքնուրույնաբար։

Սիտարդի մեր գործակալը, վոր պատկանում եր այդ յերկրամասում գործող մաքսանենգների խմբին, հաղորդեց մեզ, վոր ճանապարհորդությունը դեպի Ահեն բարեհաջող է անցել։ Մենք նստել և սպասում եյինք։ Անցավ յերեք շաբաթ։ Այնուհետև յես ստացա մի հեռագիր, վորը հասցեագրված եր Ռոտերդամի մեր գործակալներից մեկին.

«Այսոր յերեկոյան ուղարկեցեք ևս ութ պարկ։ Խոհանոցս»։

Այս մի կրճատագիր հաղորդագրություն եր, վոր նշանակում եր, թե Ֆլեյշերը վերադարձել է և ժամի 20-ին կսպասի ինձ հենց նույն տեղը, վորտեղ մենք առաջ հանդիպում եյինք։

Ֆլեյշերը մեզ բերեց այնպիսի տեղեկություններ, վորոնք շատ մեծ արժեք ունեյին մեզ համար։ Նա այցելել եր վորոշ ուսումնական ճամբարներ և վոչ միայն կարողացել եր հաստատել վեցհարյուրերորդական և յոթհարյուրերորդական կարգի մի քանի նոր զորադնդերի կազմավորման վերաբերյալ հաղորդագրությունը, այլ նաև իր հետ բերել եր մանրամասն տեղեկություններ հատուկ «գրոհային զորամասերի» կազմակերպման և տակտիկայի մասին, վորոնց գերմանացիները հաջողությամբ ոգտագործեցին 1918 թ. մարտի մեծ հարձակման ժամանակ։ Նա հաղորդեց, վոր պատերազմի ընթր վետերաններից ընտրվում են առանձին գրոհային զորամասեր, վորոնք հատուկ պատրաստություն են անցնում Գերմանիայի ուսումնական կենտրոններում և ճակատի թիկունքում և նշանակվում են հակառակորդի ճակատը ճեղքելու համար։

Դրան վորպես լրացում՝ Ֆլեյշերը տվեց Գերմանիայի տնտեսական դրության արժեքավոր նկարագրությունը և իր հետ բերեց քաղաքացիական բնակչության համար կիրառվող մթերային քարտերի նմուշներ։ Նա ձեռք եր բերել նաև մի շարք սուրբոգատներ, վորոնք փոխարինում եյին սուրճը և ուտեստեղենի այլ պաշարները։ Սրա հետ միաժամանակ նա վոչ միայն հաստատեց մեր տեղեկությունները՝ Գերմանիայում մթերքների պակասության աճման մասին, այլ նաև ավելացրեց, վոր իտալացիների դեմ մղվող պայքարում ավստրիացիների ունեցած հաջողություններով կայտառացած գերմանական հրամանատարությունը դեռևս հույս ունի հաղթելու այն մեծ հարձակման ժամանակ, վոր նա պատրաստում է արևմտան ճակատում։

Ֆլեյշերին մենք առաջարկեցինք մի նոր և ավելի դժվարին խնդիր։ Մեզ համար չափազանց կարևոր եր դեռևս նացքներին հետևող պոստ կազմակերպել Տրիրում։ Գերմանիայից Ախեն-Հերբեստալ-Լյեժ գծով կատարվող բոլոր զինվորական փոխադրությունների մասին տեղեկությունները մենք ստանում եյինք։ Բայց մյուս յերակը, վոր գնում եր Տրիրի վրայով, դիտողությունից դուրս եր մնացել։ Եթե մենք կարողանայինք այնտեղ պոստ կազմակերպել, ապա կվորսայինք զորքերի այն ամեն մի տեղափոխությունը, վոր կատարվում եր Գերմանիայից դեպի Վերդենի ու Ծովի միջև տարածվող արևմտյան ճակատը։

Ֆլեյշերը վախենում եր։ Տրիրում պոստ կազմակերպելու փորձը քանիցս արդեն ձախողվել եր։ Վոչ մի անգամ մեզ չեր հաջողվել դիտող պոստ կազմակերպել հենց Գերմանիայում։ Ինչպես յերևում է, Գերմանիայում գերմանացիների հետ աշխատելը բոլորովին այլ բան եր, քան ոկուպացիայի յենթարկված տերիտորիայում բելգիացիների կամ ֆրանսիացիների հետ աշխատելը։ Մի դեպքում գրգիչ ուժ կարող եր ծառայել դրամը, մյուս դեպքում մենք կարող եյինք ներգործել հայրենասիրության վրա։ Այնուհետև, Գերմանիայում ավելի դժվար եր հետախուզական աշխատանք կատարել, վորովհետև գործակալը չարունակ չրջապատված եր լինում հարևաններով, վորոնք կմատնեյին նրան, յեթե վորևե կասկածելի բան նկատեյին։ Վերջապես, գնացքներին հետևողը, վոր պարտավորված եր մնալ պոստում, պետք է հույս դներ սուրհանդակի վրա։ Ահա այդ ել հենց վարանեցնում եր, դլխավորապես, գերմանացի գործակալներին։ Մենք ունեյինք մեծ թվով լավ գործակալներ, վորոնք Ֆլեյշերի նման միայնակ եյին աշխատում։ Բայց նրանք համառ կերպով հրաժարվում եյին իրենց կյանքը վտանգել վորևե հայրենակցի։

Վերջիվերջո Ֆլեյշերը համենայն դեպս ընդունեց իմ առաջարկությունը և վերադարձավ Գերմանիա։ Մենք այլևս նրան յերբեք չտեսանք։ Կարող է պատահել, այն մեծ գումարը, վոր տվել եյի նրան կազմակերպական ծախսերի համար, չափից ավելի շատ եր գայթակղեցրել նրան, կամ թե նա բռնվել ու դնդակահարվել է—յես չգի-

տեմ։ Կասկածում եմ, թե յերբ մենք նրան տվել ենք այն-
քան լավ կեղծած փաստաթղթեր, վոր գերմանացիներն ի-
կականի տեղ են ընդունել, նա մեծ դումար է տնտեսել և
վերադարձել Բեռլին՝ իր ընտանիքի մոտ։ Շատ հավանա-
կան է, նա մտածել է, վոր իր ընտանիքի գոյությունն ի-
րենից է կախված և վոր մենք նրան տվել ենք անիրագործ-
ելի խնդիր։ Նրա հարազատները նրա մեծաղույն և մի-
ակ հետաքրքրությունն եյին կյանքում, և քանի վոր նա
հրաժարվել եր նրանց զոհել կայսեր համար, ապա մենք
չեյինք կարող սպասել, վոր նա նրանց կզոհի մեզ համար։

ՊՐՈՎՈԿԱՏՈՐ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՁԱԽՈՂՈՒՄԸ

— Պարոն Դելորմը պատերազմից առաջ դետեկտիվ (խուզարկու վոստիկանության գործակալ) է յեղել Բրյուսելի վոստիկանության մոտ,— ասաց մեր գործակալը։— Նա պատրաստ է վերադառնալու Բելգիա, յեթե դուք կարծում եք, թե նա այնտեղ կարող է ոգտակար լինել դաշնակիցներին։

— Պահպանե՞լ եք արդյոք կապը ձեր պաշտոնակիցների հետ։ Նրանցից վորևե մեկը մնացե՞լ է Բրյուսելում,— հարցրի յես Դելորմին։

Դրական պատասխան ստանալով՝ յես հետաքրքրվեցի այդ մարդով և մտածեցի, հենց վոր նա կարդի բերի իր պաշտոնակիցների աշխատանքը, մենք կկարողանանք նրան նորից Հոլանդիա ուղարկել։

Յես գիտեյի, վոր, իրենց պրոֆեսիայի շնորհիվ, դետեկտիվներից լավ գործակալներ դուրս կգան։ Նրանք իրենց ինտելիգենտությամբ գերազանցում են սովորական վոստիկաններին և անցել են արդեն դաղտնապահության, իրենց գործողությունները թաղցնելու և դիտելու ընդունակության դպրոցը։

Վորքան շատ եյի նայում Դելորմին, այնքան ավելի պարզ եյի տեսնում, վոր, չնայած նրա հիվանդության

(տուբերկուլյոզին), նա ոժտված եր յերկաթե կամքով, վորը կոգնի նրան կատարելու նրա վրա դրված առաջադրանքը։ Յես նրան տվի անհրաժեշտ հրահանգներ, ցույց տվի Անտվերպենի «փոստարկղը», և մի շաբաթից հետո հավատարիմ Շարլ Վիլլեկենսը նրան անցկացրեց սահմանից Ենդլհովենում և գուրս բերեց Բրյուսել տանող ճանապարհի վրա։

Չնայած նրա կողմից Բրյուսելում կազմակերպված չորս հիանալի դիտող կայաններին, վորոնք անընդհատ աշխատում եյին տասներկու ամիս շարունակ, մինչև հաստատություն կնքելը, յես, ամենայն հավանականությամբ, նրա մասին չեյի հիշատակի այս դրքում, յեթե նա չոգներ մեզ դաղարեցնելու գերմանացիներին ծառայող բելգիացի Բեռնի գործունեությունը, վորը (Բեռնը) մեծ վտանգ եր հանդիսանում ոկուպացիայի ենթարկված գոտու մեր գործակալների համար։

Սենատոր Կոլլոյի հետ կատարված աշխատանքի հաջողությունից և Կամիլլ Հյուիսմանսից այնքան վստահելի աջակցություն ստանալուց հետո յես ուրախացա բելգիական սոցիալիստական կուսակցության անդամ Բեռնի հետ ունենալիք մոտալուտ տեսակցության համար, վորը (Բեռնը) Բելգիայից Հոլանդիա յեր յեկել գերմանական անցագրով։ Նա պետք է վերադառնար Բելգիա ինձ հետ տեսակցություն ունենալուց մի քանի որ հետո, և յես հույս ունեյի, վոր բախտն ինձ կժպտա կրկնելու Կոլլոյի հետ ունեցած փորձը։

Հենց վոր Բեռնին տեսա, անվստահություն զգացի նրա նկատմամբ։ Դա պարծենկոտ և ամբարիշտ մի տիպ եր։ Հագած եր դառան մորթուց ոձիքով վերարկու և մի մեծ այմաստ փայլում եր նրա մատի վրա։ Ահա այդ կարծեցյալ սոցիալիստի պատկերը։

Բեռնը իր խոսակցությունն սկսեց գերմանացիների մասին կատակներ անելուց։ Վորքան հիմարություն եր նրա կողմից՝ կարծել, թե նրան կհաջողվի վորևե բան կորզել ֆլամանդական կուսակցության կամ բելգիական սոցիալիստների հետ խաղ անելու միջոցով։ Ինչ վե-

բաբերում է նրան, նա ինքը նրանցից լավություններ եք ընդունում, ինչպես, օրինակ, անցագիր Հոլանդիա մեկնելու համար և նրանց հետևից ծիծաղում եր նրանց վրա։ Նրա ասելով, ինքը հայրենասեր է և ուզում եր իր արտոնություններն ոգտագործել դաշնակիցներին աջակցություն ցույց տալու համար։ Եթե յես նրան ցույց տայի, թե Բելգիայի հատկապես վո՛ր մասերից տեղեկություններ չենք ստանում, նա այդ մասերում կկազմակերպեր զնացքներին հետևող պոստեր և «Ֆլանյորներ»։ Նա պատրաստ եր ինքն անձամբ հավաքելու զեկուցագրերը և հանձնելու ոկուպացիայի յենթարկված տերիտորիայում գտնվող այն «փոստարկղին», վոր մենք կդնենք նրա տրամադրության տակ։

Ինձ համար միանգամայն պարզ եր, վոր այդ մարդը փորձում է պարզել Բելգիայի մեր կազմակերպության մեծությունը և ճյուղավորվածության աստիճանը։ Յես ըդդում եյի, վոր նա գտնվում է զերմանական ծառայության մեջ, և կարող եյի նրան դուռը ցույց տալ։ Դրա փոխարեն յես վորոշեցի ոգտվել առիթից՝ զերմանացիներին շըփոթության մեջ զցելու համար և խանդավառությամբ ընդունեցի նրա առաջարկությունը։

— Դուք ուղարկված եք մեզ մոտ աստծո կողմից,— ասացի յես։—Մենք բացարձակապես վոչ մի տեղեկություն չունենք ոկուպացիայի յենթարկված դոտուց։ Սկզբնավորության համար չարժի մտածել հանդրվանային ռայոնի մասին։ Գնացքներին հետևող մի քանի պոստեր կազմակերպեցեք Լյեժում, Բրյուսսելում և Նամյուրում։ Դաշնակիցների համար չափազանց կարևոր է տեղեկություններ ստանալ այդ հանդուցային կայանների վրայով կատարվող զինվորական փոխադրությունների մասին։

— Իսկ ի՞նչ կասեք «փոստարկղի» և սահմանից անցկացնող ուղեցույցի մասին,— հարցրեց Բեռնը։

Նայեցի նրա վրա կեղծ սարսափով։

— Այդ արդեն ձեր գործն է,— համարյա հառաչեցի յես։— Մենք այդպիսի միջոցներ չունենք։

Բեռնը ուշադրությամբ նայեց ինձ վրա։ Նա հիմար չեր։

Յես տեսա, թե ինչպես նրա զեմքը հիասթափություն արտահայտեց։ Տեսնելով, վոր կորչում է վարձատրություն ստանալու հույսը, վարձատրություն, վոր, անկասկած, զերմանացիները խոստացել են նրան վորոշակի ինֆորմացիայի համար, նա ուզում եր մեզանից հեռանալ՝ գոնե, դրպանում «փոստարկղի» հասցե ունենալուց հետո։

— Շատ բարի, կաշխատեմ ինքս գտնել ուղեկից,— փնթփնթաց Բեռնը։

Ապա նրա գլխում ծագեց մի փայլուն միտք, և ավելացրեց.

— Այդ բոլորը փող կարժենա։ Ինքըստինքյան հասկանալի յե, վոր ձեզ մնում է դրամ մատակարարել ինձ։

Յես, բարկությունս զսպելով, տվի նրան յերկու հարյուր դուլդեն։ Քանի վոր սկսեցի, ուրեմն և պետք է վերջացնեմ։ Եթե նա զերմանացիներին պատմի փողի մասին, ապա այդ կարող է մի ավելորդ ապացույց հանդիսանալ այն ճշմարտության, վոր յես ասել եմ Բեռնին՝ Բելգիայի մեր զաղտնի ծառայության տապալման մասին։ Նա ծամածռեց զեմքը՝ այդքան չնչին գումար տեսնելով։ Սակայն յես խոստացա նրան փող տալ առանձին զեկուցագրերն ստանալուն պես։

Յերկու շաբաթ հետո Բեռնը նորից Հոլլանդիա յեկավ։ Իմ ներկայությամբ նա կտրատեց իր վերարկուի կարերը և այնտեղից դուրս քաշեց խոստացած զեկուցագիրը՝ տըպված ամենաբարակ թղթի վրա։ Ապա ավելացրեց, վոր նա գտել է մի բանվոր՝ Անտվերպենից դեպի հյուսիս գտնվող Ստարբրեգին մոտիկ սահմանի վրա տարածված ֆերմայից, վորը համաձայն է զեկուցագրեր փոխադրել սահմանի վրայով։ Իսկ յես մինչև նրա Բելգիա վերադառնալը պետք է ծանոթացնեմ նրան Հոլլանդիայի այդ ռայոնում աշխատող մեր սահմանային գործակալի հետ, և այն ժամանակ նա կկարողանա իրար մոտ բերել այդ յերկու գործակալներին։ Յես հրաժեշտ տվի Բեռնին, պայմանավորվելով հանդիպել իրար նույն տեղում։

Այդ ժամանակ Լյեժում, Նամյուրում և Բրյուսսելում մենք ունեյինք զնացքներին հետևող յերեք անկախ պոստերի

կազմակերպություններ: Ծառայության վայր վերադառնալով, ինձ հարկավոր եր ընդամենը մի քանի բոպե, վորպեսզի ստուգեյի Բեռնի զեկուցագիրը: Այդ զեկուցագիրը, ինչպես նախատեսել եյի, սուտ դուրս յեկավ:

Ավելի ուշ, հանդիպման ժամանակ, յես Բեռնին ասացի, վոր այն հեշտությունը, վորով նա անցագրեր եր ստանում գերմանացիներից, ստիպում է մեզ զգաստ լինել, և թեպետ գնացքներին հետևող նրա պոստերը կարող են գերազանց լինել, բայց և այնպես մենք վոչ մի մատերիալ չունենք վերահսկողության համար: Ցես նրան մատնանշեցի, վոր նրա տեղեկությունները վոչ մի արժեք չունեն դաշնակիցների հրամանատարության համար, յեթե չի կարելի լիովին հույս դնել դրանց վրա: Ցես շեշտեցի, վոր դա մեղադրանք չե, վոր նա ամենայն հավանականությամբ, գերազանց հայրենասեր է և ինքը պետք է հասկանա այդպիսի դրության անհնարինությունը: Բեռնը հեռացավ՝ հայտարարելով իր լոյալության մասին և բղավելով, վոր իրեն վիրավորեցին:

Բեռնը մնաց Հոլլանդիայում, և շուտով յես վրդովմունքով լսեցի, վոր նրան տեսել են մեր գործակալներից մեկի հետ:

Ցես չատ կարդով տեղեկացրի մեր բոլոր մարդկանց, վոր Բեռնը գերմանական գործակալ է: Այդ մարդը լուրջ սպառնալիք եր, վորովհետև, վորպես մեզ համար աշխատող բելգիացի, նա կարող եր ձեռք բերել մեր գործակալներից վոմանց վստահությունը: Շուտով դրությունը նրա համար անհարմար դարձավ, և յես ուրախությամբ իմացա, վոր նա վերադարձել է Բելգիա:

Սակայն յես դեռ նրանից չեյի ազատվել: Մի քանի շաբաթ անց Բրյուսսելի մեր գործակալներից մեկը հայտնեց, վոր Բեռնը իր մի ընկերոջը պատմել է, թե նա Բելգիա յե ուղարկված հետախուզական ծառայություն կազմակերպելու համար և վոր նա գործակալներ է հավաքագրում:

Բեռնը, անտարակույս, գերմանական գործակալ-պրովոկատոր եր: Այս տեսակ բելգիացիները՝ Բելգիայի գերմանական բանտերում աշխատող «թիսկանների» կամ տեզեկատուների հետ միասին՝ ամենալուրջ և ամենավտանգավոր սպառնալիքն եյին հանդիսանում մեր գործակալների համար: Մեր գործակալները հեշտությամբ եյին կարողանում տարբերել գերմանական գաղտնի վոստիկանության գործակալներին, բայց դաշնակիցների մոտ ծառայող հայրենասեր բելգիացիների դիմակի տակ քողարկված այս դավաճանները մեր հետախուզական կազմակերպությունների ամենամոլեռանդ գերեզմանափորներ եյին հանդիսանում:

Անհրաժեշտ եր դադարեցնել Բեռնի գործունեությունը: Մտածում եյինք նրան սպանելու մասին, բայց դա կը-հայտաբերեր մեր գործակալներից զոնե վորևե մեկին: Ուստի վորոշեցի վախեցնել նրան, ցույց տալով, վոր նրա դեմ ապացույցներ են կուտակված և վոր պատերազմից հետո նա ստիպված կլինի պատասխանատու լինել բելգիական իշխանությունների առաջ իր գործունեության համար:

Ցես չեյի կարող ոգտագործել կեղծ զեկուցագրերը, վորովհետև այդ դեպքում ստիպված կլինեյինք խոստովանել, վոր մենք գնացքներին հետևող պոստեր ունենք Լյեժում, Նամյուրում և Բրյուսսելում և կարող ենք նրա զեկուցագրերը համեմատել այդ պոստերի զեկուցագրերի հետ: Ցեթե նույնիսկ յես այդ բանն անեյի, ապա նա կարող եր ասել, վոր ինքն է խաբված յեղել: Ցես չեյի կարող ոգտագործել գերմանական անցագրերը, վորովհետև լոյալ-բելգիացիներից շատերը յերբեմն-յերբեմն այդպիսի անցագրեր եյին ստանում: Իմ կասկածների մասին վերջի-վերջո հայտնեցի Դելորմին, վորը մի շաբաթ չարունակ հետապնդեց Բեռնին, և ապա Բեռնին գրեցի մի անանուն նամակ՝ իբրև թե մի խումբ բելգիացիներից, վորոնք դավաճանների դեմ նյութեր են հավաքում, վորպեսզի պատերազմից հետո վերջիններս կրեն իրենց արժանի պատիժը: Ցույց տալով այն ժամերն ու որերը, յերբ Բեռնը այցելում եր գերմանական գաղտնի վոստիկանության բյուրոն Բեռլեմոն փողոցի վրա, և հիշեցնելով նրան վերջին շաբաթվա ընթացքում իր ոչրած գործունեության մասին, այդ յերևակայական կազմակերպությունը կարողացավ համոզել նրան, վոր հետևում

են իրեն։ Շատ հավանական է, այդ բանը վախեցրեց նրան, և մենք նրա մասին այլևս վոչ մի բան չլսեցինք։

Պատերազմից հետո շատ դավաճան բելգիացիներ դընդակահարվեցին, բայց Բեռնը, թեև յես հաղորդել եյի նրա մասին, և նրա արարքը հետաքննել եր բելգիական վոստիկանությունը, կարողացել է դուրս պրծնել։ Բելգիայից մեկնելուց առաջ գերմանական դաղտնի վոստիկանությունը վոչնչացրեց գործակալների բոլոր ցուցակները, իսկ բելգիացիները չեյին ցանկանում մեղադրել բելգիական վորևե քաղաքացու, յեթե նրա դեմ հանցանքի ուղղակի ապացույցներ չկան։ Բեռնը կարողացել է պատճառ դտնել, թե ինչի համար է այցելություններ կատարել դեպի Բեռլեմոն փողոցը։ Բացի դրանից, նա հայտնել է, թե մի ինչվոր անծանոթ մարդ, վորը հրաժարվում եր տալ իր անունը, կազմակերպում եր դնացքներին հետևող պոստեր և սահմանից Ստարբրեկե անցնելու դործը և իր՝ Հոլանդիա մեկնելու նախորյակին մտել է նրա մոտ, վորպեսզի նրանից խնդրի կապ հաստատել դաշնակիցների դաղտնի ծառայությունից վորևե մեկի հետ։ Բեռնը կարողացել է նաև հիանալի կերպով ապացուցել, վոր ինքը տվյալ մոմենտին բացակա յե յեղել այն վայրից, վորտեղ նրան վերագրել են այդ հանցագործությունը (այլուրեքությունալիբի)։ Նա այնքան ժամանակ է ունեցել, վոր կարողացել է նախապատրաստել այդ։ Նա խույս տվեց դատապարտվելուց, բայց ի վիճակի չեղավ ցրելու այն վատ համբավը (ռեպուտացիա), վոր ինքն եր ստեղծել իր համար։ Շուտով հաշտություն կնքելուց հետո նա անհետացավ Բրյուսելից։

Ինչ վերաբերում է Դելորմին, ապա նա, չնայած իր հիվանդության, մինչև պատերազմի վերջը դլխավորեց իր իսկ կազմակերպած փոքր խմբակը։

Վան Բերդենը և նրա կազմակերպությունը բռնված եյին դերմանացիների կողմից և թեև Բրյուսսելում, Նամյուրում և Լյեժում Կոլլոյի կազմակերպած դիտող պոստերը մեր մի քանի անկախ պոստերի հետ դեռ ելի դործում եյին, բայց և այնպես մենք պետք է փոխարինեյինք մեր կորուստները և ավելացնեյինք պոստերի թիվը։ Գերմանացիները շարունակում եյին ձերբակալություններ կատարել, և բոլոր դործակալները դնդակահարվելու մշտական սպառնալիքի տակ եյին դտնվում։

Ուստի յերբ մեր սահմանապահ դործակալը ինձ մոտ ուղարկեց Բելգիայից յեկած մի եմիսարի՝ Սեն-Լամբեր կեղծ անունով, վորն ասաց, թե ինքը հանդիսանում է ոկուպացիայի յենթարկված տերիտորիայում հետախուզական ծառայություն կազմակերպելու ցանկություն ունեցող հայրենասեր բելգիացիների մի մեծ խմբի ներկայացուցիչը, ապա իմ վոգեվորությանը չափ ու սահման չկար։ Ուրեմն աշխատանքի կեսը կատարված եր. ինձ հարկավոր եր միայն ուղեկցողներ դտնել, փող տալ և առաջադրանքներ ուղարկել։

Նա ինձ հայտնեց, վոր այդ խումբը բաղկացած է ինտելիդենտներից՝ ուսուցիչներից, աղատ պրոֆեսիաների տեր մարդկանցից, բանկիրներից և մի քանի աղնվականներից։ Բայց Սեն-Լամբերը ինձ չչմեցրեց հետևյալ հայտարարությամբ.

— Նրանք, սակայն, մի պայման են դնում. աշխատանքն սկսելուց առաջ իրենց ընդունել զինվորական ծառայության։

Ցես հասկանում եյի այդ ցանկությունը։ Ոկուպացիայի յենթարկված դոտու ամեն մի դործակալ ծառայում եր իր յերկրին, յենթարկվելով նույնիսկ ավելի մեծ վտանգի, քան զինվորը ռազմաճակատում. նա վտանգի հանդեպ կանգնած եր միայնակ, առանց թմբկահարող կռվի, առանց ինքնապաշտպանության վորևե միջոցի։ Բայց տվյալ մոմենտին այդ խնդրանքին դոհացում տալն անհնարին եր թվում։

Զինվորական մինիստրությունն ինչպե՞ս կարող եր բելգիական հպատակներին բրիտանական զինվորներ դարձնել։ Նույնիսկ բելգիական իշխանություններն էլ չեին կարող այդ բանն անել, քանի վոր չափազանց վտանգավոր եր թեկուզ հենց անվանացուցակներ ուղարկել սահմանի վրայով։ Ցեվ, վոր դլխավորն է, նրանք ի՞նչպես կարող եյին խմբի կազմի մեջ մտնող կանանց զինվորական ծառայության ընդունել։

Ցես խուսափեցի պատասխանելուց և հարցրի.

— Ձեր կարծիքով, այդ ինչպե՞ս պետք է արվի և ինչպե՞ս պետք է տրվի յերդումը։

— Ձգիտեմ,— պատասխանեց նա։— Հարկավոր է, վոր զինվորական մինիստրությունն ինքը մի վորևե ձև հնարի։ Ցես հրահանգ եմ ստացել այդ հարցը քննարկելու Հավրի բելգիական իշխանությունների հետ այն դեպքում, յեթե ձեզանից դոհացուցիչ պատասխան չստանամ։

Ցես գիտեյի, վոր յեթե բելգիական զինվորական հրամանատարությունը նույնիսկ համաձայնվի էլ նրանց առաջարկությանը, ապա բելգիական դաղտնի ծառայությունը չպիտի կարողանա կապի անվտանգ միջոցներ տրամադրել նրանց՝ սահմանի վրա։ Ցես կասկածում եյի, վոր հազիվ թե բելգիական դաղտնի ծառայությանը հաջողվի այդ ժամանակաշրջանում վորևե տեղեկություն ստանալ ոկուպացիայի յենթարկված դոտուց։

Ցես գիտեյի, վոր մենք չենք ունենք ստեղծելու այնպիսի մի կազմակերպություն, վորի մասին շարունակ յերազում եյինք, բայց վոր յես ստիպված կլինեմ տալու մի խոստում, վորը, կարող է պատահել, չկարողանամ պահել և կամ կարող է ինձ շատ անհարմար դրության մեջ դնել։ Սեն-Լամբերին ասացի, վոր այդ բոլորի մասին կհաղորդեմ Անգլիայում գտնվող պետին և մեկ-յերկու որվա ընթացքում պատասխան կտամ նրան։

Իշխանություններին դիմելն անդուտ եր։ Գիտեյի, վոր յեթե նույնիսկ զինվորական մինիստրությունն ուզենա բավարարել նրանց խնդիրքը, ապա դրա համար անհրաժեշտ կլինի ստանալ բելգիական կառավարության համաձայնությունը և վոր այս բոլոր բանակցությունները մեզ կհարկադրեն յերկար և թանկագին ժամանակ կորցնել։

Հաջորդ որը հանդիպում խղճով Սեն-Լամբերին ասացի, վոր նրանց պահանջը բավարարված է և նա կարող է այդ մասին նամակ գրել, իսկ յես էլ հանձն եմ առնում այդ նամակն ուղած հասցեյով ուղարկել Լյեժ կամ Բրյուսսել։

Նա գրեց մի այդպիսի նամակ, տվեց ինձ յերկու հասցե և մեկնեց Հավր՝ իր ծառայություններն առաջարկելու բելգիական կառավարությանը։ Նա ինձ տված խոսքը պահեց և մինչև պատերազմի վերջն այդ մասին վոչ վոքի հետ չխոսեց։

Իմ առաջին փոստը պարունակում եր իր մեջ Սեն-Լամբերի նամակը, առաջադրանք, կազմակերպության հարցին վերաբերող ցուցմունքներ և 500 ֆունտ ստերլինդ՝ նախնական ծախսերի համար։ Մենք թույլատրեցինք մեր սուրհանդակին անձամբ պայմանավորվել «փոստարկղի» հետ՝ զեկուցագրերի հետևից դալու որվա և ժամի մասին։

Շուտով ստացանք պատասխանը, վոր պարունակում եր մի քանի ռազմական տեղեկություններ և Լյեժում, Նամյուրում ու Բրյուսսելում դիտող պոստեր կազմակերպելու խոստումը։ Մեզ հաղորդում եյին նաև, վոր կազմակերպությունը կոչվելու յե «Սպիտակ տիկին»[1]։

Կազմակերպությունն արագությամբ ընդարձակվում եր։ Համարյա յուրաքանչյուր չաբաթ նոր դիտող պոստեր եյին ավելանում, մինչև վոր նրանց թիվը հասավ քառասունի, ընդդրկելով բելգիական բոլոր հանդուցային կայանները։ Այնպիսի կենտրոններից, ինչպիսին եյին Գենտը, Ռդենարը, Սթը, Մոնը և Առլոնը, մենք վոչ միայն զեկուցագրեր եյինք ստանում դնացքների յերթևեկությանը հետևելու մասին, այլ նաև, վորովհետև այդ կետերը դրտնրվում եին հանդստի դոտիներում, ստանում եյինք զո-

1) Ըստ ավանդության՝ «Սպիտակ տիկնոջ» հայտնվելը պետք է նախադուշակեր Հոհենցոլլերների անկումը։ Այդ անունը շատ հարմար դուրս յեկավ այդ կազմակերպության համար, վորովհետև իր աշխատանքով նա նպաստում եր դերմանական բանակի պարտությանը և Հայդերի դահընկեցությանը (հեղինակ)։

գաղնդերի համարները, վորոնք հնարավորություն էին տալիս մեզ իմանալու, թե հատկապես վո՛ր դիվիզիաներն էին դալիս ու անցնում տվյալ ռայոններից:

Կարճ ժամանակում այդ կազմակերպությունը հավաքագրեց մոտավորապես յերկու հարյուր գործակալ: Կազմակերպության գլուխ էին կանգնած յերկու ղեկավարմակը՝ ինժեներ, վոր առաջ աշխատել եր բելգիական պետական ծառայության մեջ, իսկ մյուսը՝ պրոֆեսոր: Այդ մարդկանց կարիք չկար ասելու, թե ի՞նչպես ձեռնարկեն կազմակերպմանը: Նրանք հասկացել են անկախ և մեկուսացված բջիջների ձևով ծառայություն կազմակերպելու կարևորությունը: Նրանք ուսումնասիրում էին գերմանական գաղտնի վոստիկանության մեթոդներն ու աշխատանքը և միշտ ընդունակ էին իրենց խորամանկությամբ գերազանցել նրան:

Յերբ Բելգիան ընդգրկվեց «Սպիտակ տիկնոջով» և մեր ուրիշ կազմակերպություններով, դրանից հետո սկսեցինք մտածել, թե ի՞նչպես ներթափանցենք Ֆրանսիայից բռնազբաղված տերիտորիան: Յերկու տարվա ընթացքում դաշնակիցների գաղտնի ծառայություններից և վոչ մեկը զեկուցագրեր չեր ստանում այդ դոտուց: Մենք շատ էինք ուզում գնացքներին հետևող պոստ կազմակերպել Իրզոն-Մեզյոր գծի—գերմանական ճակատին զուգահեռաբար ընթացող այդ կարևոր յերակի վրա, վորի նշանակությունն ավելանում եր այնքան, վորքան ուժեղանում էին գերմանացիների՝ մեծ հարձակման պատրաստվելու լուրերը: Okուպացիայի յենթարկված Ֆրանսիայում մենք կկարողանայինք հետևել վոչ միայն հանդստի գոտիներին, այլ նաև այն ռայոններին, վոր ոգտագործելու էին գերմանացիները զորքեր կենտրոնացնելու համար:

Հետևելով Իրզոն-Մեզյոր գծին, վորով տեղի յեր ունենում դիվիզիաների փոխադրությունը մի հատվածից մյուսը, և մեր տրամադրության տակ ունենալով զանազան ռայոններում զորքեր կենտրոնացնելու վերաբերյալ տեղեկություններ հաղորդող «Ֆլանյորներ», մենք կկարողանայինք վորոշել, թե հատկապես վո՛ր հատվածն է ընտրված

հարձակման համար և, այսպիսով, կստանայինք դաշնակիցների համար կենսական կարևորություն ունեցող ինֆորմացիա: Ուստի մենք «Սպիտակ տիկնոջը» ամեն կերպ դբրդում էինք թափանցել Ֆրանսիա, սակայն հանդրվանային ռայոնում և, գլխավորապես, Ֆրանսո-բելգիական սահմանի յերկարությամբ կատարվող հսկողությունն ի չիք եր դարձնում բոլոր փորձերը: Բելգիայում, չնայած գերմանացիների ներկայությանը, սովորական առորյա կյանքը շարունակում եր իր ընթացքը, մինչդեռ Ֆրանսիայում քաղաքացիական բնակչության զգալի մասն եվակուացիայի յեր յենթարկված, և շատ վայրերում մնացել էին միայն դյուղացիները, վորոնք վոչ մի պատճառ չունեին տեղափոխվելու թեկուզ յերկու կամ յերեք մղոն հեռավորության վրա:

Մի անգամ «Սպիտակ տիկնոջից» հաղորդագրություն ստացանք, թե Լյեժի նրանց գործակալներից մեկի տանը թաղնվում է մի յերիտասարդ ֆրանսիացի փախստական. նրանք խնդրում էին մեզ ոգնել նրան Հոլլանդիա անցնելու: Մենք միաժամանակ և՛ զայրացանք, և՛ վրդովվեցինք: Մենք շարունակ կրկնում էինք, վոր նրանք վոչ մի գործ չունեն նման փախստականների հետ, վորովհետև վերջիններս իրենցից վտանգ էին ներկայացնում մեր կազմակերպության համար վոչ միայն Բելգիայում, այլ նաև Հոլլանդիայում: Փախչելու փորձ անող փախստականներից շատերը բռնվել են. միանգամայն պարզ է, վոր սահմանի վրայով ավելի հեշտ եր զեկուցագիր անցկացնելը, քան մարդ: Այդ իսկ պատճառով, յեթե մեր սուրհանդակները և ուղեկցողները սկսեն կանոնավորապես փախստականներ անցկացնել, ապա մեր կազմակերպության տապալման վտանգը մի քանի անգամ կուժեղանա: Բացի դրանից, նույնիսկ բարեհաջող կերպով Հոլլանդիա հասնելուց հետո այդ մարդիկ վորպես սպառնալիք էին մնում մեզ համար, վորովհետև, ապահով դրության մեջ զգալով իրենց՝ շարունակ սկսում էին պատմել իրենց փախուստի մասին և վերջացնում էին նրանով, վոր այդ բանը պատմում էին գերմանական գաղտնի ծառայության մեջ աշխատող բազմաթիվ բելգիացիներից կամ չեղոք մարդկանցից մեկն ու մեկին, վո-

ռոնք հատկապես զբաղվում էին փախստականների շրջանները այցելելով։

Իմ առաջին ներքին մղումն էր՝ մերժել այդ խնդիրքը։ Սակայն, մտածելով, տեսակցություն նշանակեցի և խնդրեցի Որամին Ֆրանսիացու հետևից ուղարկել Շարլ Վիլլեկենին։ Իմ մեջ մի միտք հղացավ. դուցե թե յես այդ մարդու միջոցով կկարողանամ նոր կազմակերպություն ստեղծել Ֆրանսիայում։

Ֆաբրին բարեհաջող կերպով անցավ ելեկտրալարի վերայով։

Նա միջին հասակի քսանամյա պատանի յեր, ըմբիշի կազմվածքով, խանդավառությամբ վառվող աչքերով։ Նա մի քանի խոսքով պատմեց իր կենսագրությունը։ Ֆաբրին պատրաստվում էր քահանա դառնալու և արդեն մի վորոշ ժամանակ վանական յեղբայր (մոնթ) էր յեղել, բայց նա ցանկացել էր փախչել ոկուպացիայի յենթարկված տերիտորիայից, վորպեսզի բանակ մտնի։ Լյեժում մի յեղբտորիայից, վորպեսզի բանակ մտնի։ Լյեժում մի յեղբտական քահանա նրան ծանոթացրել էր «Սպիտակ տիկնոջ» հետ։ Նա այդ կազմակերպության մասին միայն դիտեր այն, վոր նա իր տրամադրության տակ ունի Հոլլանդիայի հետ կապ հաստատելու միջոցներ։

Դժվար չեր համոզել այդ պատանի հայրենասերին, վոր վերադառնա Ֆրանսիայի ոկուպացիայի յենթարկված շրջանը։ Սակայն նա պնդում էր, վոր յես Ֆրանսիական իշխանություններից հատուկ թույլտվություն ստանամ, վորպեսզի վերադառնալիս կարողանա այդ թույլտվությունը ցույց տալ իր հորը— Ֆրանս-պրուսական պատերազմի հին զինվորին, վորը համոզում էր նրան փախչել։ Հատկապես Ֆրանսիական ռազմակցորդ (ատտաշե), գեներալ Բյուկարեյը հաճույքով կատարեց մեր խնդիրքը։

Թեև յես չեմի եկ ուզում «Սպիտակ տիկինը» կապել այն կազմակերպության հետ, վոր մենք այժմ եյինք պատրաստվում ստեղծել ոկուպացիայի յենթարկված Ֆրանսիայում, բայց և այնպես յես ուրիշ յելք չունեի։ «Սպիտակ տիկինը» մեր կազմակերպությունների մեջ այն միակ կազմակերպությունն էր, վոր մինչև Ֆրանս-գերմանական սահմանն ընդգրկում էր ոկուպացիայի յենթարկված տերիտորիան։ Միայն նա կարող էր ընդունել Ֆաբրիի զեկուցագրերը։ Ինձ վիճակված էր ուխտի դիմել՝ այնպիսի խոշոր կազմակերպություններ ստեղծելով, վորոնցից մինչ այդ խուսափում եյի։

Ֆաբրիին նորից Շարլ Վիլլեկենի ձեռքը հանձնելով՝ յես ուղարկեցինք դեպի Լյեժ։ Այնուհետև մենք ուրիշ ճանապարհով հայտնեցինք «Սպիտակ տիկնոջ», վոր ցանկալի յե Ֆաբրիի հետ հանդիպել հին հասցեյով, ընդգծելով «Սպիտակ տիկին» կազմակերպության մասին լիակատար լռություն պահպանելու անհրաժեշտությունը։ Նրան հարկավոր էր միայն ցույց տալ Ֆրանս-բելգիական սահմանի վրա գտնված այն հասցեն, վորով նա պիտի ուղարկեր իր զեկուցագրերը և ստանար իր կազմակերպության փողերը։ Մենք նրանց առաջարկեցինք կապը կազմակերպել այնպիսի յեղանակով, վոր Ֆաբրիի կազմակերպության մեջ կատարվող ձերբակալությունները նրանց շարքերի քայքայում չառաջացնեն։ Ապա մենք խնդրեցինք նրանց գործուղել «Սպիտակ տիկնոջ» մի վորևե անդամի՝ Ֆաբրիի հետ տեսակցելու համար. վերջինս պետք է բացատրի նրանց ներկայացուցչին «Ֆլանյորների» աշխատանքի մի քանի առանձնահատկությունները։

Մենք շատ ուրախ եյինք, վոր հնարավորություն կունենանք անձամբ հրահանգներ տալու, վորովհետև շատ դժվար էր դրավոր ձևով հրահանգներ տալ «Սպիտակ տիկնոջը»՝ պահանջվող ինֆորմացիայի վորոշ մանրամասնությունների մասին։ Մենք Ֆաբրիին ցույց տվինք ռազմաճակատի քարտեզները և «Շագանակագույն գիրքը», ինչպես նաև զանազան նկարներ և դիագրամներ, վորոնք լուսաբանում եյին այն յեղանակները, վորոնցից նրանք պետք է ոգտվեյին՝ տարբեր զորամասերը, հրանոթների դրամա չափերը, հրետանու կատեգորիաները և այլն վորոշելու համար։ Մենք ցույց տվինք, թե վորքան կարևոր է թեկուզ մի զորագունդ, մարտկոց կամ սակրավոր վաշտ վորոշելը, քանի վոր գոյություն ունեցող բոլոր գերմանական դիվիզիաների կազմը ցույց տվող «Շագանակագույն

գրքի» միջոցով կարելի է հաճախ վորոշել դիվիզիայի համարը։ Ռազմական գործողությունների թատերաբեմի քարտեզների միջոցով մենք ցույց տվինք նաև, թե վո՛րքան կարևոր է հետևել գերմանական յուրաքանչյուր դիվիզիայի տեղափոխությանը։

«Սպիտակ տիկինը» լավ էր կատարում իր խնդիրը։ Ֆաբրին վերադարձավ Իրզոն, ձեռնարկեց կազմակերպություն ստեղծելու գործին, և շուտով մենք սկսեցինք ստանալ առաջին զեկուցագրերն Իրզոն–Մեղյոր կարևոր յերակից։ Գլխավոր զորակայանից նորից շնորհավորական հեռագրեր ստացանք. այդ հեռագրերը կրճատագրով հաղորդեցինք ոկուպացիայի յենթարկված տերիտորիային։

«Սպիտակ տիկնոջ» հետ կապ պահպանելու համար մենք այժմ սահմանի վրա ունեցինք յերեք անկախ անցքեր, վորոնք մենք հսկում եյինք գիշեր ու ցերեկ։ Ելեկտրալար, գերմանական ժամապահներ, գաղտնի վոստիկանություն— ահա թշնամիներ, վորոնց մենք այնքան լավ եյինք հետևում, վոր կարողանում եյինք զեկուցագրեր հանձնել հենց նրանց քթի տակ։ Մեզ պետք յեղավ բելգիական սահմանի վրա ոգտագործել սահմանամերձ գյուղացիներին, վորոնց կուլտուրական մակարդակն զգալի չափով ավելի ցածր էր, քան ոկուպացիայի յենթարկված գոտու մեր գործակալների կուլտուրական մակարդակը։ Գերմանացիներն ավելի նվազ կասկածանքով եյին վերաբերվում նրանց նկատմամբ, և գյուղացիները, մշակելով իրենց հողը, հնարավորություն ունեցին մոտենալու ելեկտրալարին։

«Սպիտակ տիկին» կազմակերպությունը շարունակ ընդարձակվում էր։ Նա իր շոշափուկները տարածում էր Բելգիայի և Ֆրանսիայի ոկուպացիայի յենթարկված ամբողջ տերիտորիայով մեկ։ Փողի կարիքը շարունակ աճում էր։ Գնացքներին հետևողները և այլ գործակալներն ստիպված եյին աշխատել գիշեր ու ցերեկ, ըստ վորում նրանց մեծ մասն ընտանիքով էր ծանրաբեռնված։ Այժմ հենց միայն «Սպիտակ տիկնոջը» սահմանամերձ գյուղացիների միջոցով ամսական ուղարկում եյինք մոտ 10·000 ֆունտ ստերլինգ,

չհաշված այն գումարները, վոր մենք առանձին վճարում եյինք ուղեկցողներին և սահմանի վրա աշխատող գործակալներին։

Այս գումարները գլխավորապես ուղարկվում եյին 1000 մարկանոց վարկային տոմսերով, բայց նույնիսկ այսպիսի խոշոր կտրոններով պետք էր լինում ամսական ուղարկել 200 տոմս։

Վտանգը գյուղացիներին գայթակղեցնելն էր։ Մենք ամբողջովին նրանց ձեռքերումն եյինք. յեթե նրանք վորոշեյին իրենց մոտ պահել այդ փողերը, ապա մենք վոչ մի հնարավորություն չեյինք ունենա այդ գումարները լրացնելու։ Նրանք կարող եյին նույնիսկ հավատացնել մեզ, վոր իրենք անմեղ են, վկայակոչելով ուրիշ մարդկանց, վորոնց ձեռքով պետք է անցնեյին գումարները։ Բայց դրամի կորուստը շատ փոքր անախորժություն կլիներ։ Մենք ուրիշ բանից եյինք վախենում. ուղեկցողները վարձատրություն չստանալով՝ կղադարեյին աշխատելուց։ Սակայն փողի մեծ մասը իր նշանակված տեղն էր հասնում, վորովհետև «Սպիտակ տիկինը» ամեն անգամ մեզ ստացագիր էր ուղարկում։

Սահմանն անցկացնող մեր յերեք կետերը համարյա յերեք տարի շարունակ աշխատում եյին բարեհաջող կերպով։ Այնուհետև, այս կետերից մեկին սպասարկող մարդիկ հանկարծ ձերբակալվեցին։ Ամենայն հավանականությամբ, նրանք կասկած են արթնացրել նրանով, վոր շատ հաճախ եյին մոտենում լարին։ Համենայն դեպս մեզ հաջողվեց ժամանակին նախազգուշացնել «Սպիտակ տիկնոջը», վոր անհրաժեշտ է խափանել սուրհանդակի և ուղեկցողի հանդիպումը, և վորովհետև սուրհանդակի անձնավորությունը հայտնի չէր սահմանապահներին, ուստի հետագայում ձերբակալություններն այլևս չշարունակվեցին։ Գերմանացիները բռնեցին զեկուցագրերի այն վերջին կապոցը, վոր պատրաստված էր սահմանի վրայով ուղարկելու համար։ Այդ բանն անմիջական վտանգ չէր սպառնում «Սպիտակ տիկնոջը», վորովհետև բոլոր հրապարակված հաղորդագրությունները կրճատագրված եյին, սակայն զեկու-

ցաղրերի մեծ քանակությունը նախազգուշացրեց գերմանացիներին, վոր գոյություն ունի մի խոշոր կազմակերպություն, վորն աշխատում է ոկուպացիայի յենթարկված տերիտորիայում, իսկ այդ նշանակում եր ուժեղացնել հսկողությունը:

Մեզ համար ամենամեծ անախորժությունն այն եր, վոր փողերի մեծ մասը հենց այս հանձնող կայանի միջոցով եր ուղարկվում: «Սպիտակ տիկինը» մեզ անմիջապես առաջարկեց թույլ տալ պարտք վերցնելու ոկուպացիայի յենթարկված տերիտորիայում մի բանկիրից, վորը կազմակերպության անդամ եր: Ցեսթույլատրեցի նրանց գործի անցնել: Այսպիսով նրանք պարտք վերցրին 30 000 ֆունտ ստերլինգ, մինչև վոր մենք կարողանայինք նորից կարգի դցել փողի կանոնավոր առաքումը: Ինչպես «Սպիտակ տիկնոջը» միլիտարիզացիայի յենթարկելու խնդրում, այնպես էլ այս դեպքում Լոնդոնում գտնվող պետը ոգնեց ինձ հաշտություն կնքելուց հետո կատարել նաև այս խոստումը: 1919 թվականին նա իմ անունով դրամ փոխադրեց Բրյուսել, և յես կարողացա չեք տալ այնպիսի գումարով, վորը լիովին ծածկում եր նրանց պարտքը:

Արդյոք դա հսկողությունն ուժեղացնելո՞ւ հետևանքով եր, զեկուցագրերը գերմանացիների ձեռքն ընկնելո՞ւ արդյունքով, թե՞ գործակալներից մեկի անփութության պատճառով, յես այդ չգիտեմ, բայց «Սպիտակ տիկնոջ» դլխին մի դժբախտություն պատահեց:

Այն յերկու յեղբայրները, վորոնք սուրհանդակի պարտականություն եյին կատարում և ապահովում եյին Բելգիայի հարավում գտնվող Արլոնի խմբի և Լյեժի խմբի միջև յեղած կապը, ձերբակալվեցին: Ըստ հրահանգի, նրանք, Լյեժի փողոցներից մեկով անցնելիս, իրենց զեկուցագրերը պետք է ներս դցեին մի տան կիսաբաց լուսամուտով: Այդ տանն ապրում եր մի հասակավոր ամուսնացած զույգ, վորի անցյալ կյանքը հայտնի յեր և վորի վրա կարելի յեր հույս դնել: Այդ զույգի մոտ՝ եր ուղարկվել «Սպիտակ տիկնոջ» մի գործակալ, վորը, առանց իր անունը հայտնելու և առանց մի վորևե բան հաղորդելու զեկուցագրերի բնույթի մասին, համոզել եր նրանց հավաքել զեկուցագրերը և շաբաթը մի անդամ դրանք հանձնել իրենց՝ իր այցելության ժամանակ: Շնորհիվ կանոնավոր հակահետախուզության այն սիստեմի, վոր կիրառում եր «Սպիտակ տիկինը», այդ «փոստարկղը» չեր կարող իրենից վտանգ ներկայացնել: Ցերը գերմանական գործակալները բռնեցին այդ պատանիներին, «Սպիտակ տիկինը» կարողացավ իր գործակալներին հեռու պահել այդ տնից և նախազգուշացնել Արլոնի խմբին:

Դժբախտաբար, ձերբակալված գործակալներին ազատելու համար վորևե քայլ անելու վոչ մի հնարավորություն չկար: Ցերկու յեղբայրներն էլ գնդակահարվեցին Լյեժում:

Սրանք են յեղել այն մթակ կորուստները, վոր ունեցել է «Սպիտակ տիկինը»—յերեք հարյուրից ավելի գործակալներից բաղկացած և տասնութ ամիս անընդհատ գործող այդ կազմակերպությունը:

Մի անդամ ևս պատահեց մի դեպք, յերբ մազ եր մընացել, վոր «Սպիտակ տիկինը» տապալվեր: Լյեժի շրջակայքում գտնվող մի ամարանոցային տան հյուրասենյակում նստած եյին կազմակերպության յերեք անդամներ և զեկուցագրեր եյին պատրաստում Հոլլանդիա ուղարկելու համար: Զեկուցագրերն արդեն տպված եյին բարակ գործվածքի վրա և փոքր խողովակների ձևով փաթաթված եյին, իսկ յերրորդ գործակալը հենց կնքում եր զեկուցագրերը, յերբ հանկարծ սենյակ ներխուժեցին գերմանական դաղտնի վոստիկանության յերկու գործակալ և խուզարկություն կատարեցին: Կազմակերպության այն անդամը, վոր ձեռքին պահած ուներ թանդարժեք խողովակիկները, կարողացավ դրանք խոթել իր բաղկաթոռի նստելատեղի և թիկնակի արանքը: Խուզարկությունը վոչ մի բան չհայտարերեց, և բոլոր յերեքն էլ ազատ թողնվեցին:

Ինձ համար միշտ դաղտնիք մնացին այն պատճառները, վորոնք գերմանացիներին դրդում եյին խուզարկություններ և ձերբակալություններ կատարել: Ցես շատ եյի փափագում նայել նրանց արխիվը հաշտություն կնքելուց

հետո։ Զերբակալությունները միշտ հանկարծակի էին կատարվում։ Բացի իրենց սեփական գաղտնի վոստիկանությունից, գերմանացիները, անկասկած, իրենց ծառայության մեջ ունեին նաև բազմաթիվ տեղեկատու բելգիացիներ, ըստվորում մեր գործակալներն ամենից ավելի վախենում էին վերջիններից։

1918 թվականի գերմանական մեծ հարձակումից մի քանի ամիս առաջ «Սպիտակ տիկինն» իր կազմակերպությունը տարածեց Ֆրանսիայից բռնագրված տերիտորիայի Վալանսյենի հատվածում։ Այստեղ 1915 թվականին գործում եր դաշնակիցների մի հին գաղտնի ծառայություն, վորը կորցրել եր կապը Հոլանդիայի հետ։ Այժմ նա վերակենդանացավ և շուտով սկսեց մեզ ուղարկել գընացքներին հետևելու վերաբերյալ զեկուցագրեր և «ֆլանյորների» զեկուցագրեր, վորոնք ահագին արժեք ունեին մեզ համար։

«Սպիտակ տիկնոջ» վերջին նվաճումը մեզ հետ հեռախոսային կապ հաստատելու փորձն եր։ Յեթե հաշտություն չկնքվեր, այդ միջոցն իրագործված կլիներ։ Դա մի հպարտանակ կլիներ, վորը կհավերժացներ այդ հիանալի կազմակերպության առանց դրան էլ փայլուն հաջողությունները։ Նրա պետերից մեկը, բելգիական համալսարաններից մեկի ֆիզիկայի պրոֆեսոր, պարզեց, վոր հսկողությունն անհնարին է բելգիական-հոլանդական սահմանի Մաստրիխտի սեկտորում, այն վայրում, վորտեղ յերկու յերկրները սահմանազատված են միայն գետով։ Այս ռայոնում յերկու բելգիական տնակների միջև գետի տակով կարելի յե անցկացնել հարյուր յարդ յերկարությամբ հաղորդալար։ Հոլանդական կողմից տարածվում եր մի մեծ կալվածք, վորի տերը համակրում եր բելգիացիներին և պատրաստ եր թույլ տալ իր հողում, հետաքրքրվող աչքերից հեռու, սարքել մի յերկրորդ գիծ և ապարատ։

Յես գիտեի, վոր այդ սարքավորումը լավ կաշխատի, վորովհետև մենք այդ յեղանակով ռազմաճակատում արդեն բռնում էինք գերմանական հաղորդագրությունները այն ժամանակ, յերբ մեր և գերմանական խրամատների միջև յեղած հեռավորությունն զգալիորեն ավելի շատ եր, քան յենթադրվելիք գծերի միջև հեռավորությունը։ Բացի դրանից, մեր գծերը պետք է ընթռնային զուգահեռաբար, մի հիանալի պայման, վորն անհրաժեշտ է հաղորդագրությունները բռնելու համար։ Այս պլանը մշակվելիս մենք ժամանակ չեյինք կորցնում, և հեռախոսային ապարատներն արդեն մեզ ուղարկված էին Անգլիայից, յերբ զինադադարը վրա հասավ։

Անտարակույս, «Սպիտակ տիկինը» ոկուպացիայի յենթարկված տերիտորիայում գտնվող մեր կազմակերպությունների մեջ ամենալավագույն կազմակերպությունն է յեղել։ Նրանց կողմից ուղարկվող զեկուցագրերն արտակարգ նշանակություն ունեին դաշնակիցների համար։ Գրքավոր զորակայանի շնորհավորական հեռագրերը նորից և նորից հաստատում էին այդ բանը։ 1918 թ. մայիսի գերմանական մեծ հարձակման նախորեյին «Սպիտակ տիկնոջ» գնացքներին հետևող պոստերը—թվով հիսունից ավելի—հաղորդում էին մեզ զորքերի այն բոլոր տեղափոխությունների մասին, վորոնք տեղի էին ունենում Բելգիայի բոլոր հանդուցային կայարանների ու ոկուպացիայի յենթարկված Ֆրանսիայի մի շարք հանդուցային կայարանների վրայով։ Նրանց «ֆլանյորները» և, գլխավորապես, Ավենի ռայոնում գտնվող «ֆլանյոր» Ֆաբրին, տեղեկություններ էին հաղորդում մոտակա վայրերում կատարվող զորքերի կենտրոնացման մասին, հնարավորություն տալով մեզ ճանաչելու դիվիզիա դիվիզիայի հետևից, նայած թե ինչպես էին բերում նրանց և ինչպես էին նրանք մոտենում ուրիշ հատվածներից։ Դա անվիճելի մի ապացույց եր, հանդիսանում այն բանի, վոր հատկապես այդ հատվածից պետք է սկսվեր հարձակումը։

«Սպիտակ տիկինն» իր հաջողություններով պարտական է ամենից առաջ իր զեկավարների— պրոֆեսորի և ինժեների տաղանդին, ապա այն կարգապահությանը, վոր

հաջողվել եր ստեղծել միլիոնարիզացիայի միջոցով, և, վերջապես, իր գործակալների փայլուն հատկություններին, գործակալներ, վորոնք բելգիական ինտելիգենցիայի շարքերից եյին դուրս յեկել։

ՌՈՒՍԱԿԱՆ ԻՆՏԵՐՄԵԴԻԱ

Ամեն յերեկո յես ճաշում եյի Նորդ Բլաակի վրա գտնըվող Զաուերի ռեստորանում. դա Ռոտտերդամի ամենալավ ռեստորանն եր։ Թեև մետրդոտելը՝ դեր Վիլլեմը ծաղումով գերմանացի յեր, բայց և այնպես ամբողջ լավագույն հասարակությունը, ներառյալ նաև բրիտանական ռազմավոր հյուպատոսը, այդ ռեստորանն եր այցելում։

Մի քանի անգամ յես նկատել եյի խոշոր, փայլուն և շաղանակագույն աչքերով, սամույրի մանտո հագած մի դեղեցիկ ապչիկ, վորին ուղեկցում եր մոտ յերեսուն տարեկան մի մարդ, վորը, ըստ յերևության, նրա յեղբայրն եր։ Նա ուներ շատ վայելուչ տեսք, բարձրահասակ եր և շատ ուղիղ եր պահում իրեն, ավելի շուտ դա քաղաքացիական հագուստով մի սպա յեր։ Սկզբում յես նրանց վրա առանձին ուշադրություն չդարձրի։ Սակայն, մի ամբողջ շաբաթ ամեն յերեկո հանդիպելով նրանց՝ յես սկսեցի ուշադրությամբ դիտել, ընդվորում նրանք միշտ միևնույն ժամին եյին այցելում և հենց միևնույն սեղանի շուրջն եյին նստում, պատուհանի մոտ։ Աղջիկն իմ հետաքրքրությունը շարժեց թերևս նրանով, վոր թվում եր, թե հետաքրքրված է ինձանով և յերբեմն-յերբեմն թռուցիկ հայացքներ եր գցում իմ կողմն այն պահին, յերբ նրան թվում եր, թե յես նրա վրա չեմ նայում։ Մետրդոտելից իմացա, վոր նրանք ռուսներ են։

— Ամենայն հավանականությամբ, փախստականներ են,— ասաց նա։

Այդ 1918 թվականի սկզբին եր։

Մի քանի որ անց, նստելով ելեկտրական գնացք, վորն ինձ դեպի Հաագա յեր թռցնում, յես նկատեցի այդ աղջկան, վորն անցնում եր վագոնի այն ծայրը, վորտեղ յես եյի նստած։ Յերբ նա իմ դիմաց նստեց, յես տեսա, վոր ճանաչեց ինձ։ Վոչինչ ավելի բնական չեր կարող լինել, քան խոսակցություն սկսել նրա հետ։ Յես դիմեցի նրան հոլլանդերեն լեզվով, նա պատասխանեց Ֆրանսերեն, և յերբ իմացավ, վոր յես անգլիացի յեմ, խոսակցությունը շարունակեց հիանալի անգլերեն լեզվով։

Այո, նա ռուս եր։ Նա և նրա յեղբայրը փախել են Պետրոգրադից Ստոկհոլմի և Լոնդոնի վրայով և յեկել են Հոլլանդիա, վորովհետև այստեղ նրանք բարեկամներ ունեյին։ Նրանք Ռոտտերդամում մնացել եյին յերկու շաբաթ. նրա համար զզվելի յեր յեղել այդ քաղաքը, այստեղ այնքան ճանձրալի յե, բայց նրա յեղբայրն այստեղ գործեր ուներ, և նա ուղեկցում եր նրան։ Նրանք յերեկ Հաագա եյին տեղափոխվել։ Նրանք սքանչելի բնակարան ունեն Պրինցենդրախտի վրա։ Զե՞մ մտնի արդյոք նրա մոտ։ Նա վստահ եր, վոր իր յեղբոր համար շատ հաճելի կլիներ ծանոթանալ ինձ հետ։ Յեղբայրը մի տարի ապրել է Քեմբրիջում։ Քեմբրիջի յերկու ուսանողներ, վորոնք հանդիպում են իրար Հոլլանդիայում, ընդվորում նրանցից մեկն անգլիացի, մյուսը՝ ռուս։ Վորպիսի՛ զուգադիպություն։ Մենք պետք է վոր շատ ընդհանուր բաներ ունենանք։

Մեր այցետոմսերը փոխանակեցինք իրար հետ։

Յես իմացա, վոր իմ զրուցակցուհին իշխանուհի Ս.-ն է։ Պետք է խոստովանեմ, վոր այդ տիտղոսը ապավորություն թողեց ինձ վրա, բացի այդ, նա շատ գեղեցիկ եր։ Խոստացա նրանց մոտ անցնել շաբաթվա վերջում։

Յես զրուցում եյի նրա յեղբոր հետ, հաղորդում եյինք իրար Քեմբրիջի մասին ունեցած մեր հիշողությունները, քննարկում եյինք Լոնդոնի ակումբների արժանիքները, գտանք ընդհանուր ծանոթներ։ Նրանք ինձ պատմում եյին Ռուսաստանի հեղափոխության մասին և այն մասին, թե իրենց ինչպե՛ս է հաջողվել փախչել։

Իմ ամբողջ ժամանակն աշխատանքով այնքան եր ծանրաբեռնված, վոր յես նրանց հանդիպում եյի շաբաթը մի-

այն մի անգամ, դրա համար մի քանի ժամ խլելով ծառայությունից: Քրոջն ու յեղբորը ուղղակի Տանյա և Սերգեյ եյի անվանում, նրանք նույնպես ինձ իմ անունով ե-յին կոչում:

Նրանք շարունակ հետաքրքրվում եյին, թե ի՞նչ եմ ա-նում յես: Ինչո՞ւ յեմ այնքան զբաղված: Պատճառն ի՞նչ ե, վոր յես շաբաթը մի անգամից ավելի հաճախ չեմ այցելում: Նրանք շատ անգամ եյին հարցնում ինձ այդ մասին: Ցեռ փորձում եյի կատակով պատասխանել, աշխատելով խու-սափել ավելորդ հարցերից: Ցեռ չգիտեյի, վոր նրանց ամեն ինչ հայտնի յե: Բացի դրանից, յես իմ հարյուրա-վոր գործակալներին եմ ներշնչել լռություն պահպանելու անհրաժեշտությունը— դա դարձել եր ծառայության լո-զունգը, իսկ ինձ համար՝ յերկրորդ բնավորություն:

Մի անգամ յերեկոյան, սովորական դատարկախոսու-թյունից հետո հանկարծ անհարմար լռություն: Նրանք ի-բար եյին նայում, կարծես թե նրանցից ամեն մեկն ուզում եր, վոր մյուսն սկսի: Ապա, վերջապես, Սերգեյն սկսեց խոսել.

— Գիտե՞ք, մեզ հայտնի յե, թե դուք ի՞նչ եք անում: Դուք Հոլանդիայի բրիտանական դաղտնի ծառայության ռազմական բաժնի ղեկավարն եք: Մենք արդեն վաղուց գիտենք, միայն թե վախենում եյինք այդ մասին խոսել ձեզ հետ: Մեր ամբողջ համակրանքը դաշնակիցների կող-մըն ե, այդ պատճառով եյ վորոշել ենք մեր լուման մըտ-ցընել ընդհանուր գործի մեջ, չնայած մենք փախստական ենք:

— Ո՞վ պատմեց ձեզ իմ մասին,— հարցրի յես:

— Հիմար մի՛ լինեք, այդ մասին բոլորն եյ գիտեն,— ասաց Տանյան ժպտալով:

Սարսափը պատեց ինձ, յերբ Սերգեյը պատմեց, թե նրանք հանդիպել են հոլանդական դինվորական մինիստրու-թյան մի կարևոր անձնավորության և վոր յերեսուն հա-զար դուլդենով նրանք ինձ համար կկարողանան ստանալ հոլանդական բանակի մոբիլիզացիոն պլանի պատճենը:

Ցեռ հուսահատությամբ նրանց վրա նայեցի: Այդ նը-

չանակում եր, վոր պետք ե խիստ դաղարեցնեյի նրանց հետ ունեցած ծանոթությունս, թեև կարող եյի բացա-տրել նրանց, վոր բնավ չահագրգռված չեմ յեղել Հոլլան-դիայի մասին տեղեկություններ ստանալու: Անհրաժեշտ եր դդաստ լինել և թակարդից դդուշանալ: Ցեթե յես նրանց հետ շարունակեյի իմ հարաբերությունը, նրանք կարող ե-յին այս կամ այն միջոցով բռնել ինձ, որինակ, հաջորդ տեսակցության ժամանակ վկայի ներկայությամբ հանձնե-լով ինձ հոլլանդական կեղծ պլաններ, յերդում տալով այն մասին, վոր ինքս եմ խնդրել ձեռք բերել այդ պլանները: Ցես չգիտեմ, արդյոք նրանք անմե՞ղ եյին, թե՞ նրանց ոգ-տագործել են՝ ինձ վարկաբեկելու համար: Բայց այդ առաջարկությունն եյ բավական եր, վորպեսզի մենք իրա-բից հեռանայինք: Ցես դիտեյի, վոր Հոլլանդիայի դեմ ուղղված լրտեսության ամենափոքր կասկածն անգամ ինձ համար նշանակում եր անհապաղ արտաքսում, իսկ մեր բոլոր գործակալների համար՝ լուրջ դժվարություններ: Բոլոր նրանց, ովքեր աշխատում եյին ինձ հետ, յես նախա-զդուշացրել եյի անմիջապես դաղարեցնել վորևե ծանոթու-թյուն այն մարդկանց հետ, վորոնք նրանց այդպիսի առա-ջարկություն կանեյին: Ցեվ յես ինքս պետք ե հենց նույն սկզբունքով վարվեյի: Ցես այնքան շատ բան եյի խաղի մեջ դրել, վոր ռիսկ անել չեյի կարող:

Ցես նրանց ցավակցություն հայտնեցի, վոր այդպի-սի հրաշալի բարեկամությունն իր վախճանին հասավ: Հենց իրենց իսկ ոգտի համար խորհուրդ տվի այլևս չմի-ջամտել այդ գործին և հեռացա առանց հետագա բացա-տրությունների: Ցեթե ուզենայի, կարող եյի նրանց մատ-նել հոլլանդական իշխանություններին:

Նրանց վարմունքը կարող եր յերկու ձևով բացատրը-վել: Ռուսաստանում ճոխ ապրելուն վարժված ռուս սպի-տակ-գվարդիականների մեծ մասի նման՝ նրանք չեն կարո-ղացել կրճատել իրենց ծախսերը և կարճ ժամանակից հե-տո վատնել են այն բոլորը, ինչ նրանք ունեցել են: Թան-դարժեք իրերը և մորթեղենները լոմբարդում վաճառելուց ստացած փողը չեր կարող յերկար ժամանակ բավակա-

նանալ: Այն ժամանակ նրանք հնարել են դրամ ձեռք բերելու այդ յեղանակը, կարծելով, թե դրանով ոգնում են գաշնակիցներին, բայց առանց նկատի ունենալու իմ դերության դժվարությունները Հոլլանդիայում:

Կարող է լինել և այնպես, վոր գերմանացիները կապ են հաստատել նրանց հետ և նրանք գիտակցաբար թե անգիտակցաբար թույլ են տվել թակարդ լարել իմ դեմ: Այդ անախորժ խոսակցությունից հետո, յերբ յես ստիպված եյի հեռանալ, մեկ թե յերկու անգամ ևս հանդիպեցի նրանց Հաագայում: Նրանք ձևացնում եյին, թե ինձ չեն ճանաչում:

ՊԱՅՔԱՐԸ ՀՈԼԼԱՆԴԻԱՅՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԱՂՏՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Ցեսարդեն ասել եմ, վոր հոլլանդացիները հարկ եյին համարում հանդուրժել իրենց յերկրում թե՛ դաշնակիցների և թե՛ գերմանացիների գաղտնի ծառայությունների ներկայությունը: Քանի վոր նրանք կարող եյին, յեթե ուզենային այդ անել, ուղած բոպեյին մեզադրել մեզ վորևե հանցանքի մեջ, ապա մենք վորոշել եյինք դժգոհության վոչ մի առիթ չտալ նրանց: Այդ նկատառումով մեր բոլոր գործակալները խիստ հրահանգ եյին ստացել՝ վոչ մի հետախուզական աշխատանք չկատարել Հոլլանդիայի դեմ և վոչ վոքի հետ բանակցություններ չվարել Հոլլանդիայի մասին վորևե տեղեկություն ձեռք բերելու կամ հանձնելու առթիվ:

Մենք ձեռք եյինք բերում զանազան պաշտոնատար անձնավորությունների բարեհաճ տրամադրությունը, նրանց մատակարարելով Գերմանիայի մասին այնպիսի տեղեկություններ, վորոնք այս կամ այն կողմից վերաբերում եյին իրենց հայրենիքին: Այդ բանը բարձրացնում եր նրանց շանսերը հոլլանդական իշխանությունների աչքում, և վորովհետև նրանք ամեն կերպ աշխատում եյին այդպիսի տեղեկություններ ստանալ մեզանից, ապա ուրեմն միանգամայն բնական եր, վոր մենք էլ դրանց փոխարեն պահանջեյինք ու ստանայինք տեղեկություններ գերմանացիների մասին: Հասկանալի յե, վոր այդ արվում եր առանց հոլլանդական կառավարության համաձայնության. այդ մի մասնավոր համաձայնություն եր առանձին պաշտոնատար անձնավորությունների և մեր միջև: Սակայն մենք չեյինք խաբում մեզ այդ պաշտոնյաների վարմունքի նկատմամբ: Նրանք պարզապես ծառայում եյին իրենց հայրենիքին, իսկ մենք խիստ կասկածում եյինք, վոր նրանք, ամենայն հավանականությամբ, միևնույն սիստեմով աշխատում են գերմանացիների հետ: Համենայն դեպս մենք ավելի քան բավարարված եյինք: Մենք ստանում եյինք կարևոր ինֆորմացիա և, վոր ավելի կարևոր եր, ապահովում եյինք մեր գործակալների պաշտպանությունը: Մեզ համար բավական դժվար եր պայքարել գերմանական գաղտնի վոստիկանության դեմ, սակայն տասն անգամ ավելի վատ կլիներ, յեթե ստիպված լինեյի ընդհատակում ապրել Հոլլանդիայում և մեր գործակալներին պաշտպանել հոլլանդացիների դեմ:

Հոլլանդացիներն իրենց սահմանի վրա կազմակերպել եյին գնացքներին հետևող յերկու պոստ. մեկը՝ Կերկրադում, վորը տեղեկացնում եր Մյունխեն-Գլադբախ գծով կատարվող յերթևեկության մասին, իսկ մյուսը տեղեկացնում եր Վելկենռեդտի վրայով, Լյեժ-Հերբեստալ գծով կատարվող յերթևեկության մասին: Սակայն վերջինս շատ չնչին արժեք ուներ, վորովհետև այդ գիծն անցնում եր հոլլանդական սահմանից այնքան մեծ հեռավորությամբ, վոր միայն ամենապարզ որերին կարելի յեր վորևե բան զանազանել: Ցերբեք չեյի կարող հասկանալ, թե այդ յերկու մեկուսացած պոստերն ինչ արժեք կարող եյին ունենալ հոլլանդական հետախուզական ծառայության համար, բայց մեզ համար, վոր ստանում եյինք նրանց զեկուցագրերի պատճենները, դրանք արժեքավոր եյին, վորովհետև նրանց տվյալները հաստատում եյին մեր պոստերի տվյալները:

Մեզ համար ավելի մեծ նշանակություն ուներ հասցեների ցուցակն այն բոլոր նամակների, վորոնք Հոլլանդիա-

յից ուղարկվում էին ռազմաճակատում գտնվող գերմանական զինվորներին: Այդ հասցեների կանոնավոր ստացումը հնարավորություն էր տալիս մեզ ճանաչելու հասցեներում ցույց տրված զորագնդերի գտնված վայրը և հաճախ մեզ տալիս էր նոր զորագնդերի կամ մարտկոցների համարները: Առանց մեր ձեռքի տակ ունեցած գերմանական դաշտային փոստակայանների մեծադին տեղեկագրքի՝ այդ հասցեներն անոգուտ կլինեին մեզ համար: Բայց նրա ոգնությամբ այնպիսի մի հասցե, ինչպես «Ֆելդ-Ֆերել Կարլ Մյուլլերին, հդ. 55, դաշտային փոստ 68», հնարավորություն էր տալիս մեզ վորոշել 55-րդ հետեվակ գնդի գտնված վայրը, վորովհետև մենք կարող էինք գլանել ռազմաճակատի այն հատվածը, վորին սպասարկում է № 68 դաշտային փոստակայանը: Ամեն որ մեզ հաղորդվող հասցեների թիվն ապշեցուցիչ էր: Այդ թիվը յերբեմն հասնում էր յերկու հարյուրից մինչ յերեք հարյուրի:

Սակայն Հոլլանդիայում մեր ստացած բոլոր տեղեկությունների մեջ ամենաարժեքավորներն այն ծածկագիր հեռագրերի պատճեններն էին, վորոնք ուղարկվում էին գերմանական դեսպանության, հյուպատոսարանների և գերմանական ուրիշ ծառայությունների կողմից: Նրանց ճիշտ արժեքը ինձ հայտնի չէր, վորովհետև դրանք Լոնդոն էին ուղարկում վերծանելու համար:

Մենք հոլլանդական նավահանգստային իշխանություններից, նավերի կապիտաններից և ձկնորսներից ևս ստանում էինք ռազմածովային արժեքավոր ինֆորմացիա՝ նրանց կողմից նկատված ականների կամ սուզանավերի մասին: Նրանք հետևում էին նաև գերմանական այն նավերին, վորոնք զինթափված էին Անտվերպենում:

Հոլլանդիայի չեզոքությունը հսկայական նշանակություն ուներ բրիտանական հետախուզական ծառայության համար, վորովհետև ստեղծում էր մի այնպիսի հենարան, վորը հնարավորություն էր տալիս մեզ «հետնադռնից» գործակալներ ուղարկել Գերմանիա և օկուպացիայի յենթարկված տերիտորիաները:

Յերկու կողմերի նկատմամբ էլ համբերատար վերաբերմունք ցույց տալու իրենց քաղաքականությամբ հոլլանդացիները կանխում էին բռնության գործողությունները գերմանական գաղտնի ծառայության և մեր միջև, վորոնք, անտարակույս, տեղի կունենային, յեթե յերկու ծառայություններին էլ վիճակված լիներ թաղնվել ընդհատակում: Մենք հարձակում կգործեցինք Ռոտերդամի գերմանական գաղտնի ծառայության շտաբի վրա. նրանք հենց նույնը կանեին մեր նկատմամբ: Ամենայն հավանականությամբ մենք կդիմեինք Չիկագոյի մեթոդներին. ծառայություններից ամեն մեկը ճանաչում էր մյուս ծառայության սուրհանդակներին և ամեն մեկը գիտեր, վոր նրանք իրենց մոտ ունեն մյուս կողմի համար անդին զեկուցագրեր. յուրաքանչյուր ծառայության պետերին կամ զեկավարներին կհափշտակեին և կտանեին հակառակորդի յերկիրը և այնտեղ նրանց կոտիպեին տալ անհրաժեշտ տեղեկությունները:

Դրա փոխարեն լիակատար անդորրություն էր թագավորում: Մեր կրճատագրերը գիշերներն առանց հսկողության թողնվում էին սովորական դանձապահարաններում և հեշտ վորս էին հանդիսանում կողպեքներ կոտրող վորևե գողի համար: Մեր սուրհանդակները նույնպես առանց վորևե հսկողության էին շրջում: Յերկու կողմերն էլ այնքան մեծ առավելությամբ էին ոգտվում, վոր չէին կարող վտանգի յենթարկել այդ:

Ինձ հայտնի յեն բռնության միայն յերկու գործողություն. առաջինը, յերբ գերմանացիները բռնեցին հոլլանդական տերիտորիայում, էլեկտրական լարի մոտերքը յերկու ֆրանսիական գործակալների, Ֆուկենոյին և Կրեզանոյին, և նրանց տարան իրենց մոտ՝ բելգիական տերիտորիա, իսկ յերկրորդը, յերբ մենք բռնեցինք Հաագայի բրիտանական դեսպանության մեջ աշխատող դավաճանին և ուղարկեցինք Անգլիա:

Դաշնակիցների գաղտնի ծառայությունների միջև հարաբերություններն ամենևին չեյին կարգավորված: Պատերազմի ժամանակ, յերբ թղթախաղի եյին դրված հայրենիքի ապագան և միլիոնավոր մարդկանց կյանքը, անհավանականություն է թվում այն, վոր Հոլլանդիայում,—

յեթե չհաշվենք Ֆրանսիացիներին,— վոչ միայն բացակայում եր համագործակցությունը, այլ ուղղակի թշնամություն գոյություն ուներ դաշնակիցների զաղտնի ծառայությունների միջև և նույնիսկ զինվորական մինիստրության ու բրիտանական Գլխավոր զորականի զաղտնի ծառայությունների միջև։ Չեմ չափազանցի, յեթե ասեմ, վոր յես անհամեմատ ավելի շատ վախենում եյի դաշնակիցների մյուս զաղտնի ծառայությունների հարուցած արգելքներից և միջամտությունից, քան զերմանական զաղտնի վոստիկանության կողմից կիրառվող վորևե հակազդեցական միջոցից։

Զինադադարից հետո յես լիկվիդացիայի յենթարկեցի բրիտանական բոլոր զաղտնի ծառայությունների գործակալական կազմակերպությունները, ընդվորում սերտ կապ եյի պահպանում Ֆրանսիական գործակալական կազմակերպությունները լիկվիդացիայի յենթարկող Վիվիենի և բելգիական գործակալական կազմակերպությունները լիկվիդացիայի յենթարկող Վերտոմենի հետ։ Ուստի, կարող եմ ամենայն իրավամբ հաստատել, վոր զինվորական մինիստրության ծառայությունը, վորն յես ղեկավարում եյի պատերազմի վերջին յերկու տարվա ընթացքում, ստանում եր ինչպես հինգ տոկոսն այն բոլոր տեղեկությունների, վորոնք ուղարկվում եյին Բելգիայի և հյուսիս-արևելյան Ֆրանսիայի օկուպացիայի յենթարկված տերիտորիաներից։

Յերբ բելգիական սահմանը համեմատաբար աղատ եր, մնացած զաղտնի ծառայությունները խոշոր աշխատանք եյին կատարում օկուպացիայի յենթարկված այդ տերիտորիայում։ Սակայն զերմանական հսկողության ուժեղացումից հետո սահմանի վրայով հաղորդագրությունն այնքան զժվարացավ, վոր միայն իմ գործակալներն ունեյին սահմանից զեկուցագրեր հանձնելու կամ ուղարկելու այնպիսի միջոցներ և յեղանակներ, վորոնց վրա կարելի յեր հույս դնել։

Գլխավոր զորականի բելգիական և բրիտանական զաղտնի ծառայությունների պետերը, նստելով իրենց ա-

ռանձնասենյակներում Ֆրանսիայում, Հոլանդիայի իրենց գործակալներին զրգում եյին դեպի նոր նվաճումներ։ Յերբ նրանք տեսան, վոր իրենց ջանքերն ապարդյուն են մնում, սկսեցին ինտրիգներ լարել մեր դեմ, մեղադրելով մեզ այն բանում, վոր չենք ցանկանում միասին աշխատել, մոնոպոլիզացիայի յենթարկել սահմանի վրայով տելեկություններ հաղորդելու բոլոր հնարավորությունները և Հոլանդիայի բոլոր լավագույն գործակալների ոգտագործումը։

Յես գիտեյի, վոր յեթե նույնիսկ մենք վերազանցեյինք ել մեր լիազորությունները, ապա նրանք, միևնույն ե, չեյին կարող աշխատանք կատարել. նրանց գործակալներին պակասում եր անհրաժեշտ կարգապահություն և կազմակերպում։ Այնուհետև, պետերը պետք ե զեկավարեյին հենց տեղում, ճանաչելով և ուղղություն տալով իրենց գործակալների ամեն մի քայլին, և վոչ թե այդ անեյին նամակագրությունների միջոցով։ Ինձ չարունակ վիճակվում եր արտակարգ վորոշումներ ընդունել, վորովհետև թեկուզ մի ժամվա հապաղումը կարող եր Բելգիայի ամբողջ կազմակերպության կորստյան պատճառ դառնալ։ Այդպիսի պայմաններում ի՞նչպես կարելի յեր շտապ գործերով դիմել ուրիշ յերկրում գտնվող մարդկանց, վորոնք հաճախ ամենատարրական հասկացողություն չունեյին տեղական պայմանների, տեղագրության, սովորությունների կամ լեզվի մասին, ինչպես նաև այն մարդկանց, վորոնք նույնիսկ չեյին ճանաչում սահմանի վրա աշխատող գործակալին, վորի հետ պետք եր լինում գործ ունենալ։ Վերջապես, գործակալներից առավելագույն ոգուտներ ստանալու համար անհրաժեշտ եր, վոր տեղում նրանց զեկավարեր մի այնպիսի մարդ, վորը հասկանում ե ռազմական գործը և ճիշտ իմանում ե, թե հատկապես ի՞նչպիսի տեղեկություններ ե պահանջում դաշնակիցների գերագույն հրամանատարությունը։

Դրան վորպես ապացույց կարող ե ծառայել այն, վոր, յերբ յես 1916 թվականին յեկա Հոլանդիա, բրիտանական զաղտնի ծառայությունը օկուպացիայի յենթարկված

Բերիտորիայում վոչ մի գործակալ և սահմանն անցկացնող վոչ մի պոստ չուներ։

Մեզ ամենից ավելի գլխացավանք պատճառեց բելգիական ծառայության պետ մայոր Մաժը։ Նրան հայտնեցինք, վոր Որամը և նրա յեղբայրները, վորոնք աշխատում եյին բելգիական յերկաթուղայինների մեջ, Հոլլանդիայի մեր կազմակերպության հենարանն են հանդիսանում։ Նա գործն այնպես տարավ, վոր յերկու յեղբորն ել զինվորական ծառայության կանչեցին Ֆրանսիայում։ Յերկու տարի չարունակ մենք հարյուրավոր հեռագրեր և նամակներ եյինք ուղարկում, ամեն տեսակի միջոցներ եյինք գործադրում, վորպեսզի խափանեյինք մայոր Մաժի գործունեությունը։ Վերջիվերջո մենք հաղթեցինք. մինչև զինադադար այդ յերկու յերիտասարդներն ել դեռ մեր տրամադրության տակ եյին մնում։ Բայց Հոլլանդիայի բելգիական իշխանությունների ներկայացուցիչները բոլոր միջոցներով խայտառակում եյին մեզ դրա պատճառով և անարգանքի սյունին եյին գամում։

Բացի դրանից, ճնշում եր գործադրված բելգիական յերկաթուղիների վարչության վրա, վորպեսզի նա մեզ մոտ աշխատող բելգիացի յերկարթուղայիններին ծառայության կանչի՝ բելգիական ռազմաճակատից այն կողմը գտնվող յերկաթուղիներում։ Որամի հորը, վոր մինչև պատերազմը յեղել եր բելգիական յերկաթուղիների վարչության պետերից մեկը, պարսավանք եր հայտարարված։ Այստեղ դարձյալ ստիպված յեղանք դիմելու բոլոր փորձված միջոցներին, վորպեսզի պահենք մեր մարդկանց։ Բելգիական ծառայությունը նման գործողությունների համար վոչ մի խելացի հիմք չուներ, վորովհետև մեզ մոտ աշխատող մարդիկ զգալիորեն ավելի մեծ ծառայություններ եյին մատուցում դաշնակիցներին՝ մեզ համար Հոլլանդիայում աշխատելով, քան կմատուցեյին վորպես զինվոր խրամատներում կռվելով կամ Ֆրանսիայում յերկաթուղու վրա աշխատելով։ Ուստի բելգիական ծառայության վարմունքը կարող եր առաջացած լինել միայն նախանձից և վրդովմունքից այն բանի համար, վոր բրիտանական դաղտնի ծառայությունն, աշխատելով բելգիական գործակալների հետ Հոլլանդիայում, Բելգիայից ավելի շատ տեղեկություններ եր քաղում, քան նրանք։

Դատապարտելով մայոր Մաժի տակտիկան, պետք է ընդունել, վոր նրա աշխատանքը լուրջ կերպով կաղում եր միջոցների բացակայության պատճառով։ Բելգիայում գտնվող գործակալներն աշխատում եյին հայրենասիրական հակումներից դրդված կամ առանց դրամական վարձատրության կամ— կարիքի դեպքում— մենք նրանց վճարում եյինք ապրուստի մինիմում։ Բայց սահմանն անցկացնելու գործը ղեկավարող գործակալներն ուրիշ կերտվածքի մարդիկ եյին և մեզ չափից դուրս պահանջներ եյին ներկայացնում։ Մայոր Մաժը, հավանաբար, կարծում եր, վոր յեթե մենք չբավարարենք նրանց պահանջները, ապա նա կարող եր ախոյանություն անել մեզ հետ։ Սակայն փորձով գիտեյի, վոր յեթե յես նրանց չվճարեյի այն դումարները, վոր պահանջում եյին, նրանք կդիմեյին մաքսանենգության, այդ նրանց համար ավելի պակաս վտանգավոր և ավելի ձեռնտու կլիներ։ Վորովհետև մենք չեյինք կարող առանց այդ մարդկանց յոլա դնալ, ապա մենք բավարարում եյինք նրանց պահանջները։ Խնդիրը արդյունքն եր և վոչ թե խնայողություն անելը, կամ վորոշ ծառայությունների համար վարձատրելու չուրջը ուրիշ դաղտնի ծառայությունների հետ համաձայնության դալը։

Յես առանձին ընդհարումներ չեմ ունեցել բելգիացի ժողեյի կամ վան Տիշելենի հետ, վորոնք ղեկավարում եյին դլխավոր զորակայանի դաղտնի ծառայությունները Հոլլանդիայում։ Սակայն Ֆրանսիայում գտնվող նրանց պետերը խիստ դատապարտում եյին մեզ նրանց աշխատանքի քիչ հաջողության համար և իրենց նետերն ուղղում եյին անմեղ Տ.-ի դեմ, վորը վոչ մի առնչություն չուներ բրիտանական դաղտնի ծառայության ռազմական սեկցիայի հետ, բացի նրանից, վոր նա ինձ տալիս եր այն դումարները, վորոնք յես ժամանակ առ ժամանակ պահանջում եյի նրանից։ Բոլոր միջոցները գործադրում եյին, վորպեսզի հեռացնեյին Տ.-ին, ընդվորում հույս ունեյին, վոր յես նրա տեղը կդրավեմ։ Բայց յես միշտ պաշտպանում ե-

յի նրան, վորովհետև գիտեյի, վոր իմ գործերն էլ բավական էյին ինձ, և բարձր էյի գնահատում այն ծառայությունները, վոր նա մատուցում էր՝ ապահովելով մեր անվտանգությունը, պայքարելով մյուս դաղտնի ծառայությունների դեմ, ոգնելով հաշվետվություն տանելու գործում և կազմակերպելով Լոնդոնի պետին զեկուցագրեր ուղարկելու գործը:

Ռուսական կազմակերպությունը թույլ էր, փոքր և անդործունյա: Նրա կողմից վոչ մի թշնամական յելույթ չեր սպասվում: Սակայն նախազգուշացված լինելով ուրիշ պաշտոնակիցների հետ ունեցած մեր վորձով՝ մենք բարվոք էյինք համարում կանխել վորևե հնարավոր բաղխում, ցույց էյինք տալիս նրանց նույն ծառայությունը, վորպիսին ցույց էյինք տալիս Հոլլանդիային: Մենք Հապագայի ռուսական ռազմակցորդ, գնդապետ Մայերին հանձնում էյինք այն բոլոր զեկուցագրերի պատճենները, վորոնք վորևե արժեք էյին ներկայացնում Ռուսաստանի համար:

Ֆրանսիացիների և մեր միջև հիանալի հարաբերություններ էյին ստեղծվել: Ցեսս չեմ հիշում և վոչ մի ընդհարում: Հոլլանդիայի նրանց պետը, Լեֆեվրը, պատրաստ էր մեզ համար մաքրելու գործունեության ասպարեզը: Ֆրանսիական գլխավոր զորականին կից նրա պետը, գնդապետ Վալլները, հասկանում էր դրությունը. նրան մենք պարտական ենք նրանով, վոր նա չեր ստիպում իր տեղական ներկայացուցչին մեզ համար վտանգավոր քայլեր անել:

ԱՄԵՆՈՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔ

Մեր ծառայության շենքը գտնվում էր Մաաս գետի ափին, վորի շնորհիվ մեր դիմաց չկային տներ, վորտեղից կարելի լիներ դիտել ներս ու դուրս անողներին և լուսանկարել նրանց: Մենք զբաղվում էյինք մի ամբողջ հարկ. մեր միակ հարևանը հոլլանդական ռազմածովային ֆիրման եր, վորի տերը Տ.-ի բարեկամներից եր, վերջիններս անդլոֆիլներ էյին, այդ պատճառով էլ մենք կարող էյինք նրանց վստահել: Բայց դրանով էլ սահմանափակվում էյին բոլոր առավելությունները:

Իր ներքին պլանավորումով մեր շենքը, անկասկած, ամենավատն եր այն բոլոր շենքերից, վորոնք կարող էյին ընտրված լինել դաղտնի ծառայության համար: Ամբողջ հարկը բաղկացած եր մեկ մեծ դահլիճից, վորը բարակ տախտակե միջնորմներով բաժանված եր դրասենյակների և փոքր սենյակների. այդ միջնորմներից լսվում եր ամեն մի բառ, յեթե չչուկով չարտասանվեր:

Այսպիսի դրությունը մեծ անհարմարություն եր ստեղծում աշխատանքի համար և ջղերի մեծ քայքայում եր պատճառում մեզ: Ինձ մոտ նստած էյին լինում գերմանական դասալիքներ կամ գերմանական գործակալներ, իսկ մեզանից մի քանի վոտնաչափ հեռավորության վրա թելադրում էյին զեկուցագրեր—մի մասը գնդապետ Ոպպենհայմին ուղարկելու, իսկ մնացածները դիվանագիտական փոստով Լոնդոն ուղարկելու համար: Այս անասելի պայմաններում մենք ստիպված էյինք կամ հարցուփորձը կատարել գրավոր ձևով, միմյանց հանձնելով գրավոր հարցեր և պատասխաններ, կամ խոսել փսփսոցով: Դրսի աշխարհին հասնող միակ ձայնը գրամեքենաների չխչխկոցն եր: Ցերբ յես ուզում էյի մի ուրիշ շենք տեղափոխվել, Տ.-ն յես կանգնեցրեց ինձ իմ մտադրությունից, հաղորդելով, վոր հոլլանդական իշխանությունները պնդում են, վոր բրիտանական դաղտնի ծառայության բոլոր բաժինները միևնույն հարկի տակ գտնվեն, և մենք ստիպված յեղանք հնազանդվել:

Ինձ միայն մի բան եր մնում անելու— հոդ տանել, վոր պատերը ձայն չանցկացնեն: Փորձեցի ինքս անձամբ լուծել այդ խնդիրը՝ ներսի կողմից պատից վեց մատնաչափ հեռու դնելով փայտե միջնորմներ և առաջացած տարածությունը լցնելով թեփով, վորը սակայն, շատ քիչ արդյունք տվեց:

Զարմանալի չե, վոր յես ծառայության շենքը համարում էյի միայն վորպես զեկուցագրեր տպելու և գերման-

նական դասալիքներ և ուրիշ անձնավորություններ ընդունելու մի վայր, վորոնց այցելությունը չեր կարող մեզ անվնաներկել։ Իսկ կազմակերպության և մեր գաղտնի գործակալների հետ հանդիպելու ամբողջ աշխատանքը տեղի չեր ունենում Ռոտտերդամի այն չերեք տներից մեկում, վորոնք չես վարձում եչի կարճ ժամանակով և շարունակ փոխում եչի։ Այն դեպքերում, չերբ հատուկ նախազգուշություններ եչին պահանջվում, չես հանդիպման համար գնում եչի Հաագա, Ամստերդամ կամ վորևե մի ուրիշ քաղաք։ Այս մշտական չրջագայությունները վոչ միայն անհրաժեշտ եչին գերմանական զգաստ գործակալների դիտողություններից խուսափելու համար, այլ նաև հանդիսանում եչին իմ գործակալներին միմյանցից մեկուսացնելու գործն իրականացնելու անհրաժեշտ պայմանը։

Միակ անախորժությունն այն եր, վոր Տ.–ն կամ (վոր անհամեմատ ավելի հաճախ եր պատահում) Անգլիայի իշխանություններն ստիպում եչին ինձ աշխատանքի ընդունել ինձ համար նրանց կողմից ընտրված ոգնականների։ Չես նրանցից մի քանիսին փորձեցի, իսկ հետո վճռականապես հրաժարվեցի նոր ոգնականներ ընդունել նույնիսկ փորձելու համար։ Դրանք անպայման ազդեցիկ անձնավորությունների բարեկամներ կամ վորդիներ եչին. այդ անձնավորություններն իրենց չափից ավելի կարևոր անձնավորություններ եչին համարում նրա համար, վորպեսզի տալեն դրամեքենայի վրա, և ցանկանում եչին անմիջական հաղորդակցության մեջ մտնել գործակալների հետ կամ մանրամասն տեղեկություններ ստանալ մեր կազմակերպության մասին։ Բացարձակ գաղտնապահության իմ քաղաքականության չնորհիվ նրանց փորձերն անհաջողության եչին մատնվում։

Շուտով իմ քաղաքականությունը վայլուն կերպով արդարացրեց իրեն։ Մի անգամ Տ.–ն չեկավ ինձ մոտ և հայտնեց.

— Չես ունեմ մի չերիտասարդ ես, Անգլիայից։ Չեզ մոտ չկա՞ արդյոք մի փոքր տեղ նրա համար։ Մենք մեզանից հետ կվանենք Կ.–ին, չեթե չարունակենք հրաժարվել այն մարդկանցից, վորոնց նա ուղարկում է մեզ։ Այդ Մանենը, վորին նրանք ուղարկել են մեզ, հոլանդացի չե։ Չես վստահ եմ, վոր նա ձեզ ոգտակար կլինի։

— Չես բավականաչափ անախորժություններ ունեցա վերջին չերկուսի հետ։ Այլևս չեմ ուզում փորձել։

Չերևակայեցեք իմ վրդովմունքը, չերբ չես հետադայում իմացա, վոր Մանենն աշխատում է գնդապետ Ոպպենհայմի մոտ, մշակում է մեր զեկուցագրերը և ծածկագրում է հեռագրեր՝ Գլխավոր զորակայանին հանձնելու համար։ Տ.–ն գիտեր, վոր Ոպպենհայմի ծածկագրողն աշխատանքով ծանրաբեռնված եր և, վորպեսզի ազատվի Մանենից, նրան ուղարկել է գնդապետի մոտ։ Չես անզոր եչի վորևե բան անելու և թույլ տվի, վոր դեպքերն ընթանան իրենց կարգով։

Չերեք ամսից հետո Տ.–ն հաղորդեց ինձ հետևյալը.

— Մանենը ձերբակալված է և նստած է դեսպանատանը։ Մենք նրան բռնեցինք հեռագրերի պատճենները գերմանացիներին հանձնելիս։ Չես չեկա, վորպեսզի նախազգուշացնեմ,— ասաց նա ամբողջովին չփոթված։

Նա չատ հուզված եր։ Չես նրան հանգստացրի, բացատրելով, թե իմ կողմից գնդապետ Ոպպենհայմին ուղարկված զեկուցագրերից վոչ մեկում ցույց չեն տրված աղբյուրները։

Վորպեսզի Մանենին ստիպեն աշխատել իրենց համար, գերմանացիները կիրառել եչին իրենց սովորական մեթոդը. նրանք այնքան են հետևել նրան, մինչև վոր հայտաբերել են նրա մոլությունները։ Այն ժամանակ նրանք սկսել եչին նրան չանտաժի չենթարկել։ Մանենը վատ սովորություններ ուներ. խաղացող և հոմոսեքսուալիստ եր։ Գերմանացիները հնարավորություն են ընձեռել նրան անձնատուր լինելու այդ մոլություններին, իսկ հետո հրապարակելու սպառնալիքի տակ ստիպել են պատրաստել ավելորդ պատճեններ այն բոլոր փաստաթղթերից, վոր նա տպագրում եր գնդապետ Ոպպենհայմի մոտ, և այդ պատճենները հանձնել իրենց։

Ծածկագրողներից մեկը հետաքրքրվել է ավելորդ

պատճենների վիճակով և նկատել է, որ Մանենը դրանք տուն է տանում: Նրան հետևող մեր հակահետախուզական գործակալները տեսել են, թե ինչպես նա այդ պատճենները հանձնում է գերմանական գործակալներին: Դեսպանատուն վերադառնալուն պես նրան ձերբակալել էին և ստիպել խոստովանել: Մեր առաջ կանգնած էր մի դժվար խնդիր: Մենք գործ ունեցինք հոլլանդական հպատակի հետ, որը ոչ մի հանցանք չի գործել հոլլանդական օրենքների դեմ և հերիք էր որ դուրս գար բրիտանական դեսպանատնից և նա արդեն իրեն կզգներ հոլլանդական հողի վրա: Բայց և այնպես մենք պետք է հեռացնեինք նրան Հոլլանդիայից, որպեսզի նա չկարողանար հետագայում մեզ վնաս պատճառել:

Սակայն Մանենը, յերկչոտ լինելով՝ այնքան էր վախեցած, որ ոչ մի ամենափոքր ընդդիմադրություն անգամ ցույց չտվեց և պատրաստ էր մեկնելու այնտեղ, ուր նրան կհրամայեն: Նա թույլ տվեց փոխադրել իրեն շոգենավով, որն ուղևորվում էր դեպի Անգլիա: Տեղ հասնելուն պես նա հսկողության տակ առնվեց ընդհուպ մինչև գինաղաղարը:

Մանենն ամենավերջին ոգնականն էր, որին ուղարկել էին ինձ մոտ Լոնդոնից: Դրանից հետո ինձ իրավունք տրվին անձամբ ընտրելու ինձ համար աշխատակիցներ, ինչպես յես այդ անում էի այն ժամանակից իվեր, յերբ յես Հոլլանդիա յեկա:

Բացի Կոլլինզից, իմ մոտ աշխատում էին յերեք աշխատակից: Նրանք լավ էին իմանում ֆլամանդերեն, հոլլանդերեն, ֆրանսերեն, գերմաներեն և անգլերեն լեզուները, որպիսի հանդամանքը շատ կարևոր էր, որովհետև բոլոր զեկուցագրերը պետք է թարգմանվեին անգլերեն: Ամենակարևորը, սակայն, այն էր, որ նրանք ընդունակ էին լսելու և յերբեք ոչ մի բանի մասին չէին հարցնում: Դրանք էին հենց այն հատկությունները, որոնց ինձ չհաջողվեց գտնել Լոնդոնից ուղարկված յերկու ոգնականների մեջ:

Մեզ մոտ աշխատանքի որոշակի ժամանակ չկար: Յերբեմն, յերբ ստանում էինք մի կույտ զեկուցագրեր, այդ մարդիկ աշխատում էին մինչև կես գիշեր, առանց յերբեք որևէ տրտունջ հայտնելու:

Պատկերացրեք ձեզ այն հուզումը, որով հետևում ենք որևէ դիվիզիայի տեղաշարժմանը՝ ռուսական ճակատից դեպի արևմտյան ճակատ: Լյեժից ստացված զեկուցագրերի համաձայն՝ այն տեղով անցել են հիսուն զինվորական գնացք Հերբեստալից և Գերմանիայից: Լյեժ–Նամյուր պոստը զեկուցագրում է. զորքերի փոխադրման ոչ մի նշան չկա: Վերջապես, Լյեժ–Բրյուսսել պոստի զեկուցագրերից իմանում ենք, որ բոլոր 50 գնացքներն էլ ճամբա ընկան դեպի Բրյուսսել: Բրյուսսելի չորս պոստերի զեկուցագրերից մենք տեսնում ենք, որ դիվիզիան գտնվում է դեպի Գենտ տանող ուղու վրա: Սակայն Գենտի պոստերը ոչ մի տեղեկություն չեն տալիս դիվիզիայի ժամանման մասին: Ի՞նչ պատահեց դիվիզիայի հետ: Շատ հավանական է, որ նա դատարկվել է: Վաշտերեկեյից ստացված զեկուցագրերը ոչ միայն մեզ հաղորդում են, որ ամբողջ դիվիզիան դատարկվել է այդ կետում, այլ նաև ցույց են տալիս նրա համարը—212: Առաջ այդ դիվիզիան ռուսական ճակատումն էր:

Այսպես էր ամեն ոք—համեմատել իրար հետ ամեն տեսակի զեկուցագրեր: Բացի դրանից, Կոլլինզի և իմ ուսերին ընկած էր ամբողջ կազմակերպական աշխատանքն ոկուպացիայի յենթարկված տերիտորիայում. հետևել սահմանի վրայից կատարվող անցումներին, վտանգի ամենափոքր նշան յերևալու դեպքում կազմակերպությունները փոխարկել սահմանն անցկացնող մի կետից մյուսը, գրամ և հրահանգներ ուղարկել, գործակալներ ուղարկել, ուղեկցողներին հրահանգներ տալ՝ վարկաբեկված կամ ընդհատակում թաղնվող գործակալներին սահմանից անցկացնելու դեպքում:

Բացի դրանից, մեզ վիճակված էր գործակալներ ուղարկել Գերմանիա և զեկուցագրեր ստանալ այն գործակալներից, որոնք վերադառնում էին Գերմանիայից,

չտալել տեսակցություն ունենալու կարևոր դաղտնի գործակալի հետ, հարց ու փորձ անել դասալիքներին:

Այս աշխատանքի վրա պետք է ավելացնել նաև դատասխանատվությունը գործակալների կյանքի պաշտպանության համար: Նրանց անուններն ու հասցեները յես պահպանում եյի վորպես սրբազան դաղտնիք: Վոչ վոք չը-գիտեր դրանք, բացի Կոլլինզից և ինձնից, իսկ նրանցից շատերը նույնիսկ նրան հայտնի չեյին: Նրանց վերաբերյալ տեղեկություններն անգիր եյինք անում կամ ծածկագրված ձևով պահում եյինք մեր դանձապահարանում: Գերմանիայում կամ ոկուպացիայի յենթարկված տերիտորիայում աշխատող բոլոր գործակալներն ունեյին համարներ կամ հորինված անուններ (մականուններ): Իսկական անուններն ու հասցեները չեյին մտցվում վոչ այն զեկուցագրերում, վոր յես ստանում եյի Գերմանիայից կամ ոկուպացիայի յենթարկված տերիտորիայից, և վո՛չ ել դրամեքենաներով արտատպված զեկուցագրերում, վորոնք յես հանձնում եյի գնդապետ Ոպպենհայմին՝ Գլխավոր զորակայանին հաղորդելու համար, կամ Տ.-ին՝ դիվանագիտական փոստով ուղարկելու համար:

Ցես լիովին իրավացի եյի, վոր բրիտանական իշխանություններին ուղարկելիք զեկուցագրերում ցույց չեյի տալիս աղբյուրներ վոչ թե նրա համար, վոր չեյի ուզում, վորպեսզի իմ անձնակազմը իմանար դրանք, այլ նրա համար, վոր շարունակ դոյություն ուներ արտահոսման վտանգ: Դրան վորպես ապացույց կարող ե ծառայել վոչ միայն Մաննինի գործը, այլ նաև մեր բոլոր զեկուցագրերի բռնվելը այն ժամանակ, յերբ Նուուկից դեպի Հարվիչ մեկնող «Բրյուսսել» նավը կանգնեցվեց գերմանական ականակիրների կողմից: Ցերբ Անգլիայի պետից ստացվեց տագնապալի հեռագիր, վորը հարցնում եր, թե ի՞նչ զեկուցագրեր եյին գտնվում դիվանագիտական փոստում, յես վստահությամբ պատասխանեցի, վոր վոչ մի աղետ չի պատահել, վորովհետև, չնայած բոլոր զեկուցագրերը բռնված են, անանուն տեղեկատուներն անվտանգ են մնացել:

«ԴԱՆԻԱՑԻՆ»—ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒՅԶ

Ցես նրան գիտեյի վորպես «Դանիացի»: Թե ի՞նչպես եր նրա անունը և վո՞րտեղացի յեր— յես չգիտեյի, թեև մի քանի անգամ հանդիպել եյի նրա հետ: Նա զուսպ, դատարակված, կուլտուրական սկանդինավցու տեսք ուներ: Համենայն դեպս, նրա մեջ վոչ մի բան ցույց չեր տալիս, թե նա ականավոր հետախույզ ե, վորպիսին նա եր իրականում: Ցերբ յես ավելի լավ ճանաչեցի նրան, հասկացա, թե ինչով ե բացատրվում նրա հաջողությունը: Նա բարձր վորակավորում ունեցող ինժեներ-նավաշինարար եր: Նա չգիտեր, թե ի՞նչ բան ե ջղայնությունը, միշտ զուսպ եր և հիանալի տիրապետում եր իրեն: Վոչինչ չեր վրիպում նրա իրազեկ աչքից: Բացի դրանից, նա ոժտված եր զարմանալի հիշողությամբ, հիշում եր ծովային կառույցների ամենավոքր մանրամասնություններն անգամ:

Ժամանակ առ ժամանակ կարդում եյի նրա զեկուցագրերը և զարմանում եյի նրանց վրա: Իմ կարծիքով, նա այն ամենաարժեքավոր գործակալն եր, վոր ունեյին դաշնակիցները Գերմանիայում: Գոնե ինձ այնպես եր թվում, վոր այդպիսի գործակալին աշխատանքում ներգրավելու ծառայությունը պատկանում ե Անգլիայում գտնվող պետին: Նա միակ գործակալն եր Գերմանիայում, վորպիսին ուներ իր տրամադրության տակ մեր ծովային բաժինը: Նրա գիտողությունն ընդգրկում եր գերմանական բոլոր նավաշինարանները և ցեպելինների բոլոր ոդանավակայանները: Ցես կարող եմ տալ նրա գործունեության միայն ամենաընդհանուր տեսությունը, վորովհետև նրա զեկուցագրերը գլխավորապես չոշափում եյին ծովային հարցերը, վորոնք մշակվում եյին ծովային բաժնի կողմից: Բայց նա աչքի ընկնող ծառայություններ եր մատուցում նաև մեր ռազմական բաժնին:

Նրա հաջողության պատճառն այն եր, վոր նա համոզել եր գերմանացիներին, թե իբր ինքը նրանց համար ե աշխատում: Վորպես ներկայացուցիչ դանիական նավաշի-

նաբաձի, վորը յերբեմն-յերբեմն նավաքարշ չոգենավեր և ծովային սարքավորանքներ եր հայթայթում գերմանացի-ներին, նա ոգտվում եր Քիլ, Վիլհելմսհաֆեն, Համբուրգ, Բրեմեն, Եմդեն, Լյուբեկ, Ֆլենսբուրգ և նավաշինական ուրիշ կայաններ մեկնելու իրավունքով: Նա այնքան հըմ-տորեն եր տանում իր ֆիրմայի գործը, վոր հեղեղի նը-ման պատվերներ եյին ստացվում, իսկ ֆիրման անկարող եր այդ բոլոր պատվերները գլուխ բերել: Նրա ժողովրդա-կանությունը գերմանական պատվիրատուների մոտ և վեր-ջիններիս հավատը դեպի նա՝ անսահման եյին: Յերբ նա հարկ յեղած ժամանակ դիմում եր Գերմանիայի վրայով Հոլլանդիա գնալու թույլտվություն ստանալու համար: ապա հաճույքով եյին տալիս նրան այդ թույլտվությունը, մանավանդ այն պատճառով, վոր նա գերմանական իշխա-նություններին առաջարկում եր Հոլլանդիայում ձեռք բե-րել անհրաժեշտ հումք, ինչպես նաև նավաքարշ չոգենա-վեր և փոքր նավեր, իբր թե իր ֆիրմայի համար, բայց իրականության մեջ Գերմանիայի համար: Նրա գնում-ներն այնքան հաջողակ եյին, վոր նրան թույլ եր տրված կանոնավորապես, յերեք չաբաթը մեկ անգամ, մեկնել Հոլլանդիա:

Գերմանացիները չեյին կասկածում, վոր «Դանիա-ցու» հաջող գնումների համար մենք եյինք պատասխանա-տու: Տ.-ն իր կապերի շնորհիվ, նրան արժեքավոր տեղե-կություններ եր տալիս նյութեր և նավաքարշ չոգենավեր գնելու հնարավորությունների մասին: Բրիտանական իշ-խանությունները կարող եյին բողոքել նման առևտրական գործարքների համար, բայց մեր չմիջամտելը հնա-րավորություն եր տալիս նրան վերադառնալ Գերմանիա և նվաճել իշխանությունների բարեհաճ տրամադրությու-ն՝ պատմելով, թե իրեն ինչպե՛ս և հաջողվել անգլիացի-ներից թաքցնել իր գնումները: Այս միջոցով նա կարևոր անձնավորություն դարձավ գերմանացիների աչքում, իսկ աննշան նվերներ բերելով հաղուստի առարկաների, մը-թերքների կամ պերճանքի առարկաների ձևով, վորոնք այն ժամանակ դժվարությամբ եյին ճարվում Գերմանիա-յում, կարողացավ ձեռք բերել նավաշինարանների պետե-

րի և ուրիշ պաշտոնատար անձերի բարեհաճ տրամադրու-թյունը:

Ոգտվելով իր արտակարգ հիշողությունից՝ նա կարո-ղանում եր Հոլլանդիա գալուն պես նստել ու մանրամաս-նորեն նկարագրել կառուցվող և վերանորոգման մեջ գտնվող նավերը և տալ ռազմածովային արժեքավոր ին-ֆորմացիա, վորը լիակատար վստահությամբ ոգտագործ-վում եր ծովակալության կողմից:

Նրանից մենք տեխնիկական մանրամասն տեղեկու-թյուններ եյինք ստանում այն սուզանավերի մասին, վո-րոնք գերմանացիները կառուցում եյին կարճ ժամանակա-միջոցում: Մենք դիտեյինք կառուցվող և վերանորոգվող սուզանավերի թիվը և, վոր ամենից կարևորն եր,— կոր-ծանված սուզանավերի թիվը: Սուզանավերի դեմ դաշնա-կիցների մղած պայքարում խորասուզվող ոդային ռում-բեր, ականներ և հրանոթային կրակ ոգտագործելու ժա-մանակ հաճախ դժվար եր ասել, թե արդյոք սուզանավն ընկղմվե՞լ է, թե սուզվել է իր սեփական ցանկությամբ:

Յերբ գերմանական «Դեյչլանդ» սուզանավը պատրաստ եր Ամերիկա մեկնելու, դրանից շատ առաջ մենք «Դանի-ացուց» ստացել եյինք նրա մանրամասն նկարագրությա-նը: Նրանից իմացանք նաև այն ռազմանավերի մասին, վորոնք քաղաքակված եյին առևտրական նավատորմի շո-գենավի դիմակի տակ: Նա հաղորդեց «Մյովե»-յի բարե-հաջող վերադարձի մասին, յերբ մենք կարծում եյինք, թե նա դեռ բաց ծովումն է գտնվում: Նրա շնորհիվ բրի-տանական ծովակալությունը ճիշտ տեղեկություններ ստա-ցավ Ֆուտլանդի մոտ տեղի ունեցած ճակատամարտում գերմանացիների կրած կորուստների մասին, ինչպես նաև ստացավ մանրամասն հաշվետվություն այն վնաս-վածքների մասին, վոր ստացել եյին հաջող կերպով վե-րադարձող նավերից մի քանիսը:

«Դանիացին» հետևում եր ցեպելինների բոլոր ոդա-նավակայաններին: Նրանից հաշվետվություններ եյինք ստանում այն վնասվածքների մասին, վորոնք հասցվել է-

մին այդ դիրիժաբլներին դեպի Անգլիա կատարած նրանց թռիչքների ժամանակ։

Նրա զեկուցագրերի մեջ ամենասենսացիոն զեկուցագիրը դերհեռաձիգ թնդանոթների մանրամասն նկարագրությունն եր։ Այդ թնդանոթները մի քանի ամիս հետո յերեք հարյուր ֆունտանոց արկերով ռմբակոծեցին Փարիզը 110–120 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Սեն-Հորեն անտառից։ «Դանիացուց» մենք լրիվ հաշվետվություն ստացանք Հելգոլանդում արտադրվող վերոհիշյալ թնդանոթների փորձարկումների մասին։

Բացի տեխնիկական ինֆորմացիայից, նա մեզ արժեքավոր տեղեկություններ եր հաղորդում նաև Գերմանիայի քաղաքական ու տնտեսական դրության մասին։ Վերջինս նա չփում ուներ բարձրագույն պաշտոնատար անձերի և զինվորական շրջանների հետ, ապա նա մեզ լրագրեկ եր դարձնում այն մարդկանց տեսակետին, վորոնք գիտեյին, թե ինչ ե տեղի ունենում իրականում, այլ վոչ թե փողոցից վերցրած մարդկանց տեսակետը, վորոնց ասվում եր այն, ինչում վոր ցանկանում եր նրանց հավատացնել գերմանական գերագույն հրամանատարությունը։

«Դանիացու» համար ամենավտանգավոր մոմենտը նրա և մեր փոխադարձ հանդիպումներն եյին։ Բայց նա ամենեվին իր մոտ չեր ունենում վարկաբեկող վաստակներ— թղթակցություններ, ցուցակներ, նամակներ կամ հատուկ թղթեր և թանաքներ։ Նրա հետ հանդիպելու համար մենք ոգտագործում եյինք այն յեղանակները, որ կիրառում եյինք հակառակորդի տերիտորիայում աշխատող բոլոր գործակալների հետ հանդիպելիս։ Ռոտերդամում և Հաագայում մենք մեր տրամադրության տակ ունեյինք միքանի տուն, վոր մենք շարունակ փոխում եյինք։ Ծառայությունից մեզ տուն գցելու համար գործադրում եյինք բոլոր հնարավոր միջոցները, վորպեսզի համոզվեյինք, թե մեզ չեն հետապնդում։ Վորքան հնարավոր եր, մենք աշխատում եյինք այդ գործակալներին միշտ յերեկոյան հանդիպել, վոչ միայն նրա համար, վոր նրանց չճանաչեն, այլ նաև նրա համար, վոր նրանց չլու-

ռանկարեն, վորի մեջ գերմանացիները մեծ վարպետներ եյին։ Մեր տուն մտնող վորևե մարդու լուսանկարը գերմանացիների աչքում պատճառ եր՝ գնդակահարելու համար։

«Դանիացին» հենց վոր Հոլլանդիա յեր գալիս, մեզ կանչում եր հեռախոսով, հայտնելով իր գալու մասին և իրեն անվանում եր նախորոք պայմանավորված հնարավի անունով։ Մենք նշանակում եյինք հանդիպման ժամանակը մեր տներից մեկում՝ Ա.Բ.Գ. կամ Դ., վորոնց հասցեները նրան հայտնի եյին։ Այս յեղանակով վերացվում եյին այն վտանգները, վորոնք կարող եյին առաջանալ այդ խոսակցությունը բռնելու դեպքում։ Հեռախոսակայանի հեռախոսավարուհիներից մեկը կարող եր գերմանական գործակալ լինել կամ թե գերմանացիները կարող եյին գծերի արգելակում սարքել և մեր խոսակցությունները բռնել, ինչպես վոր մենք այդ բանն անում եյինք մինչև այն ժամանակ, յերբ մի հոլլանդացի հեռախոսագծային հսկիչ հայտաբերեց այդ։

Մեզ մոտ գալուն պես «Դանիացին» իսկույն նստում եր զեկուցագրեր գրելու։ Նա գրում եր գերմաներեն լեզվով. զեկուցագրեր գրելը յերբեմն տևում եր յերեք-չորս ժամ։ Նա ճիշտ տեղեկություններ եր տալիս գերմանական բոլոր նավաշինարանների մասին, ինչպես, որինակ, Բլոմ և Ֆոս՝ Համբուրգում, «Վուլկան»՝ Բրեդովում՝ Շտետտինի մոտ, Շիխաու՝ Ելբինգում և Դանցիգում, Վեզեր Ֆիրմա՝ Բրեմենում, «Գերմանիա» նավաշինարանը, Դանցիգյան նավաշինարան։

Յերբ յես առաջին անգամ տեսա նրան զեկուցագիրն առանց վորևե դիտանքի գրելիս, ապա իմ մեջ միտք ծագեց, վոր նա վորոշ փաստեր հնարում է։ Սակայն մեր կատարած մի շարք ստուգումներից հետո, վորոնք հաստատում եյին «Դանիացու» կողմից մեզ հանձնված տեղեկությունների ճիշտ լինելը, իմ մեջ այդ կասկածները փարատվեցին։ Հենց վոր նա ավարտում եր գրելը, զեկուցագիրն անհապաղ ուղարկում եր ինձ մոտ ծառայության տեղը, վորտեղ նա թարգմանվում, ծածկագրվում և հեռագրով հաղորդ-

վում եր Լոնդոն։ «Դանիացին» Հոլլանդիայում մնում եր սովորաբար յերկու-յերեք որ, վորպեսզի ծովակալությունը կարողանար հեռագրով հաղորդել զեկուցագրերի կապակցությամբ առաջացած ինչ-վոր հարցեր, կամ հաղորդել նրան, թե նա ի՞նչ պետք է իմանա Գերմանիա վերադառնալիս։

«Դանիացին» չարունակեց աշխատել մինչև զինադադարը։ Նրան վճարում եյինք հսկայական գումարներ, վորոնք զգալիորեն գերազանցում եյին այն գումարները, վոր ստանում եյին մեր մյուս գործակալները։

———

ԴԻՏՈՒՄ ԾՈՎԱՓԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՌԱԴԻՈԱԿԱՆԱԿԻՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Գերմանական սուզանավերի և ականակիրների բազաները գտնվում եյին Ոստենդե, Զեեբրյուգգե և Բլանկենբերգե նավահանգիստներում, ըստվորում առաջին յերկուսն ամենակարևորներն եյին, վորովհետև ջրանցքներով միացած եյին Բրյուգգեյի հետ, ուր վոչ այնքան մեծ նավերը կարող եյին թաղնվել դաշնակիցների հարձակման դեպքում և վորտեղ կարելի յեր սուզանավեր սարքել Գերմանիայից ուղարկված մասերից։ Հասկանալով Ֆլանդրիական ափի նշանակությունը՝ գերմանացիներն ամեն ինչ անում եյին նրա ամրացման համար։ Դրա համար նրանք այնտեղ ունեյին ծանր թնդանոթների մարտկոցներ և մեծ թվով սահմանակներ, վորոնք ոգտագործվում եյին նաև դեպի Անգլիա թռիչքներ կատարելու համար։ Մեր պարտականությունն այն եր, վոր լրացնեյինք ոդային հետախուզության աշխատանքը՝ ծովակալությանը հաղորդելով ամեն հնարավոր տեղեկություններ՝ ծովափի զանազան մարտկոցների և ոդանավակայանների տեղադրման մասին։ Մենք ունեյինք ինֆորմացիայի չորս աղբյուր. հետախույզներ, գերմանական դասալիքներ, բելգիական փախստականներ և, վերջապես, անմիջական դիտողություն։ Հոլլանդական սահմանը Զեեբրյուգգեյից ընդամենը յոթ մղոն հեռավորությունից եր անցնում, և լավ հեռադիտակի միջոցով նույնիսկ ամպամած որը կարելի յեր հետևել գերմանացիների գործունեությանը այս փոքր արհեստական նավահանգստում։

Ռազմական գործողությունների ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում մեր գործակալներից մեկը հեռադիտակով ամեն որ դիտում եր Կաճանդայից, վորը հոլլանդական տերիտորիայում ամենամոտիկ կետն եր Զեեբրյուգգեյի և սահմանի միջև։ Նա տեղեկություններ եր հաղորդում Զեեբրյուգգեյում կանգ առնող սուզանավերի և ականակիրների ժամանելու և հեռանալու մասին և ականային խափանիչների ու հողահան գործիքների գործունեության մասին։

Նկատի առնելով այն, վոր բոլոր մարտկոցները խնամքով քողարկված եյին, սահմանի վրա աշխատող մեր գործակալը նրանց տեղադրությունը կարող եր վորոշել միայն մոտավորապես և այն ել այն ժամանակ միայն, յերբ նրանք կրակում եյին։ Սակայն նույնիսկ այսպիսի մոտավոր տեղեկությունները մեզ համար արժեքավոր եյին, վորովհետև դրանք հնարավորություն եյին տալիս ստուգելու փախստականների և մանավանդ դասալիքների զեկուցագրերը և գլխավոր վորակայանին ու ծովակալությանը ցույց եյին տալիս ոդային հետախուզության և դրան հաջորդող ռմբակոծման նպատակները։

Ծովափի մարտկոցների վերաբերյալ ամենարժեքավոր տեղեկություններն ստացվեցին գերմանական ռազմածովային կորպուսից փախած յերկու դասալիքներից, այն կորպուսի, վորը պատերազմի բոլոր տարիներին դրավել եր Ֆլանդրիայի ափը։ Սահմանի մեր գործակալը, վորը գտնվում եր Կաճանդային մոտիկ, տեսել եր այդ յերկու դասալիքներին այն ժամանակ, յերբ նրանք անցնում եյին սահմանը, և, հրահանգներին հակառակ, ինքն անձամբ նրանց բերեց ինձ մոտ՝ Ռոտտերդամ։ Հարցաքննելով նրանց զանազան սենյակներում, յես կարողացա բաղդատել այն բոլորը, ինչ նրանք ասում եյին, և նրանց

հաղորդած տեղեկությունները համեմատել այն տեղեկությունների հետ, որոնք արդեն հայտնի էին մեզ։ Նրանց զեկուցագրերը լիովին ճշմարտանման էին։ Նրանք ինձ ցույց տվին մի քանի նոր մարտկոցներ և, բացի դրանից, արժեքավոր ինֆորմացիա տվին թնդանոթների կալիբրի և նրանց հեռաձգության մասին։ Առաջին անգամ յես էի, որ նրանցից իմացա տարբեր մարտկոցների գերմանական անունները, ինչպես, օրինակ, «Կայզեր Վիլհելմ», «Գերեն», «Դեյչլանդ», «Յեգիլիա», «Տիրպից» և «Հինդենբուրգ»։

Բայց ամենից ավելի ինձ հուզեց այն, որ նրանցից մեկը պարզեց այն գաղտնիքը, որ մենք վաղուց էինք ուզում իմանալ։ Կաճանդայում աշխատող մեր սահմանային գործակալը միքանի անգամ հաղորդել էր հիդրոպլանների մանեվրների մասին Զեերբյուգդեյում, ընդվորում այդ մանեվրներին մասնակցել էր մի արագնթաց մոտորանավակ, որի մեջ, ինչքան էլ այդ տարորինակ թվա, վոչ մի անգամ չի տեսել զեկորդի։ Սկզբում յես վոչ մի ուշադրություն չդարձրի այդ տեղեկությունների վրա, այդ վերաբերելով դիտողի ինչ-որ սխալի, բայց նա այնքան էր պընդում, թե մոտորանավը վոչ վոք չէր զեկավարում, որ վերջիվերջո նրան հաջողվեց ինձ էլ համոզել այդ լանում։ Ցերկու դասալիքներն էլ, կարծես թե իրար հետ խոսք մեկ արած, սկզբում հայտարարում էին, որ վոչինչ չգիտեն այդ մասին։ Սակայն հարյուր գուլդենանոց բանկային տոմսի տեսքը նրանցից մեկին ստիպեց խոսել այդ մասին։

— Ի՞նչ էին նշանակում մոտորանավերի և հիդրոսավառնակների այդ մանեվրները Զեերբյուգդեյում,—հարցրի յես։

— Նավակները ռադիոյով զեկավարվում էին հիդրոսավառնակներից,— յեղավ պատասխանը։

Այնուհետև նրանից իմացա, որ մոտորանավերն իրենց ցռկամասում ունեն ականներ։ Նավակները սարքավորված էին սովորական մոտորներով և զեպի նպատականշանն էին ուղղվում ռադիոյով հիդրոսավառնակներից։ Նրանք նշանակված էին հանկարծակի հարձակում գործելու համար անգլիական ռազմանավերի վրա, որոնք պարբերաբար յերևում էին Ծովափի մոտ և զնդակոծում գերմանական բաղաքներն ու մարտկոցները։ Առանց ժամանակ կորցնելու այս նորությունը հեռագրեցի Լոնդոն։ Ծովակալությունը հարցրեց հետագա ինֆորմացիայի մասին։ Մի քանի չարաթ անց գերմանացիներն իրենց նոր նավերը գործադրեցին ռազմանավերի դեմ, բայց, ի վիչտ նրանց, մենք ժամանակին ձեռք էինք առել այնպիսի միջոցներ, որոնք չիզոքացնում էին այդ մոտորանավերի գործունությունը։

Վորովհետև բնակիչների մեծ մասը կամ Ծովափից հեռացել էր Ծովից ու ողից կառուցված ամրակոծությունների ժամանակ տների քարուքանդ լինելու պատճառով կամ եվակուացիայի յեր յենթարկված գերմանացիների կողմից, դրա համար էլ այդ դռում չատ քիչ բելգիացիներ էին մնացել։ Այդ իսկ պատճառով միանգամայն անհնար էր հետախույզ ուղարկել այնտեղ և մեզ մնում էր բավականանալ այն բելգիացի մակույկավարների զեկուցագրերով, որոնք նավարկում էին Բրյուգդեյի և Հոլլանդիայի միջև յեղած ջրանցքներով։ Ցերբ մենք ստանում էինք այդ տեղեկությունները, նրանք արդեն կորցնում էին իրենց հրատապությունը, բայց որովհետև Ծովափի մարտկոցների մեծ մասը բետոնե հիմքի վրա յեր սարքվում և չէր կարող իր տեղը փոխել, ուստի ժամանակը մեծ զեր չէր խաղում։ Ծովափի պաշտպանության կառուցվածքներին վերաբերող տեղեկությունները մակույկավարները հավաքում էին Ծովափից դեպի Բրյուգդե տեղափոխվող պատահական փախստականներից։

Սակայն մակույկավարների զեկուցագրերի մեջ մեզ ամենից ավելի հետաքրքրում էր գերմանացիների գործունեությունը հենց Բրյուգդեյում։ Նավահանգստում կարող էին խարիսխ գցած կանգնել մոտ յերեսուն սուզանավ և նույն քանակությամբ էլ տկանակիրներ։ Մեզ հետաքրքրում էին տվյալները վոչ միայն հակառակորդի՝ նավահանգստում ունեցած ռազմանավերի թվի, այլ նաև կառուցվող նավերի թվի մասին։ Նրանցից վոմանք հավաք-

վում էին Գերմանիայից ուղարկված մասերից, մյուսները կառուցվում էին Անտվերպենի նավաշինարաններում, վորոնցից ամենակարևորներն էին Կոկերելի նավաշինարարները:

Ողային հետախուզությունը, ողալուսանկարահանումը, գերմանական դասալիքները, մեր դործակալ-մակույկները և Կաճանդայի մեր սահմանային դործակալ Մարեսկոյի անընդհատ դիտողությունը ծովակալությանն ապահովում էին պահանջվող ինֆորմացիայով:

Բացի Զեերբյուդդեյին հետևելուց, մենք հետևում էինք նաև Շելդային, վորպեսզի Անտվերպենում դտնված չոգենավերին արդելէինք սողանցել դեպի դերմանական նավահանդիստները, վորտեղ նրանք կարող էին վերասարքավորվել՝ դաշնակիցների ռազմանավերի վրա հարձակվելու համար կամ ոգտագործվել ուրիշ նպատակների համար:

Ուստի, յերբ Անտվերպենի մեր դործակալը հաղորդում եր, թե ավելի քան յերկու տարի անդործ կանգնած չոգենավի վրա սկսում եր դողորշի յերևալ, մենք, բնականաբար, մեր ուշադրությունը լարում էինք և այդ մասին անմիջապես դեկուցում էինք ծովակալությանը.

ՀԱԿԱՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ

Զեղոք յերկրի քաղաքացու համար Անգլիա քնկնելը հեշտ դործ չեր: Զեղոք նավերի նավաստիներին չեր թույլատրվում ափ իջնել. վիզաները տրվում էին չեղոք յերկրների միայն այն քաղաքացիներին, վորոնց բարեհուսությունը, անցյալը և քաղաքական համակրանքը կասկածներ չէին առաջացնում: Յուրաքանչյուր չեղոք յերկրում դոյություն ուներ հակահետախուզություն, և շատ մարդիկ խիստ զարմացած կլինեին՝ տեսնելով այն ճիշտ տեղեկությունները, վոր հավաքվել էին նրա մասին՝ վիդա տալուց առաջ:

Բրիտանական հակահետախուզությունը, վոր տեղավորված եր Տ.-ի դրասենյակում՝ Ռոտերդամում և աշխատում եր դե Մեարի ղեկավարությամբ, նման կազմակերպության մի ընորոշ որինակ եր հանդիսանում: Վոչ մի հոլլանդացի չեր կարող վիզա ստանալ, մինչև վոր նրա դիմումը դե Մեարի կողմից չքննվեր: Զեղոք յերկրահպատակների այն անունները, վորոնք կասկածվել են հակառակորդի հետ հարաբերություն ունենալու և դերմանոֆիլ լինելու մեջ, դրանք մտցված էին լինում բրիտանական «սև ցուցակի» մեջ, վորը կար բոլոր դեսպանատներում և անցագրի դործեր վարող բոլոր սպաների մոտ: Վորևե մեկի անունն այդ ցուցակի մեջ մտցնելը նշանակում եր ավտոմատիկ կերպով նրան արդելել Անգլիա մեկնել:

Յես չգիտեմ, չեղոք յերկրների քաղաքացիներից վոմանք ոգտվո՞ւմ էին արդյոք դիվանագիտական փոստով, թե վոչ, այդ բանը նույնիսկ պարզելը համարյա անհնարին եր: Բայց և այնպես ինձ հայտնի յեր, վոր Մատա Խարին կասկածվում եր դրանում: Այդ վտանգը մենք ստիպված էինք հաշվի առնել, բայց նրա դեմ մենք անզոր էինք: Ամենայն հավանականությամբ, դործը տեղի յեր ունենում այնպես, վոր վոմն քաղաքացի «Սմիթ» իր յերկրի՝ Լոնդոնի դեսպանատան մեջ ունենում եր մի բարեկամ, վորին նա նամակներ եր հանձնում «Զոնսի»— իրենց ընդհանուր ծանոթի համար, վորը մնացած եր լինում հայրենիքում: Դիվանագիտական փոստը բաց անելիս դտնում էին այդ նամակը և ավտոմատիկորեն ուղարկում ըստ պատկանելության: Իսկ այդ արարողությունը կարող եր տեղի ունենալ և հակառակ ուղղությամբ: Բիչ հավանականություն կա, վոր դիվանագիտական ներկայացուցիչը դիտակցաբար նպաստեր դեկուցագրերը հանձնելուն, բայց նա կարող եր այդ անել, վորպեսզի լավություն ցույց տա մի դեղեցիկ կնոջ կամ մի բարեկամի, վորն, անկասկած, հավատացրել է նրան, թե իր խնդիրքի միակ շարժառիթն այն է, վոր ցանկանում է խուսափել բրիտանական դրաքննության պաշտոնյաներին իր անձնական դործերի հետ ծանոթացնելուց:

Բացի դրանից, դե Մեսրի գործակալները հետևում էին Հոլլանդիայում գտնվող գերմանական բոլոր հայտնի գործակալներին: Հետևելով նրանց կյանքին ու հանդիպումներին՝ մենք հաճախ արժեքավոր տեղեկություններ էինք ստանում նրանց մասին, ովքեր զեկուցագրեր էին հանձնում գերմանացիներին: Դե Մեսրի ամենալավագույն գործակալները ծերունի Խասսը և նրա յեղբոր աղջիկն էին: Վոչ վոք գլխի չեր ընկնի կասկածելու, թե այդ ծերունին կամ նրա պարզ արտաքինով աղջականուհին անգլիական գաղտնի ծառայության գործակալներ են: Նրանք բնավորությամբ այնքան թույլ էին յերևում, վոր նույնիսկ փոքրը հասարակության մեջ չեյին կարող ուշադրություն դրավել դեպի իրենց: Բացի այդ, նրանք լավ գիտեյին լեզուները, խելոք էին, գնող և ոժտված էին անսահման համբերությամբ— հատկություններ, վորոնք անհրաժեշտ էին հակահետախուզության գործակալների համար:

Վերջապես, չեզոք յերկրներում գտնվող մեր հակահետախուզական կազմակերպությունները, Անգլիայի մեր պետի պահանջով, կարող էին ստուգել ուղած մարդու կամ նրա մասին ստանալ հարկավոր տեղեկություններ, ինչպես, որինակ, պարզել կասկածելի նամակների հասցեատերերին:

Զարմանալի յե, թե հետախույզը վո՞րքան հաճախ է բռնվում վորևե մանր բանով: Հիշում եմ մի դեպք, յերբ բրիտանական դրաքննիչը հետաքրքրվեց մի նամակով, վորը հասցեագրված եր Հոլլանդիայում ապրող մի ինչ-վոր մարդու: Դե Մեսրը պարզեց, վոր այդ մարդը գերմանական հետախույզ եր: Այդ նամակում, վորն, անկասկած, ուղարկված եր շինծու հասցեով Անգլիայում, ասված եր, վոր հետագայում բոլոր նամակները պետք է ուղարկվեն յերկու հազար և այլն հասարով: Լոնդոնում միայն յերկու կամ յերեք փողոց ունեյին այդքան տներ: Չեռք առնված հետաքննության արդյունքն այն յեղավ, վոր ձերբակալվեց գերմանական գործակալը, վորը վորպես «փոստարկղ» եր ծառայում:

Հոլլանդիայում յես, բնականաբար, ավելի շատ հանդիպում ունեյի գերմանական գաղտնի ծառայության բելգիական բաժնի հետ, քան վորևե մի ուրիշի հետ: Բելգիայի գերմանական հակահետախուզության պարտականությունն եր այնտեղ կանխել լրտեսությունը: Ցեսս չարունակ ընդհարվում եյի նրա հետ: Գերմանական հակահետախուզությունը բոլորովին առանձին եր աշխատում իր գաղտնի ծառայությունից, վորի միակ ֆունկցիան եր գործակալներ ուղարկել դաշնակից յերկրները և հավաքել նրանց ուղարկելիք զեկուցագրերը:

Գերմանական հակահետախուզական ծառայության բելգիական բաժինը, կամ գաղտնի վոստիկանությունը, ուներ իր շտաբը Բրյուսսելի Բեռլեմոն փողոցի վրա: Նրա գործակալները դարանակալում եյին մեզ և ամեն մի քայլափոխին մեր հարգանքին ու հիացմունքին եյին արժանանում: Պատերազմի սկզբին ծառայության ղեկավարը վոմն Բերգանն եր, վորն առաջ յեղել եր Դյուսսելդորֆի գերմանական հակահետախուզության ղեկավարը: Նրա պարտականությունն եր քայքայել մեր գործակալությունը և միաժամանակ հետևել Բելգիայի մի քանի միլիոն բնակիչներին: Բայց վորքան տարորինակ եր, վոր Բերգանը վոչ մի բառ ֆրանսերեն չգիտեր և բելգիացիների հետ բանակցություններ վարելիս պետք է հույս դներ իր ողնական Գինկհոֆֆի վրա, վորը դեռ պատերազմից առաջ աշխատել եր Ֆրանսիայում մսագործի դիմակի տակ:

Բելգիայի գերմանական գաղտնի ծառայությունն աշխատում եր մի առեղծվածային կնոջ ղեկավարությամբ, վորը հայտնի յեր «Ֆրաու Դոկտոր» անունով և ուրիշ շատ անուններով: Նա մի գեղեցիկ, միջին տարիքի դեր կին եր՝ ամուր և դաժան բնավորությամբ: Անտվերպենում գտնվող իր շտաբից նա գործակալներ եր ուղարկում Անգլիա և Ֆրանսիա: Նրա մասին պատմում եյին, թե նա իր սեփական ձեռքով դնդակահարել է մեկ կամ յերկու գործակալների, վորոնք խաբել եյին նրան:

«Ֆրաու Դոկտորի» քաղաքականությունն եր՝ այնքան վախեցնել իր գործակալներին, վոր նրանք, վախենալով նրա վրեժխնդրությունից, չհամարձակվեյին իրեն դավա-

ճանել: Նրա մասին տեղեկությունների մեծ մասը մենք ստանում էինք մի բելգիացուց, որը կարճ ժամանակով աշխատել էր նրա մոտ: Նրա զեկուցագիրը մեկն է եղել այն առաջին հաղորդագրություններից, որ ես ֆարդացել եմ գաղտնի ծառայության մտնելիս:

Զնայած «Ֆրաու Դոկտորի» և Բեռլինի շտաբի ջանքերին, հարցաքրքրությունների (որ մենք գտնում էինք յերբեմն-յերբեմն մեր ձեռքն ընկած գործակալների մոտ) պարզ էր, որ գերմանացիները շատ քիչ տեղեկություններ էին ստանում Անգլիայից: Վորպես հետևանք, նրանք քիչ-քիչ իրենց ուշադրությունը կենտրոնացնում էին Ռուսաստանի վրա և, ամենայն հավանականությամբ, Միացյալ Նահանգների վրա:

ԳԱՂՏՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԼԻՎՎԻԴԱՑԻԱՅԻ ՅԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Պատերազմը վերջացավ, բայց իմ աշխատանքը շարունակվում էր[1]:

Ցես մեկնեցի Լյեժ և այցելեցի «Սպիտակ տիկնոջ», դաշնակիցների գաղտնի կազմակերպություններից ամենախոշոր կազմակերպության, շտաբը: Լյեժում ես ուղեվորվեցի այն հասցեյով, որ Հոլլանդիայում ինձ բերանացի հաղորդել էր Սեն-Լամբերը: Ցերբ ես բրիտանական սպայի տարազով ներս մտա այն սենյակը, ուր հավաքվել էին «Սպիտակ տիկնոջ» ղեկավարները, նրանք ինձ դիմավորեցին և ողջունեցին վորպես իրենց ավագ պետի: Նրանցից յերեքը քահանաներ էին, իսկ մնացածները՝ գաստուններ, ինժեներներ, իրավաբաններ և ազատ պրոֆեսիաների տեր մարդիկ:

Ցերկու պետերն էլ անմոռանալի տպավորություն թողին ինձ վրա: Նրանցից առաջինը նախապատերազմյան ժամանակ յեղել էր բելգիական խոշոր ձեռնարկության գլխավոր ինժեներներից մեկը, մյուսը՝ Լյեժի համալսարանի պրոֆեսոր:

Ցես յերկու պետերին էլ կարճ խոսքերով բացատրեցի գործողությունների իմ պլանը: Նրանք ինձ պետք է ներկայացնեին իրենց կազմակերպության մանրամասն պատմությունը, որ յերևան է հանում նրա անդամներից յուրաքանչյուրի դերը, պետք է տային բոլոր անդամների ցուցակը, հանձնեյին ինձ դիմում՝ ցույց տալով այն գումարը, որ ես նրանց թույլատրել եմ պարտք վերցնել: Ցես վոչ մի խոսքով չհիշեցրի միլիտարիզացիայի մասին, որպիսին ես այնքան համարձակորեն խոստացել էի, բայց յերբ վերջացրի նրանց բացատրել լիկվիդացիայի վերաբերող բոլոր պահանջները, նրանք անմիջապես ինձ պատասխանի մեջ քաշեցին: Ցես հասկացա, որ ինձ մընում էր անել միայն մի բան— նրանց պատմել ճշմարտությունը: Այդ ճշմարտությունը նրանց այնպես ցնցեց և այնպիսի սարսափի բերեց, որ ես խոստացա անել այն բոլորը, ինչ հնարավոր է, վորպեսզի սպիտակ բրիտանական իշխանություններին՝ պահել իմ տված խոսքը, որովհետև այդ կազմակերպության բոլոր անդամները «Սպիտակ տիկին» էին մտել վորպես բրիտանական զինվորներ և յերդում էին տվել[1]:

---

[1] Այս բաժինը տպվում է աննշան կրճատումներով, բայց ենք թողնում մեր ընթերցողին չհետաքրքրող՝ հեղինակի պատմածն այն մասին, թե ինչպես բրիտանական հետախուզությունը հարիվները փակեց իր բազմաթիվ գործակալների հետ, որոնք «աշխատանքից» հեռացվում էին պատերազմից հետո հետախուզության ապարատի կրճատման հետևանքով: (ԽՄԲ.):

[1] Վորոշ հետաքրքրությունից զուրկ չէ միլիտարիզացիայի հարցը, այսինքն զինվորական ծառայող համարելու միջազգային ավանտյուրիստների այն ամբողջ ծախու խաժամուժին, որից կապիտալիստական հետախուզությունները քաղում են իրենց գործակալական աղբյուրները: Այս առթիվ հեղինակի արած համապատասխան պատմությունը զետեղված է մի փոքր ներքև: Ինչպես յերևում է այդ պատմությունից, այսպիսի միլիտարիզացիայի ոգին վերջիվերջո լուծված այդ հարցը քիչ դժվարություններ չեր ներկայացնում Նուլնիկ Անտանտի՝ քաղաքականության մեջ փորձված կապիտալիստական զե-

Ցեռ պարզեցի, թե նրանք ի՞նչ նպատակով էին ընդունել հիմնական նախաձեռնությունը՝ կազմակերպության գլուխ կանգնեցնելով յերկու պիտի։ «Սպիտակ տիկինը» բաղկացած եր յերկու անկախ խմբից, վորոնք միմյանցից այնքան էին մեկուսացված, վոր միայն յերկու պետերը դիտեին այդ մասին։ Յուրաքանչյուր խումբ վոչ միայն ուներ իր պետը, այլև առանձին «չտաբը», վորտեղ կենտրոնացվում և տպվում էին զեկուցագրերը։ Կոնտակտ տեղի յեր ունենում միայն Հոլանդիա տեղեկություններ հանձնելիս, ընդվորում այդ կոնտակտն արտահայտվում եր նրանով, վոր յերկրորդ պետը զեկուցագրերն անձամբ հանձնում եր առաջինին։ Յեթե խմբերից մեկը տապալվեր, ապա նրա պետն այն միակ մարդն եր, վորը կարող եր կործանել մյուս խմբին։

Խուզարկություններից խուսափելու համար «չտաբները» շատ խորամանկորեն էին տեղադրված։ Այն չտաբը, վորտեղ յես էի, ուներ հինգ յելք. առաջին յելքը— դեպի փողոց. յերկրորդը— դեպի այն պարտեզը, վոր գտնվում եր տան հետևը և հաղորդակցվում եր մի դործակալի տան հետ, վորը դուրս եր դալիս ուրիշ հեռավոր փողոց. յերրորդը—դեպի տանիք, վերջապես չորրորդ և հինդերորդ յելքերը՝ մեկական յելք ամեն մի հարկում, վորոնք անցնում էին իրենց տեսքով վոչ մի ամենափոքր կասկած չդարթեցնող պատի պահարանների միջով, դուրս էին դալիս դեպի հարևան տունը։ Այդ տանն ապրում էին արտաքինով շատ անշառ և տարիքավոր մարդ ու կին, վորոնք հարևանների աչքերում վոչ մի հարաբերություն չունեին մեր տան բնակիչների հետ։ Այս արտաքարդ նախաձեռնություններն անհրաժեշտ էին, վորովհետև «չտաբներում» չեր կարելի խուսափել մշտական դալուց։ Այստեղ կենտրոնացվում էին

կավարների համար (Անտանտ, վորն ստեղված է այս կամ այն կերպ հաշվի առնելու իրեն յերկրների հասարակական կարծիքը)։ (ԽՄԲ.)։

զեկուցագրերը, տպագրվում և պատրաստվում էին Հոլանդիա ուղարկելու համար։

1918 թ. նոյեմբերի 25-ին յես Լյեժից ուղևորվեցի դեպի Բրյուսել «Սպիտակ տիկնոջ» կողմից ինձ տրամադրված ավտոմոբիլով։

Բրյուսել հասնելով՝ յես ոգնության համար դիմեցի «Սպիտակ տիկնոջ» տեղական բաժնի ղեկավարին։ Ի զարմանս իմ, այդ ղեկավարը յերկու քույրեր էին—կանանց չքեղ դպրոցի պետեր։ Գերմանացիները բնավ չէին կասկածում այս յերկու կոտրտվող կանանց մասին, վորոնց ամեն որ կարելի յեր տեսնել աշակերտուհիների հետ անտառում զբոսնելիս, վորևե թանգարանում կամ շաբաթը մի անգամ ոպերայում։ Մինչդեռ նրանք դիտեին այն բոլորը, ինչ վերաբերում եր գնացքներին հետևելու գործին և գործակալ «Ֆլանյորներին»։ Շաբաթը յերկու անգամ, յերբ գիշերային սանուհիներն արդեն անկողնում քնած էին լինում, նրանք կնքում էին Լյեժ ուղարկվելիք զեկուցագրերը, վորոնք հավաքում եր հավատարիմ ոպատուհին մթերքներ գնելու ժամանակ։

Յես անմիջապես ձեռնարկեցի լիկվիդացիայի աշխատանքին։ Իմ ոգնականն եր նշանակված կապիտան Քեռբիլը—կանոնավոր բանակի սպա, վորը 1914 թվականին գերի յեր վերցված գերմանացիների կողմից և ամբողջ պատերազմի ընթացքում մնացել եր Գերմանիայի ռազմագերիների ճամբարում։ Մենք ձեռնարկեցինք պահանջվող տվյալները հավաքելու աշխատանքին, սիստեմատիկորեն վերամշակելով կազմակերպություններն իրար հետևից։ Գործակալներից վոմանք դալիս էին Բրյուսել, մյուսներին ուղարկում էինք Լյեժ, վորտեղ «Սպիտակ տիկինն» իմ հսկողության ներքո բաց եր արել նյութեր հավաքելու բյուրո։

Բացի լիկվիդացիայի դժվարին խնդրից, ինձ վիճակված եր կատարելու նաև բազմաթիվ ուրիշ պարտականություններ։ Շատ գործակալներ ինձ հրավիրում էին իրենց մոտ, իսկ յես, չցանկանալով նրանց վիրավորել, ընդունում էի նրանց հրավերները։

Նամյուրում ինձ վիճակվեց հանդես գալ հինգ հարյուր գործակալների առջև, վորոնք ուղում եյին իմ բերանից լսել դաշնակիցների հանդեպ իրենց մատուցած ծառայությունների գնահատականը: Այդ շատ դժվար խնդիր եր, վորովհետև մեծ մասամբ յես կարող եյի միայն ընդհանրացնել, մինչդեռ նրանց հետաքրքրում եր յուրաքանչյուր առանձին կատարված առաջադրանքի արդյունքը: Նրանք չգիտեյին, վոր ինչքան եվ արժեքավոր լինեյին զորոնի ծառայության ձեռք բերած տեղեկությունները, դրանք ընկնում եյին ինֆորմացիայի ընդհանուր հոսանքի մեջ և ուղարկվում Գլխավոր զորակայանին: Մեղանից յուրաքանչյուրն առանձին եր հավաքում տեղեկությունները, բայց դրանք խառնվում եյին այն տեղեկությունների հետ, վորոնք ստացվում եյին ողային հետախուզությունից, գերիներին հարցաքննելուց, բռնված փաստաթղթերից և այլն:

Հենց վոր լիկվիդացիայի աշխատանքը կարգի բերվեց, յես զբաղվեցի «Սպիտակ տիկնոջ» միլիտարիզացիայի հարցով, վորի համար հարձակում գործեցի միաժամանակ Լոնդոնում և Բրյուսելում:

«Սպիտակ տիկնոջ» իմ տված խոստումի հիման վրա և այն փաստի հիման վրա, վոր հատկապես հենց այդ բազայի վրա յե տեղի ունեցել նոր անդամների հավաքագրումը, Լոնդոնի պետը վերջիվերջո ձեռք բերեց բրիտանական զինվորական մինիստրության համաձայնությունը: Սակայն բելգիական կառավարության սանկցիան ստանալու համար ամիսներ պահանջվեցին: «Սպիտակ տիկինը», իր անդամների մեջ ունենալով մեծ թվով ազդեցիկ անձնավորություններ, անընդհատ կամպանիա յեր մղում ամեն ուղղությամբ, իսկ միևնույն ժամանակ բրիտանական զինվորական մինիստրությունը պաշտոնական բանակցություններ եր վարում բելգիական կառավարության հետ: Ցես անձամբ այդ գործը ներկայացրի յերկու մինիստր-նախագահներին, բայց վոչ մի արդյունքի չհասա: Ցես գիմեցի նաև բարոն դե Բրոկեվիլլին և ձեռք բերեցի բելգիական սենատի յերկու ազդեցիկ անդամների— մարկիզ Իմպերիալիի և սենատոր Կոլոյի ակտիվ աջակցությունը: Ցես նույնիսկ համոզեցի բրիտանական դեսպան սեր Ֆրենսիս Վիլյեյին, վոր նա վոչ-պաշտոնական բանակցություններ սկսի բելգիական կառավարության հետ: Մենք դիմեցինք նաև թագավորին՝ նրա անձնական քարտուղար Ջերալդի և աղքատական սենեկապետ կոմս դե Մերոդի միջոցով:

Այդ գործին ներգրավված եյին նաև իմ այն անձնական բարեկամները, վորոնք աշխատում եյին տարբեր մինիստրություններում:

Անցնում եյին շաբաթներ... Ցես հենց պատրաստ եյի հեռանալու այդ գործը, վորպես անհուսալի գործ, յերբ հանկարծ լսեցի, վոր շնորհիվ այն բանակցությունների, վոր Կ.-ն վարել է Փարիզի բրիտանական դեսպանության միջոցով, ֆրանսիական կառավարությունը համաձայնել է ֆրանսիական զինվոր ճանաչել այն բոլոր քաղաքացիներին, վորոնք աշխատել են բրիտանական հետախուզական ծառայության մեջ: Մենք նորից սկսեցինք ճանաչացնել բելգիական պաշտոնական տայանները, ոգտագործելով ֆրանսիական նախադեպի արգումենտը: Վերջապես, ի մեծ թեթևություն իմ և ի մեծ ուրախություն «Սպիտակ տիկնոջ»՝ բելգիական կառավարությունը տվեց իր սանկցիան և միլիտարիզացիա տարածեց առանց բացառության այն բոլոր բելգիահպատակների վրա, վորոնք պատերազմի ընթացքում աշխատել եյին դաշնակիցների զանազան գաղտնի ծառայություններում: Նրանք բոլորն էլ ճանաչվեցին վորպես համաշխարհային պատերազմի զինվորներ:

ԱՇԽԱՏԱՆՔ ԱՆՑԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅՈՒՄ՝ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Լոնդոնում պետն ինձ հաղորդեց, որ երբեւ պարզեւ Հոլլանդիայում իմ կատարած լավ գաղտնի աշխատանքի համար՝ ինձ նշանակել են ամենահետաքրքիր պոստում— Բեռլինում: Այնտեղ յես պետք է կազմակերպեմ անցագրային բաժին եւ ղեկավարեմ այդ բաժինը: Այս նպատակով ինձ կցեցին լորդ Կիլմարնոկի հաստիքին որպես Գերմանիայի անցագրային բաժնի պետ, որը (բաժինը) մասնաճյուղեր ունի Համբուրգում եւ Մյունխենում: Թեւ լորդ Կիլմարնոկը իր պարտականությունների կատարմանը ձեռնամուխ յեղավ միայն մի քանի շաբաթ հետո, բայց յես պետք է անմիջապես ուղեւորվեյի Բեռլին եւ անցնեյի բրիտանական միսիայի պարագլուխ՝ գեներալ Մալկոլմի տրամադրության տակ: Վերջապես, պետն ինձ ուղարկեց ներքին գործերի մինիստրություն՝ վիզաներ տալու հարցին վերաբերող հրահանգներ ստանալու համար:

Ներքին գործերի մինիստրությունում ինձ ասացին, որ վոչ մի պարագայում չի կարելի վիզաներ տալ գերմանացիներից որեւեւ մեկին՝ ով ուզում է լինի, որոնք փորձում են աշխատանք փնտռել Անգլիայում: Ինչ վերաբերում է ուրիշ անձերի, ապա յես պարտավոր եյի հնարավոր չափով խնամքով ստուգել նրանց եւ վերջնական քննության ու վավերացման համար մինիստրություն ուղարկել այն անձերի դիմումները, որոնց ուղղամտությունը հետաքննությամբ հաստատվել է: Ինձ ցույց տվին բազմաթիվ ֆորմուլյարներ եւ կնիքներ, բացատրեցին, թե ինչպես պետք է ոգտագործել դրանք եւ վստահացրին, որ այդ քրերի պաշարն ինձ սպասում է բրիտանական միսիայում:

Բեռլին հասնելուն պես ուղեւորվեցի դեպի «Բրիստոլ» հյուրանոցը, որտեղ յես իջել եյի նախապատերազմյան ժամանակ: Սակայն այնտեղ սենյակ ստանալն անհնարին եր: Ստանալով սենյակ ժամանակավոր ոգտագործման համար, յես ուղեւորվեցի դեպի բրիտանական միսիա՝ տեսակցելու գեներալ Մալկոլմի հետ:

Նա ինձ ծանոթացրեց իր յերկու աշխատակիցների հետ, մեկը կապիտան Բրինը, որը պատերազմի մեծ մասն անց եր կացրել գերմանական համակենտրոնացման ճամբարում, իսկ մյուսը՝ կոմս դե Սելիս, որը Վատիկանին կից բրիտանական դեսպանի որդին է: Նրանց հետ յես անցկացրի որվա մնացած ժամերը, կողմնորոշվելով իրադրության մեջ: Առանձնապես ոգտակար հանդիսացավ Բրինը: Նա լավ ծանոթ եր Գերմանիայի քաղաքական դրությանը եւ գեներալ Մալկոլմի աջ ձեռքն եր:

Ցերբ խոսք բաց արի բնակարանի մասին, ապա իմացա, որ նախքան հյուրանոցում սենյակ փնտռելը հարկավոր եր որդեր ստանալ ներքին գործերի մինիստրությունից, որովհետեւ Բեռլինը լեփ լեցուն եր վոչ միայն դաշնակիցների զանազան զինվորական միսիաների եւ վերահսկիչ հանձնաժողովների սպաներով, այլ նաեւ դավառներից յեկած գերմանացիներով: Հաջորդ որն որդեր ստանալով՝ յես տեղավորվեցի Պոտսդամյան հրապարակում գտնվող «Եսպլանադա» հյուրանոցում, որը Բեռլինի նորագույն եւ լավագույն հյուրանոցներից մեկն եր:

Մի քանի որ յես ծանոթանում եյի իրադրությանը: Ապա ֆորմուլյարներով եւ կնիքներով զինված՝ սկսեցի սպասել վիզա ստանալու ցանկություն ունեցողների: Սկզբում կար պատերազմից առաջ Անգլիայում աշխատած հաճախորդների մի մեծ հեղեղ, բայց հենց որ հայտնի յեղավ, որ այդ կատեգորիայի հաճախորդները վիզա չեն ստանալու, նրանց թիվն զգալի չափով պակասեց: Ժամանակ առ ժամանակ յես, պատշաճ հետազոտությունից հետո, վիզաների մասին խնդրագիր եյի ուղարկում Լոնդոն՝ ներքին գործերի մինիստրության՝ վավերացման համար, բայց շուտով տեսա, որ շատ քչերն եյին հաստատվում:

Ցերբ անցագրերի բյուրոյի աշխատանքը կարգի բերվեց, յես զիմեցի գաղտնի ծառայության գործունեությունն ուսումնասիրելու գործին: Ցես խիստ նկատեցի, որ այստեղ հենց նույն բանն է կատարվում, ինչ որ Հոլլանդիայում, եւ նույնիսկ վորոշ չափով ավելի վատ,

վորովհետև այստեղ ավելի շատ ախոյանություն և զուգահեռ աշխատանք գոյություն ունեին։ Դաշնակիցների բազմաթիվ միսսիաների յուրաքանչյուր աշխատակից դրում եր զեկուցագրեր, վորոնց ընդհանուր իմաստը հանգում եր այն բանին, թե բոլոր մնացածները խանգարում են այն կարևոր աշխատանքին, վոր կատարում է զեկուցագրի հեղինակը։ Սակայն ախոյանության վոչ մի անհրաժեշտություն կամ ջղայնանալու վոչ մի ռեալ հիմք չկար։ Ինֆորմացիա ստանալու համար վոչ մի խորամանկություն չեր պահանջվում, հարկավոր եր միայն դնալ և հարցնել։ Այդ բանը յես ինքս անձամբ փորձեցի գերմանական ներքին գործերի մինիստրության բարձրաստիճան աշխատակիցների հետ ունեցած մի քանի տեսակցության ժամանակ։ Նրանք իրենց անողնական, անպաշտպան և ստորացած եյին զգում մինչև այն աստիճան, յերբ վորևե գաղտնապահություն և նույնիսկ զսպվածություն սպարդյուն է թվում։

Բեռլին գալուց կարճ ժամանակ հետո, յերբ համոզվեցի, վոր իմ աշխատանքը ինձ գործունեության բավականաչափ ընդարձակ ասպարեզ չի տալիս, յես խնդրագիր ուղարկեցի հրաժարական տալու և ինձ զորացրման յենթարկելու մասին։ Իմ խնդիրքը բավարարվեց։

Իմ փոխարեն անցագրերի վերահսկողության պաշտոնյա նշանակվեց կապիտան Ֆոլեյը, իսկ գաղտնի աշխատանքը ղեկավարում եր իմ մի ուրիշ բարեկամը։

ԽԱՂԱՂ ԺԱՄԱՆԱԿՎԱ ԳԱՂՏՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Խաղաղ ժամանակվա գաղտնի ծառայությունը խիստ տարբերվում է պատերազմի ժամանակվա հետախուզությունից։ Խաղաղ ժամանակ չկան կապի այն դժվարությունները, վորոնք պատերազմի ժամանակ հիմնական պրոբլեմ են հանդիսանում։ Սուրհանդակներ, «փոստարկղներ», սահմանն անցնել և չղթայի մեթոդով գործող մեծ կազմակերպություններ այլևս պետք չեն։ Գործակալը մեծ մասամբ աշխատում է միայնակ, անմիջական կապ ունենալով միայն այն «չտարի» միջնորդի հետ, վորը սովորաբար գտնվում է վո՛չ այն յերկրում, վորտեղ ընթանում է գործակալի գործունեությունը և վոչ էլ այն յերկրում, վոր նրա հայրենիքն է։ Այդ արվում է նրա համար, վոր ձերբակալության դեպքում գոյություն չունենան ուղղակի ցուցմունքներ այն յերկրի մասին, վորի համար աշխատում է գործակալը։ Գործակալը շատ հաճախ հրահանգներ է ստանում միջնորդից, առանց իմանալու, թե նա վո՛ր յերկրի համար է աշխատում։ Յեթե նա այդ գիտենա և ձերբակալության դեպքում մատնի այդ գաղտնիքը, ապա, հասկանալի յե, նրանից ամեն կերպ հրաժարվում են։

Պահանջվող ինֆորմացիայի բնույթը մեծ մասամբ նույնպես բոլորովին այլ է։ Զորքերի տեղափոխությունը և զորամասերի համարները, վորոնք այնքան կարևոր են պատերազմի ժամանակ, այժմ առանձին նշանակություն չունեն։ Գործակալի առաջ սովորաբար դրվում է վորոշակի խնդիր, որինակ, ստանալ վորևե նոր զենքացրի, տանկի կամ սավառնակի գծագիրը կամ նկարագրությունը, պարզել կառուցվող սուղանավերի ճիշտ թիվը, նոր թունավոր նյութի ֆորմուլան, մոբիլիզացիայի պլանները, գաղտնի պայմանագրի կամ վորևե քաղաքական հարցի վերաբերյալ կառավարական պլանների մանրամասնությունները և այլն։ Ամեն մի դեպքում նա պետք է հիմնովին ծանոթ լինի հարցին, վորպեսզի նրա ինֆորմացիան վորոշ արժեք ունենա։

Ժամանակը վճռական նշանակություն չունի այլևս։ Գործակալն իր աշխատանքին կարող է ձեռնարկել մեթոդաբար, և յերբեմն ամիսներ են անցնում, մինչև վոր նրան հաջողվում է հող պատրաստել ինֆորմացիա ստանալու կամ այդ ինֆորմացիան ինքնուրույն կերպով ձեռք բերելու համար։ Գլխավոր ուշադրությունը դարձված է ինֆորմացիայի վորակի, այլ վոչ թե արագության վրա։ Յես գիտեմ մի դեպք, յերբ գործակալը մի քանի շաբաթ շարունակ իր համար մեծ վտանգ ստեղծելով ընդորինակում եր

412 9

այն կրճատագիրը (կոդ), վոր նա կարող եր մի քանի բոպեյում գողանալ: Բանն այն է, վոր անմիջական գողությունը, ինչքան էլ վոր այդ ճարպկորեն կատարվի, իր նպատակին չեր հասնի: Այս յեղանակով ստացված նյութը կարող եր ոգտակար լինել վորևե հաղորդագրություն վերծանելու համար և ուրիշ վոչինչ: Հենց վոր կրճատագրի անհետացումը նկատվեր նրա տիրոջ կողմից, կրճատագրի ամբողջ սիստեմն անմիջապես կփոխարինվեր մի նոր սիստեմով:

Հաճախ հետախույզները փողով հրապուրված մատնիչից ձեռք են բերում այն, ինչ հարկավոր է իրենց, կամ պահանջվող տվյալներն ստանում են վոչ մի բան չկասկածող այն ծառայողի կամ այն պետական պաշտոնյայի չատախոսության շնորհիվ, վորոնց հետ նրանք խոսակցում են: Ամենից առաջ լավ հետախույզը պետք է հիանալի կերպով իմանա մարդկային բնավորությունը և, դլխավորապես, նրա թույլ կողմերը, վորոնցից նա պետք է ընդունակ լինի ոգտվելու:

Շատերն իրենց հայրենիքին դավաճանում էին անդիտակցաբար, յերբ նրանց զգուշությամբ խոսակցության մեջ եր քաշում վորևե ծանոթ, վորին նրանք վստահում էին և բնավ չէին էլ կասկածում լրտեսության մեջ: Յերբեմն նրանց վրա վորոշ ներգործություն եր անում սնապարծությունը, և նրանք մի չարք հետաքրքրական տվյալներ էին հաղորդում, վորպեսզի չեշտեն իրենց դիրքի կարևորությունը կամ հետաքրքրություն շարժեն իրենց նկատմամբ: Յեթե նույնիսկ նրանք չհաղորդեին բոլոր տվյալները, ապա մասնագետը կարող եր բացը լրացնել ուրիշ աղբյուրից ստացած ինֆորմացիայով: Այն դեպքում, յերբ պահանջվում է դայթակղեցնել հարկավոր տեղեկություններ ունեցող անձերին, լավ հետախույզը յերբեք չի դիմում ուղղակի կաշառման: Յեթե նա վորոշակի դիտե, վոր իր զոհը կարևոր տեղեկություններ ունի իր համար, նա, ոգտագործելով դիպվածարանության և դայթակղեցման մեթոդները, վորոնց նա պետք է հմտորեն տիրապետի, զոհին հասցնում է մինչև այն աստիճան, վոր վերջինս ինքն է առաջարկում նրան այդ գործարքը: Այսպես,

որինակ, նա վորևե առթիվ ասում է, վոր իր մոտիկ բարեկամ Ա.-ն ապրում է Բ. յերկրում: Մի քանի որ հետո նա ի միջի այլոց նկատում է, վոր Բ. յերկիրը ուղած դումարը կվճարեր այն ինֆորմացիայի համար, վորպիսին իր տրամադրության տակ ունի իր զոհը:

Յեթե նրան խնդրում են միջնորդ լինել, նա սարսափում է. «Յես չեմ կարող խառնվել այդպիսի գործերին: Զգույշ յեղե՛ք, ծերո՛ւկ: Ի հարկե, յեթե դուք ուզում եք ընկնել արտասահման, ապա կարող եք մտնել Ա.-ի մոտ: Յես ձեզ կտամ նրա հասցեն: Ասացեք նրան, վոր դուք իմ բարեկամն եք: Նա շատ ուրախ կլինի ծանոթանալու ձեզ հետ»: Այսպիսով, առանց իրեն վարկաբեկելու նա զոհին ուղարկում է այդ ճանապարհով: Յեթե զոհը նույնիսկ չգնա Ա.-ի մոտ, համենայն դեպս այժմ հայտնի է, վոր գործարքը կարող է իրականացվել, և նրա մոտ ուղարկում են այդ նպատակով արտասահմանից յեկած մի ուրիշ գործակալի, վորի ով լինելը հայտնի չէ: Յեթե գործակալը բռնված է, ապա նա սովորաբար հայտարարում է, թե վոչինչ չգիտե, վոր այդ հարցուփորձերն իր անձնական հետաքրքրությունից են առաջացել և վոր չեր պատկերացնում իրեն, թե դրանք կարող են կասկածելի թվալ:

Հետախույզը յերբեմն կարող է ոգտագործել վորևե մեկի անհամեստությունը, և այդպիսի դեպքերում նա չանտաժի է դիմում: Այս մեթոդը յերբեք չեն կիրառում անգլիացիները, բայց գերմանացիներն այդ ասպարեզում վարպետ են հռչակված: Մշտական հետապնդումները և «կանաչազարդ» վայրեր այցելելու միջոցով նրանք ջանասիրաբար կազմել են այն անձերի ցուցակը, վորոնք գտնվում են պետական ծառայության մեջ և ունեն այս կամ այն մոլությունը: Այնուհետև սիստեմատիկորեն թակարդի մեջ էին գցում նրան, վորին նրանք ուզում էին ոգտագործել, ինչպես այդ յեղել է Մանենի հետ պատահած դեպքի ժամանակ: Նրանք լայն չափով ոգտագործում էին խաղամոլությունը և, յերբ ինֆորմացիայի արժեքն արդարացնում եր այդ ծախսերը, նրանք գործադրում էին տրյուկ գեղեցիկ կնոջ և գործակից տղամարդու հետ, մի

տրյուկ, վորն ոգտագործվում է գաղտնի ծառայության վերաբերյալ վեպերում։ Մոնտե-Կարլոյում կամ վորևե մի ուրիշ կուրորտում, վորտեղ յեռում է խաղը, հրապուրիչ կինն ստիպում է զոհին խոշոր գումարներ տանուլ տալ կանաչ սեղանի շուրջը, իսկ հետո նրան ծանոթացնում է մի մարդու հետ, վորը նրան փող է պարտք տալիս։ այդ փողով նա զուր տեղը փորձում է վերադարձնել իր կորդությունը։ Վորքան ավելանում են տարված և պարտք վերցրած գումարները, նա այնքան ավելի յե ընկնում այդ զույգի լիակատար իշխանության տակ։ Այդ գործի համար մեծ ծախսեր են պահանջվում, վորովհետև փոխառությունները վոչ մի արժեք չեն ունենում, յեթե խոշոր գումարների չեն հասնում, և ամենևին միշտ չե վոր պետք յեղած արդյունքն են տալիս։ Հակառակ ընդհանուր կարծիքի, խաղաղ ժամանակի գաղտնի ծառայությունը իր տրամադրության տակ անսահմանափակ ֆոնդեր չի ունենում։ Նա ստանում է վորոշ գումար և այդ գումարը ծախսում է զգուշությամբ, ամենևին չցանկանալով աջ ու ձախ շպրտել փողերը, յեթե լիակատար վստահություն չկա, վոր այդ ծախսերը կարդարացնեն իրենց։

Գոյություն ունի մի սխալ պատկերացում, թե իբր բոլոր տեղեկություններն ստացվում են գաղտնի ծառայության միջոցով։ Տեղեկությունները յերբեմն գնվում են մի ինչ-վոր միջազգային կազմակերպությունից, վորն ըզբաղվում է հենց միևնույն ինֆորմացիան զանազան յերկրներին վաճառելու գործով։ Վորպես կանոն, նման կազմակերպությունները Շվեյցարիայում ունեն իրենց շտաբը և աշխատում են պրոֆեսիոնալ լրտեսների ղեկավարությամբ, վորոնք իրենց փորձը ձեռք են բերել գաղտնի ծառայություններից մեկում։ Այսպիսով, տեղեկությունների մի մասն ստացվում է այնպիսի աղբյուրներից, վորոնք խորթ են հետախուզության վորևե սիստեմին։

Թեև դեսպանատները և հյուպատոսարանները կապի միջոցներ են հանդիսանում յերկրների միջև և կատարում են մի շարք ուրիշ ֆունկցիաներ, որինակ, իրենց հայրենիքի առևտրական նավատորմի պաշտպանությունը, անցագրեր տալը և առևտրական հարաբերություններ պահպանելը, այնուամենայնիվ նրանք իրենց հայրենիքի աչքերն ու ականջներն են հանդիսանում ոտար յերկրներում։

Որենսդրական պալատներում տեղի ունեցող վիճաբանությունները, պետական գերատեսչությունների պաշտոնական հաղորդագրությունները, վիճակագրական պաշտոնական տեղեկագրերը և, վերջապես, թերթերն ու ժուռնալներն ոտարերկրյա պետություններին տալիս են բազմաթիվ տեղեկություններ, վորոնք խնամքով հետազոտվում և դասակարգվում են։

Վերջապես, ամենակարևոր տեղեկություններից մի քանիսը— գաղտնի պայմանագրերի պատճենները, ռազմանավերի և ուրիշ ռազմական հանդերձանքի գծագրերը, ինչպես նաև ուրիշ գաղտնի տվյալներ ու փաստաթղթեր— հաճախ վաճառվում եյին անմիջականորեն ոտարերկրյա պետությունների պաշտոնական ներկայացուցիչներին գավառաններ կողմից, վորոնք վախենում եյին իրենց գաղտնիքը վստահել սովորական գործակալին։ Վոչ մի յերկիր դեռ չի հրաժարվել այն տեղեկություններից, վորոնք կենսական կարևոր նշանակություն ունեն իր համար։ Պաշտոնական անձը կարող է հրաժարվել ինֆորմացիա ընդունելուց կամ կարող է չխոսել այդ թեմայի շուրջը, բայց այս դեպքում անմիջապես կապ է ստեղծվում գաղտնի ծառայության հետ, և գործը հետագայում ընթանում է վոչ-պաշտոնական ուղիով։ Նման ինֆորմացիա տալուց հետո, ինֆորմատորը, վորպես կանոն, վախից կամ մատնվելու սպառնալիքի տակ ստիպված է տեղեկություններ տալ նաև հետագայում, մինչև վոր դառնում է տվյալ յերկրի կողմից վարձատրվող լրտես։ Յեթե այս տեսակ մարդ աշխատում է պետական վորևե գերատեսչության մեջ, ապա նա շատ արժեքավոր գործակալ է հանդիսանում։

Հյուպատոսարանների գլխավոր գործերը և ծառայողները պետք է զգուշանան և չափից ավելի դյուրահավատություն հանդես չբերեն, այլապես կարող է պատահել, վոր նրանք գաղտնի ծառայությանը կտան այնպիսի նյութեր, վորոնք ինչին արժեք անգամ չունեն։ Յերբեմն կեղծ

տեղեկություններ կամ կեղծ փաստաթղթեր են առաջարկվում վորևե խարդախ մարդու կողմից, վորն աշխատում է սեփական ոգուտի համար, յերբեմն գործակալը դիտավորյալ կերպով այս տեսակ փաստաթղթեր է առաջարկում՝ մյուս յերկրին անհարմար դրության մեջ դնելու կամ սուտ ինֆորմացիա տալու նպատակով: Այսպես որինակ, մի քանի պետությունների առաջարկվել են վարկաբեկող բնույթ կրող կեղծ փաստաթղթեր, վորոնք իբր թե գողացված են յեղել: Մինչդեռ հետագայում պարզվել է, վոր այդ փաստաթղթերն առաջարկող գործակալը ոռնիկ է ստանում սպիտակ-գվարդիական կազմակերպություններից մեկից, վորոնք փորձում են վարկաբեկել բոլշևիկներին (*ընդծումը մերն է*: Խմբ.):

Գաղտնի ծառայության գլխավոր արժանիքը վոչ թե նրա ձեռք բերած ինֆորմացիայի քանակի մեջ է, այլ այն միջոցների մեջ, վոր նրանք ոգտագործում են առանձնահատուկ ինֆորմացիա ձեռք բերելու համար: X Յերկիրն ունի նոր ռազմական հանդերձանք, վորի մանրամասն նկարագրությունը անհրաժեշտ է Y յերկրին: Y յերկիրը չի կարող նստել և սպասել, մինչև վոր վորևե պատահմունք նրան հարկավոր տեղեկություններ բերի. նա գաղտնի ծառայությանն է հանձնարարում ձեռք բերել դրանք:

Դիվերսիոն գործողությունները նույնպես ղեկավարվում են գաղտնի ծառայության կողմից: Նրանց պլանները հաճախ մշակվում են խաղաղ ժամանակ, վորպեսզի հնարավոր լինի անմիջապես իրականացնել պատերազմ հայտարարելուց հետո, քանի դեռ հակառակորդը պաշտպանության վորևե միջոց ձեռք չի առել: Զրանցքների, պաշտպանողական կառուցվածքների, ռազմամթերք պատրաստող գործարանների և այլոց պայթեցումները գլխավոր նպատակն են հանդիսանում: Ավազակում հնարավոր է հետախույզների աշխատանքը՝ բակտերիոլոգիական միջոցներ տարածելու և թունավոր նյութերով վարակում առաջացնելու գծով:

Պատերազմի ժամանակ գաղտնի ծառայության գլխավոր պարտականությունն է՝ ձեռք բերել ինֆորմացիա և, ըստ հնարավորին, պաշտպանել իր գործակալների կյանքը: Դաշնակիցներն ամենևին չեյին վախենում, վոր գերմանացիները կամ նույնիսկ ամբողջ աշխարհը, կիմանան, վոր նրանք լրտեսությամբ են զբաղվում:

Խաղաղ ժամանակ այլ է իրերի դրությունը: Ամենից կարևորն այն է, վոր յերկիրը մասնակից չլինի, ինֆորմացիան յերկրորդ տեղն է բռնում: Ինչ վերաբերում է գործակալին, ապա նրա գաղտնիքը պահպանվում է, բայց նա ինքը պետք է մտածի իր անվտանգության մասին: Նրանց լոզունգն է՝ ինքնահրաժարում. այդ լոզունգը վերաբերում է նույնիսկ սեփական բանակի այն սպաներին, վորոնք ոգտագործվում են հետախուզական նպատակներով: Այս կարող է խստասրտություն թվալ, բայց դա այնքան էլ սոսրություն չէ, ինչպես թվում է, վորովհետև խաղաղ ժամանակի հետախույզն աշխատում է միայն փողի համար և նրան հայտնի յեն խաղի բոլոր կանոնները:

Նա ավելի սակավ դեպքերում է բռնվում: Նրան կարիք չի լինում կապի վորևե դժվարություն հաղթահարել— չկան վո՛չ դրաքննություն, վո՛չ էլեկտրալար, վո՛չ էլ սահմանապահազոր[1]: Ավելի լավ պատրաստված լինելով, քան պատերազմական ժամանակի հետախույզը, նա ոգտվում է այնպիսի մեթոդներով, վորոնք ապահովում են համարյա լիակատար անվտանգություն: Նույնիսկ, յեթե բռնվի, հաղիվ թե նրան հինգ-վեց տարուց ավելի բանտարկություն սպառնա[2]: Լավ հետախույզը լինելով ակումբների մշտական հաճախորդ, բոլորի կողմից սիրված, առատաձեռն, շաղակրատելու միշտ պատրաստ և միևնույն ժամանակ ուշադիր ունկնդիր՝ յերբեք չի ընկնում: Նույնքան էլ ան-

---

1 Ճիշտ չէ, դրաքննություն, կամ այսպես կոչված «սև կաբինետներ», դոյություն ունի բոլոր կապիտալիստական յերկրներում: Գոյություն ունի նաև մաքսային և սահմանային պահակազոր: (Խմբ.):

2) Համարյա բոլոր կապիտալիստական յերկրներում վերջին տարիներին պատժի միջոցներն ուժեղացվել են. մի քանի յերկրներում մահապատիժ է մտցված: (Խմբ.):

վանդ է այն գործակալի գրությունը, որը տեղեկություններ է սպասում փոքր ռոճիկ ստացող ծածկագիր վերծանողից, կամ որևէ ուրիշ պետական պաշտոնյայից, որը պատրաստ է ավելորդ վաստակ ձեռք բերել արձակուրդի համար: Նույնը վերաբերում է նաև հարևան յերկրում ապրող մի ջնորդին, այն փոքր յերկրի հյուպատոսին, որը դժվար է գտնել քարտեզի վրա:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Հրատարակչության կողմից 3
Պատերազմի սկիզբը 7
Հետախուզական գործունեության սկիզբը 9
Հետախուզական կազմակերպության կառուցվածքը 14
Առաջին հետախուզական բջիջը 24
Գնացքներին հետևողները և «ֆլանյորները» 31
Հետախույզ սենատորը 38
Կապի միջոցներն ու յեղանակները և կեղծ վաստակները . . 43
Տանչորս տարեկան հետախույզ աղջիկը 55
Դատալիքները վորպես արժեքավոր տեղեկությունների աղբյուր . 59
Պրովոկատոր գործակալի ճախողումը 68
«Սպիտակ տիկինը» 75
Ռուսական ինտերմեդիա 88
Պայքարը Հոլլանդիայում գտնվող գաղտնի ծառայությունների միջև 92
Ամենորյա աշխատանք 100
«Դանիացին» դաշնակիցների հետախույզ 107
Դիտում ծովափի պաշտպանության և ռադիոականակիրների նկատմամբ 112
Հակահետախուզություն 116
Գաղտնի ծառայությունը լիկվիդացիայի յենթարկելու նախապատրաստությունը 120
Աշխատանք անցաղրային բյուրոյում՝ Գերմանիայում 126
Խաղաղ ժամանակվա գաղտնի ծառայությունը 128

ՀԱՅԿ-ԳՕՐԱ

Ռուսերենից թարգմ. Վ. Ավագյան
Խմբագիր՝ Լ. Մինասյան
Լեզվական խմբագիր Հ. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան
Կոնտրոլ-սրբագրիչ՝ Ցե. Տ.-Մինասյան

Գլավլիտի լիազոր՝ Վ—2342. Հրատ. № 4895
Պատվեր 412. Տիրաժ 4000
Թուղթ 62×94. Տպագր. 8½ մամ.
Մեկ մամ. 38440 նշան.
Հանձնված է արտադրության 22 ապրիլի 1939 թ.
Ստորագրված է տպագրության համար 8 հուլիսի 1939 թ.

Պետհրատի I տպարան, Երևան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0201387

432

ԳԻՆԸ 1 Ռ. 50 Կ.

Г. ЛАНДАУ

Секретная служба в тылу немцев

(1914—1918 г. г.)

Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.